ԴՐՕՇԱԿ

ISSN 2579-2954



Հայ Յեղափոխական Դաշնակցության Պաշտոնաթերթ

(74-րդ տարի) Թիվ-8 (1642) Օգոստոս 2020

Բովանդակություն

«Դրօշակ» ամսաթերթ
Հայ Յեղափոխական Դաշնակցության
պաշտոնաթերթ
Հիմնադիր՝ «ՀՅԴ պատմութեան թանգարան
հիմնադրամ»
Երևան, Միեր Մկրտչյան փ. 12/1
Հեռ. (+374) 10-52-18-90
Էլ. հասցե՝ droshak@arf.am
Կայք՝ hhtps://www.droshak.am
Գլխավոր խմբագիր՝ Արտաշես Շահբազյան
Խմբագրական խորհուրդ

1- Առաջնորդող
Վաչէ Բրուտեան
Երիտասարդութեան քաղաքականացումը ներկայ օրերուն (էջ 1-3)

2- Հարցազրույց
Հարցազրույց ՀՅԴ Բյուրոյի անդամ Հովսեփ Տեր-Գեւորգեանի հետ
ՀՅԴ երիտասարդութիւնը կը մարմնացնէ համաժողովրդական բանակի գաղափարը (էջ 4-8)

3- Ռազմաքաղաքական
Արթուր Եղիազարյան
Հերթական արկածախնդրությունը պատժվեց հայկական զինված ուժերի կողմից (էջ 9-12)

4- Քաղաքական
Սեդո Պոյաճեան
Սեւրի դաշնագիրը Հայոց ազգային ուխտին պատուանդանն է (էջ 13-17)

5- Աշխարհաքաղաքական
Արամ Սայիյան
Սեւրը և քրդերը (էջ 18-20)
Մելինե Անումյան
Թուրքիայի մղձավանջը. Սեւրի պայմանագրի նկատմամբ թուրք «գիտական» շրջանակների նոր մոտեցումները (էջ 21-23)

6- Դաշնակցական բեմ
Ցողիկ Աշըգեան
Ամբողջական հայութեամբ դէպի Միացեալ Հայաստան (էջ 24-25)

7- Երիտասարդական
Անահիտ Դանիելյան
Տիգրան Չանդոյան
Հայաստանի հետխորհրդային երիտասարդությունը (էջ 26-27)
Տիգրան Չանդոյան
Ազգային երիտասարդությունը որպես քաղաքական ակտոր (էջ 28-29)
Անահիտ Դանիելյան
Հայրենիքը գործով են սիրում (էջ 30)

8- Բնապահպանություն
Արեգ Ղարաբեգյան
Կենսոլորտային պահպանավայր. էությունն ու կիրառման անհրաժեշտությունը Հայաստանում (էջ 31-34)

9- Տարածաշրջանային
Միքայել Հաջյան
«Բարեփոխումներ» Ադրբեջանում՝ ընտանեկան միապետության ամրապնդման հեռանկարով (էջ 35-39)

10- Պատմության լուսարձակ
Անի Մելքոնյան
Բանկ Օտոմանի գրավումը և «զուգակցված հարվածների» մարտավարությունը Հայկական հարցի և ազատագրական պայքարի համատեքստում (էջ 40-43)

11- Ընկերական զրույցներ
Վրէժ-Արմէն
Սեւրէն մինչեւ Տաւուշ (էջ 44)

Երիտասարդութեան քաղաքականացումը ներկայ օրերուն

Վաչէ Բրուտեան

Նախ՝ քիչ մը նախապատմութիւն:

70ականներու առաջին կիսուն, ՀՅ Դաշնակցութեան 20րդ Ընդհանուր ժողովի որոշումով, Սփիւռքի մէջ սկսաւ գաղափարական ու քաղաքական վերաթարմացումի գործընթաց մը՝ իբրև թիրախ ունենալով յատկապէս երիտասարդութիւնը:

Մեր ժողովուրդի իրաւունքներուն տիրութիւն ընելու պահանջը ինքնին կը խարսխուէր ամէն բանէ առաջ արդարութիւնը վերահաստատելու, զայն վերականգնելու գաղափարին վրայ: Այլ խօսքով՝ հայ ժողովուրդը ցեղասպանութեան ենթարկուած էր Օսմանեան պետութեան կողմէ ու ատոր հետևանքով ալ մարդկային, հողային, մշակութային ու տնտեսական հսկայական վնասներ կրած էր: Անարդարութեան վերջ պէտք է տրուէր: Արդարութիւնը պէտք է վերահաստատուէր: Իսկ արդարութեան վերահաստատումը միայն այդ ուղղութեամբ մղուող յամառ պայքարով կարելի էր իրականութիւն դարձնել:

Սա իր բովանդակութեամբ էապէս քաղաքական խնդիր էր: Հետևաբար կենսական էր մեր ժողովուրդը ընդհանրապէս և երիտասարդութիւնը մասնաւորապէս օժտել այս գիտակցութեամբ: Մէկ խօսքով՝ կենսական էր երիտասարդութեան քաղաքականացումը: Կենսական էր զայն քաղաքականօրէն գիտակից ու պայքարունակ ոգիով դաստիարակելը:

Տեսական ու գործնական դաստիարակութիւն

Առաջին հերթին Մերձաւոր Արևելքի՝ հայաշատ բնակչութեամբ երկիրներուն մէջ, ուր ՀՅԴն ունէր կազմակերպական ցանց, աշխատանք տարուեցաւ հիմնելու երիտասարդական և ուսանողական միութիւններ՝ համապատասխան կառոյցներով:

Երկրորդ՝ այս միութիւններուն անդամակցող տղաքն ու աղջիկները սկսան ստանալ գաղափարական-քաղաքական դաստիարակութիւն, ուսանել ՀՅԴ գաղափարաբանութիւն, պատմութիւն, նպատակներ: Այս բոլորը՝ շատ յաճախ խմբակներով, ժողովական կարգի դասախօսութիւններով, լսարաններով, քննարկումի երեկոներով, տարեկան բանակումներով:

Կարևոր դեր կատարեց Լիբանանի մէջ ՀՅԴ Լիբանանի երիտասարդական միութեան կողմէ ու երիտասարդներուն համար հաստատուած ԼԵՄի դպրոցը, ուր Դաշնակցութեան գաղափարական սկզբունքներուն, պատմութեան, նպատակներուն եւ ռազմավարութեան մասին ուսուցողական մեծ արժէք ունեցող ելոյթներ կ'ունենային Բիւրոյի, կեդր. կոմիտէի անդամ ընկերներ, ինչպէս նաև անհատ մտաւորական ընկերներ:

Ազգային տօներն ու ոգեկոչական ձեռնարկները (Մայիս 28, Սասնոյ ապստամբութեան, ֆեդայիներու և գործիչներու նահատակութեան կամ այլ

նշումներ, Ապրիլ 24) վերածուեցան ազգային-դաստիարակչական արժէք ունեցող իւրայատուկ միջոցառումներու (*):

Թափ տրուեցաւ հրատարակչական աշխատանքին: Վերստին լոյս ընծայուեցան Քրիստափորի՝ քաղաքական-գաղափարական բնոյթի յօդուածները «Յեղափոխականի մտքեր» խորագրով, Գարեգին Խաժակի «Ինչ է դասակարգը», Ռուբէնի «Հայ յեղափոխականի մը յիշատակները» (7 հատոր), Յովհ. Քաջազնունիի «Ազգ և հայրենիք»ը, ՀՅԴ արխիւէն նիւթեր՝ «Նիւթեր ՀՅ Դաշնակցութեան պատմութեան համար» խորագրով, և բազում այլ գործեր, որոնք մեծ քանակութեամբ հում նիւթ կը հայթայթէին երիտասարդութեան գաղափարական դաստիարակութեան համար: Միաժամանակ, այս գործերուն մասին նոր պայմաններու լոյսին տակ գրուած գրախօսականները և ժողովրդային լսարաններուն ճամբով անոնց ծանօթացումը մեծապէս նպաստեցին ՀՅ Դաշնակցութեան սկզբունքներուն և նպատակներուն մասին ժողովրդային աւելի լայն ընկալումին:

Երիտասարդական-ուսանողական միութիւններու աշխարհատարած ցանցէն ներս հասարակաց դաշտ ստեղծելու նպատակով կազմակերպուեցան խորհրդաժողովներ և բանակումներ, որոնց ընթացքին մասնակիցները կը ստանային գաղափարական, քաղաքական և գործնական գիտելիքներ:

Նոյն այդ տարիներուն, երբ արտասահմանի մէջ տեղի կ'ունենային հակաթուրք արարքներ, ատոնց ընկերացող բողոքի ցոյցեր, դատավարութիւններուն զուգահեռաբար ընթացող զօրակցական ալիքը կ'ամբողջացնէր ընդհանուր պատկերը՝ երիտասարդութեան քաղաքական գիտակցութեան

մակարդակը բարձրացնելու իմաստով: Նոր սերունդին միտքին մէջ հետզհետէ աւելի կը յստականար, թէ իսկապէս ո՞ւր կը կայանային հայութեան համընդհանուր շահերը, և թէ ինչպէ՞ս պէտք էր հետապնդել Միացեալ, Ազատ ու Անկախ Հայաստան կերտելու իտէալը: Մէկ խօսքով՝ ինչպէ՞ս վերահաստատել արդարութիւնը հայ ժողովուրդին նկատմամբ:

Խորքին մէջ այս աշխատանքները հազիւ սկսած էին հունաւորուել, երբ ծագեցաւ Լիբանանի քաղաքացիական պատերազմը 1975 ապրիլ 13ին: Նոյն այս դաշնակցական դաստիարակութիւնը ստացող երիտասարդութիւնն էր, որ անսաց լիբանանահայութեան ֆիզիքական ապահովութեան հսկելու ծանր գործին և տուաւ տասնեակներով նահատակներ:

Գաղափարական-քաղաքական այս քուրայէն անցած երիտասարդներն էին, որոնք լծուեցան համաշխարհային քաղաքական թատերաբեմին վրայ Հայկական հարցին շուրջ հաստատուած լռութեան պատը քանդելու պատասխանատու գործին: Անոնցմէ շատեր «վահանի վրայ» վերադարձան տուն:

Այսօրուան աշխարհը

Այդ օրերու աշխարհը երկբևեռ էր, իսկ այսօրուանը Խորհրդային Միութեան անկումէն մօտաւորապէս 40 տարի վերջ, կարելի է ըսել, միաբևեռէն սկսած է թեքիլ դէպի բազմաբևեռայնութիւն:

Հայ երիտասարդութիւնը պարտաւոր է ճանչնալու այն աշխարհը, որուն թոհուբոհին մէջ ինք հարկադրանքին տակ է հետապնդելու հայութեան ազգային-պետական շահերը:

Այսօրուան աշխարհին մէջ, յատկապէս Արևմուտքի մեծ բևեռէն ներս, բազմազգեան մեծ ընկերութիւնները, ինչպէս նաև ելևմտական մեծ հաստատութիւնները (Կոլտման Սաքսն ու ամբողջ Ուոլ Սթրիթը, Համաշխարհային դրամատուն, Միջազգային դրամական հիմնադրամ, «Լաքիիտ Մարթին» և այլն) միախառնուած են ուժի համաշխարհային կեդրոններուն հետ, այն աստիճան, որ երբեմն անկարելի է զանազանել, թէ ով որուն «գործիքն» է:

Մէկ բան յստակ է՝ այս վարքագիծին հիմքը ծայրայեղ դրամատիրական մօտեցումն է: Այս «խառնուրդը» աշխարհը կը նկատէ իբրև մեծ շուկայ մը, ուր ամէն ինչ վաճառքի ենթակայ է: Անոնց պատկերացուցած աշխարհին մէջ գոյութիւն չունին ազգային արժէքներ, հոգեմտաւոր ու մշակութային արժէքային համակարգ, ազգային առանձնայատկութիւններ: Կան միայն «շուկան» և «շուահը», կանխիկ շահը: Մէկ խօսքով՝ դրամատիրական պոլշևիզմ…

Մեր բոլորին միտքին մէջ շատ թարմ է Նախիջևանի հայկական խաչքարերու պարագան: Ինքզինք մարդկային իրաւունքներու պաշտպան կամ «եւրոպական արժէքներու» ջատագով Եւրոմիութիւնը (ողջ Արևմուտքը) մատը մատին չզարկաւ, երբ

Ապրիլի 24. ցույց Բեյրութում

Ատրպէյճան օր ցերեկով քարուքանդ ըրաւ հազարաւոր խաչքարեր, որոնք ոչ միայն հայութեան, այլև համայն մարդկութեան մշակութային ժառանգութեան մաս կը կազմէին: Նոյն ուժերը գրեթէ նոյն օրերուն աշխարհի տակնուվրայ ըրին, երբ Աֆղանիստանի Թալեպան վարչակարգը ուժանակով քարուքանդ ըրաւ պուտտայական կոթողներ… «Տարբերութիւնը» այն էր, որ Արևմուտքը այդ վարչակարգը իր «թշնամին» կը համարէր, մինչդեռ Ատրպէյճանը իրենց «դաշնակիցն» էր…

Այս ուժերը կը ձգտին իրենց ամբողջական հակակշիռին տակ առնելու երկրագունդի ընդերքի բնական հարստութիւնները և անոնց փոխադրութեան ուղիները՝ առանց հաշուի առնելու նոյն այդ հարստութեանց տէր պետութիւններուն կամքը: Կը գրաւուին, արշաւանքի ու քանդումի կ'ենթարկուին շարք մը երկիրներ՝ Լիպիա, Սուրիա, Իրաք և այլն: Բոլոր անոնք կը դիմադրեն ծայրայեղ ու վայրագ դրամատիրութեան արշաւին, ենթակայ են յարձակումներու, զինուորական կամ ելևմտական արշաւանքներու, քանդումի և բառացիօրէն կողոպուտի:

Նոյն այս ուժերուն համար մէկ բան յստակ է՝ ժողովուրդներու արդար իրաւունքներուն դէմ արշաւ մղող ուժերուն համար (Արևմուտքը թէ այլ ուժեր) պարզէն աւելի պարզ է, որ իրենց նպատակներուն հասնելու համար անհրաժեշտ է, որ նախ կարենան ջլատել տուեալ ազգերու և պետութիւններու ներքին հաւաքական կամքը և դիմադրական ոգին:

Մեր երիտասարդութիւնը պարտի լաւ իմանալու, որ իբրև ժողովուրդ և պետութիւն՝ մեր կողմնացոյցին սլաքը մի՛շտ պիտի ուղղուած ըլլայ մեր ազգային հաւաքական շահերուն ուղղութեամբ: Հոն, ուր որ կը վտանգուի մեր հայրենիքին անվտանգութիւնը, վերջ կը գտնեն բոլոր ներքին տարակարծութիւնները, քաղաքական կամ գաղափարական տարբերութիւնները:

Հայ երիտասարդութեան պայքարին չափանիշը,

հիմքը արդարութեան վերահաստատումն է: Ատկէ՛ կը բխի Թուրքիոյ կողմէ մեր ժողովուրդի հողային, մշակութային, տնտեսական թէ այլ իրաւազրկումին դէմ պայքարը՝ ի խնդիր արդարութեան: Ատկէ՛ կը բխի հայ մարդուն աշխատանքին չարաշահումին դէմ պայքարը, որպէսզի Հայաստանի քաղաքացին տէրը մնայ իր արդար աշխատանքի վաստակին և արժանապատուութեան:

Մեզ ջլատելու ձգտող արտաքին ուժերը անդադար կը փորձեն լծակներ ստեղծել զանազան կազմակերպութիւններու միջոցով: Այս ընելու համար արտաքին ուժերը կը շահագործեն մեր երկրի ներքին հարցերը, ընկերային, քաղաքական, կենսոլորտային խնդիրները և այլն: Հետևաբար հայ, բայց մանաւանդ դաշնակցական երիտասարդութիւնը պարտի ճշգրիտ գնահատելու հետևեալը:

Եթէ մենք ունինք կենսոլորտին առնչուող խնդիրներ(օրինակ), ատոնց լուծումը պէտք է տեսնել մեր երկրի օրէնսդրութեան արդար բնոյթին մէջ: Հայաստանի Հանրապետութեան օրէնքներն են, որոնք պէտք է կարենան երաշխաւորել մեր երկրի մաքուր օդային աւազանը, ջրային պաշարներու անաղարտ պահպանումը կամ ընդերքի հարստութեան օգտագործումը այնպիսի արհեստագիտութեամբ, որ գալիք սերունդները չզրկուին երկրի բնատուր առաւելութիւններէն: Մեր կենսոլորտային հարցերու արծարծումը (կամ... չարծարծումը) պէտք չէ արտաքին ուժերու որոշումով տնօրինուի. արտօնելի չի կրնար ըլլալ այս երևոյթը (**), որովհետև արտաքին ուժերուն նպատակը ոչ թէ Հայաստանի կենսոլորտին մաքրութիւնն է, այլ կենսոլորտային հարցերը արծարծելը և օրուան իշխանութեան դէմ (ով ալ ըլլայ ատիկա) իրենց պայքարը առաջ մղելը:

Հայութեան քաղաքական շահերուն գիտակից երիտասարդութիւնը, մանաւանդ դաշնակցական երիտասարդութիւնը, պարտի լաւ գիտնալու, որ մեր օրակարգը կը մշակուի բացառապէս մե՛ր երկրին, մե՛ր պետութեան ու մե՛ր ժողովուրդին շահերը հիմք

Երթ դեպի Ծիծեռնակաբերդ

ՀՅԴ օրվա փոնակատարություն.
ձախից աջ՝ Լևոն Շանթ և Կարո Սասունի

ընդունելով:

Եւ այս բոլորը՝ յանուն թէ՛ ազգամիջեան և թէ՛ ներազգային արդարութեան ու համերաշխութեան:

(*) Ցայտուն օրինակներէն մէկը.- 1974ին ՀՅԴ Լիբանանի երիտ. միութեան «Հրայր Դժոխք» մասնաճիւղը կազմակերպեց Սասնոյ այդ մեծանուն գործիչին նահատակութեան 70րդ տարելիցին նուիրուած հանդիսութիւն Էշրէֆիէ թաղամասի «Ազատամարտ» ակումբի սրահին մէջ: Օրուան բանախօսներ էին ԼԵՄի այդ մասնաճիւղի անդամ Գէորգ Փափազեան և «Զաւարեան» ուսանողական միութեան անդամ Սեռօ Պոյաճեան, իսկ հանդիսութեան կը նախագահէր նոյն ինքն... Կարո Սասունին: Դժուար չէր պատկերացնել սրահէն ներս ներկայ գտնուող երիտասարդութեան խանդավառութիւնը, որ ստեղծուած էր Կարո Սասունիին ներկայութեամբ: Իսկ ատկէ կարճ ատեն մը առաջ (ճիշդ տարին կը վրիպի յիշողութենէս), երբ կը նշուէր ՀՅԴ օրը, օրուան նախագահը դարձեալ Կարո Սասունին էր: Օրուան պատգամներէն վերջ հանդիսավարը ամպիոնին մօտ հրաւիրեց օրուան նախագահը, որպէսզի ասէր փակման խօսքը: Կարո Սասունի ձեռնափայտով և կաղալով մօտեցաւ բարձրախօսին և յայտարարեց. «Դաշնակցութեան գործը վերջ չունի, Դաշնակցութեան օրն ալ վերջ չունի, փակում չունի, հիմա կրնաք երթալ...»:

(**) Լաւ կը յիշենք 90ականներու սկիզբները «Նահրիտ» գործարանին պարագան, երբ իր վնասակար արտանետումներուն հետևանքով փակուեցաւ այդ գործարանը: Քիչ մը աւելի խորքային իրականութիւնը այն է, որ Արևմուտքը, փոխանակ օգնելու, որ այդ գործարանը արդիական սարքերով օժտուի և երկրի տնտեսութեան համար կարևոր հաստատութիւն մը մնայ, «ձեռքի տակէն» քաջալերեց անոր դէմ պայքարը, որպէսզի փակուի: Ինչո՞ւ: Պարզ էր... Արևմուտքը չէր ուզեր, որ նորանկախ Հայաստանի մէջ աճի ու զարգանայ իր քիմիական ճարտարուեստին մրցակից գործարան մը՝ յանձին «Նահրիտին»: ■

ՀՅԴ երիտասարդութիւնը կը մարմնացնէ համաժողովրդական բանակի գաղափարը

«Դրօշակ»ի հարցազրոյցը ՀՅԴ Բիւրոյի անդամ Յովսէփ Տէր-Գեւորգեանի հետ

« ԴՐՕՇԱԿ».- Ընկեր Յովսէփ, վերջին տարիներին քաղաքական-հասարակական կեանքում առաւել վճռական է դարձել երիտասարդութեան դերակատարութիւնը, որն ընդհանրապէս իր էութեամբ միշտ հասարակութիւնների ամենաակտիւ շերտն է: Նոյնպիսի գործընթացներից կարծես թէ անմասն չմնաց հայ երիտասարդութիւնը Հայաստանում և Հայաստանից դուրս: Ինչպէ՞ս էք տեսնում այս երևոյթը, եթէ մեր հայեացքը կենտրոնացնենք յատկապէս հայկական միջավայրի վրայ:

ՅՈՎՍԷՓ ՏԷՐ-ԳԷՈՐԳԵԱՆ.- Այո՛, նկատելի է, որ աշխարհին մէջ երիտասարդութիւնը ընդհանրապէս աւելի գործունեայ և վճռական կը դառնայ, երբ խօսքը կը վերաբերի հանրային հնչեղութիւն ունեցող խնդիրներուն: Կը հաւատամ, որ երիտասարդութեան դերն ալ ատիկա է՝ մշտապէս արթուն գտնուիլ և պատրաստ ըլլալ ստանձնելու նորանոր մարտահրաւէրներ: Հայկական աշխարհին մէջ հայ երիտասարդին վիճակուած է իր ապրած իրականութեան պարտադրած մարտահրաւէրներու ստանձնումը:

Հայ երիտասարդն է, որ կը պաշտպանէ մեր հայրենիքի սահմանները, Միջին Արևելքի գաղութներուն մէջ կ՚ապահովէ մեր ժողովուրդին անվտանգութիւնը, նաև հայ երիտասարդն է, որ գլխացաւանք է թուրք-ազերիական «լոպիին», կը փութայ համաճարակի օրերուն կարիքաւոր հայ ընտանիքներու օժանդակութեան, տևական ներկայութիւն է ընկերային ցանցերուն վրայ՝ ուրոյն ձևով ապրելով իր հայկականութիւնը...

Կազմակերպուած երիտասարդութիւնն է, որ առաջնագիծին վրայ է: Հիմնական հարցը այդ շրջանակը ընդլայնելն ու բազմահազար հայ երիտասարդութիւնը մասնակից դարձնելն է հայ կեանքին:

Բաւարար վճռակա՞ն է արդեօք այդ մասնակցութիւնը: Չեմ կարծեր, քանի որ այսօրուան համաշխարհային և հայկական հիմնախնդիրները բարդ են ու փոխշաղկապուած և կը պահանջեն հետևողական պայքար մղելու պատրաստ զգօն և յանձնառու երիտասարդութիւն, որ մօտեցումի և պայքարի արդի ու նորարար միջոցներ կ՚որդեգրէ:

Կ՚ուզեմ աւելցնել նաև, որ համաշխարհային մակարդակի վրայ, բայց նաև հայ իրականութեան մէջ, կը տիրէ քաղաքական ամբոխավարութիւն մը, մակերեսային մօտեցումներու և յայտարարուող լոզունգներու տարափ մը: Հայ երիտասարդութիւնը թիրախ է իրեն բնորոշ զգացական և իտէալապաշտ նկարագրին պատճառաւ. ան պէտք չէ իյնայ այս թակարդին մէջ:

Կաշառակերներու, ժողովուրդը կեղեքած իշխանաւորներու, պետութեան և կազմակերպութիւններու առողջ գործունէութիւնը շեղող, խմբակային շահեր հետապնդող առաջնորդներու հանդէպ դժգոհութիւնը, ընդվզումն ու նոյնիսկ ատելութիւնը պէտք չէ երիտասարդութիւնը մղեն ամբոխավարներու, անպատասխանատու մեծխօսիկներու, քննադատութիւնը արհեստ դարձուցած, բարոյականութեան քարոզներ տուողներու, երևութապէս մաքրամաքուր, սակայն իրողապէս խոցելի անհատներու գիրկը: Երիտասարդութիւնը զգօն պէտք է ըլլայ և չտրուի ժամանակավրէպ մօտեցումներու:

Հայկական միութիւններն ու կազմակերպութիւնները պէտք է ըլլան առողջ, ժողովրդավար, հաշուետու, թափանցիկ: Հաւանական է, որ սխալներ գործուած ըլլան, սակայն այդ երևոյթներու դէմ պայքարիլը հետևողական և կառուցողական մօտեցումով պէտք է ըլլայ և ոչ թէ եղածը քանդելու կործանարար, ենթակայական պատճառներէ բխող մոլուցքով:

Բարդ իրավիճակներու հետ գործ ունինք, հարցերը պէտք է քննել իրենց արժանի խորութեամբ, երևոյթներու և անձերու հանդէպ խորշանքը պէտք չէ կուրցնէ երիտասարդութիւնը և չեզոքացնէ անոր քննական միտքը:

Միաժամանակ, պատասխանատու և առողջ ուժերու պարտաւորութիւնն է երիտասարդութեան հետ հաղորդակից ըլլալ, անոնց բացատրել որոշումները, անոնց տուն տուող պատճառները, առարկայական մօտեցումով հիմնաւորել զանոնք, ականջալուր ըլլալ, ընդունիլ քննադատութիւնները և մասնակից դարձնել անոնց որոշումներու կայացման գործին:

«Դ.».- Վերջին շրջանում նկատելի են դաշնակցական երիտասարդական շարքերի ստուարացումն ու աշխուժացումը: Հաճելի է արձանագրել, որ մեր երիտասարդները, լինեն նրանք երիտասարդական թէ ուսանողական միութիւնների անդամներ, սերտ գործակցութեան մէջ են իրար հետ՝ հայրենիքի և Սփիւռքի ընդգրկուն աշխարհագրութեամբ: Համավարակի պատճառով վերջին ամիսներին խզուած են նաև միջազգային ֆիզիքական կապերը: Գիտենք, սակայն, որ այս բեմում ևս ՀՅԴ երիտասարդութիւնը աշխոյժ մասնակից է: Պատմէք, խնդրում եմ, ՀՅԴ երիտասարդութեան ներկայ վիճակի և ծաւալած գործունէութեան մասին:

Յ.Տ.Գ.- Ինչպէս նախապէս ըսած եմ, ՀՅԴ երիտասարդական, ուսանողական և պատանեկան միութիւններու ցանցը՝ իր 10.000 անդամներով, հայկական իրականութեան մէջ ամէնատարածուն ու բազմանդամ քաղաքական երիտասարդական կազմակերպութիւնն է:

Ճիշդ էք, երբ կ'ըսէք, թէ սերտ գործակցութիւն կայ Սփիւռքի և Հայաստանի երիտասարդական միութիւններուն միջև: ՀՅԴ Բիւրոյի երիտասարդական խորհուրդին և գրասենեակի առաջնահերթութիւններէն են այդ կապերուն խթանումը, փորձի փոխանակումը և փոխադարձ ճանաչողութեան զարգացումը՝ յաղթահարելու համար տեղայնական մօտեցումներն ու խորացնելու դաշնակցական համահայկական արժէքները:

Հայաստանի կարիքաւոր ընտանիքներուն նուիրուած «Օգնի՛ր հայրենակցիդ» ծրագրի գծով մեր համաշխարհային երիտասարդական ցանցի ցուցաբերած քարոզչական և նիւթական աջակցութիւնը լաւագոյն ապացոյցն է այս յաջողութեան:

Գալով համաշխարհային կազմակերպութիւններու (Եւրոպայի Ընկերվար երիտասարդներու միութիւն, Ընկերվար երիտասարդներու միջազգային միութիւն, պատանիներու իրաւունքներով զբաղող Ֆալքոն միութիւն) ծիրին մէջ մեր գործունէութեանը՝ հպարտութեամբ կրնամ հաստատել, որ ՀՅԴ երիտասարդութիւնը մշտական և աշխոյժ ներկայութիւն է: Տարիներու աշխատանքի շնորհիւ ցեղասպանութիւնը ճանչցուած է անոնց և անդամ միութիւններու կողմէ, իսկ ներկայիս մենք շեշտը կը դնենք հատուցումներու և Արցախի ժողովուրդի իրաւունքներու հիմնախնդիրներուն վրայ և կ'արձանագրենք յաջողութիւններ:

Կ'ուզեմ նաև շեշտել, որ ՀՅԴ երիտասարդական և ուսանողական միութիւններու ներկայացուցիչները համաշխարհային երիտասարդական հարթակներու վրայ ոչ միայն կը բարձրացնեն Հայ դատի հարցերը, այլև մասնակից կը դառնան միջազգային այժմէական հիմնախնդիրներու արծարծումին, ինչպիսիք են մարդկային տարրական իրաւունքներու ոտնակոխումը, ընկերային անհաւասարութիւնը, կանանց նկատմամբ անիրաւութիւններու հարցը,

կենսոլորտի ապականումը...Տեղական մակարդակի վրայ նաև կը հետապնդուին այս հարցերը: Այս ուղղութեամբ ՀՅԴ ՀԵՄի և այլ միութիւններու աշխուժութիւնը գնահատելի է, այս ուղղութեամբ պէտք է բազմապատկել ջանքերը:

Քանի մը տասնեակ հաշուող ՀՅԴ երիտասարդական և ուսանողական միութիւնները զանազան ճակատներու վրայ կը պայքարին, անդուլ կ'աշխատին ապազգային, ապաքաղաքականացած պայմաններու և հակադաշնակցան տարրերու կողմէ ստեղծուած ժխորի մը մէջ: Անոնք ոչ միայն կը յաղթահարեն այս պայմանները, այլև իրենց նորարար գաղափարներով և ծրագիրներով կը մասնակցին կուսակցութեան հզօրացման և զարգացման:

Անկարելի է այստեղ մեր այս միութիւններու գործունէութեան ամբողջական պատկերը տալ, մանաւանդ որ անոնք կը տարբերին հայրենիքի և Սփիւռքի միջև, ինչպէս նաև համայնքէ համայնք և կը ծաւալին զանազան մակարդակներու վրայ՝ քաղաքական, ընկերային, մշակութային, ուսանողական, գաղութային և այլն:

Փորձեմ տալ համայնապատկեր մը:

Սկսիմ գիտելիքներու և հմտութիւններու զարգացումէն: Մեր երիտասարդները կը մասնակցին փորձավարժութիւններու՝ Հայ դատի գրասենեակներէն ներս: Նշեմ, օրինակ, ԱՄՆի «Լէօ Սարգիսեան» և Պրիւքսէլի «Վահան Յովհաննիսեան» ծրագիրները: Վարժողական ծրագիրներ կան նաև Հայաստանի և Արցախի պետական և այլ կառոյցներու մէջ:

Հայաստանի, Արցախի և Ջաւախքի մէջ տեղի կ'ունենան տեղաբնակ պատանիներուն նուիրուած ճամբարներ՝ ազգային դաստիարակութեան կողքին օտար լեզուներու, համակարգչային, ընկերային, առողջապահական և այլ գիտելիքներ փոխանցելու համար: Մեր երիտասարդները կը կազմակերպեն նաև Հայաստանի և Արցախի բանակին ու անոր նահատակներու ընտանիքներուն նուիրուած հանգանակութիւններ: Անոնք կը բերեն նաև գործօն մասնակցութիւն Հայաստան համահայկական հիմնադրամի դրամահաւաքի աշխատանքներուն:

Ուսանողական մակարդակի վրայ կարելի է արձանագրել հետևեալ աշխատանքները՝

հայագիտական նիւթերուն և համալսարանական ուսումնասիրութիւններուն նուիրուած հարթակներու ստեղծումը, օտար համալսարանական շրջանակներու մէջ հայկական հիմնախնդիրներու և հայ մշակոյթի ներկայացումը, համալսարաններու մէջ հայ ուսանողութեան համախմբումը, ակումբներու հիմնումը, բարձրագոյն դասարաններու արևելումի և յաջողակ հայ աշակերտներու պարգևատրումի ձեռնարկները: Կը հրապարակուին ուսումնասիրութիւններ, պարբերաթերթեր...

Յարաբերական ոլորտին մէջ դաշնակցական երիտասարդները կը գործակցին իրենց երկրի օտար քաղաքական և հասարակական երիտասարդական միութիւններու հետ: Իւրաքանչիւր համայնքի մէջ հայ երիտասարդական միութիւններու միջմիութենական հանդիպումներ տեղի կ'ունենան՝ բացուելու տեղական կազմակերպութիւններուն և ընդլայնելու աշխատանքային ցանցը:

Ջանազան առիթներով մեր երիտասարդները կը կազմակերպեն հայահոծ շրջաններու կամ ընդհանրապէս բնապահպանական յատուկ նշանակութիւն ունեցող վայրերու մաքրութեան արշաւներ, կ'իրականացնեն տարածքներու բարեկարգման ծրագիրներ, կանանց իրաւունքներուն նուիրուած ձեռնարկներ, արեան տուչութեան արշաւներ...

Հայ դատի ծիրին մէջ, սովորական ամենամեայ աշխատանքներէն անդին, պարբերական դարձած են թրքական ու ազերիական դեսպանատուներու կողմէ կազմակերպուած ձեռնարկներու խանգարումը, թրքական արտադրութիւններու պոյքոթի արշաւը, ազերիական բանակին զէնք վաճառող ընկերութիւններու դէմ պայքարը...

Հայաստանի սահմանին վերջին իրադարձութիւնները ցոյց տուին, որ աշխարհասփիւռ ՀՅԴ երիտասարդութիւնը կը մարմնացնէ համաժողովրդական բանակի գաղափարը:

«Դ.».- Ընկեր Յովսէփ, ՀՅԴ Բիւրոն աշխատանքային յագեցած ծրագիր ունէր 2020 թուականի համար: Ջանազան աշխատանքների շարքում միջոցառումներ էին ծրագրուել Սևրի 100ամեակի առիթով: Կ'ուզեմ՝ անդրադառնաք այս հարցին: Դեռ ուժի մէջ են ինչ-որ ձեռնարկներ:

Յ.Տ.Գ.- Հայ ժողովուրդի իրաւունքներու հատուցումի իմաստով ակներև է, որ ցեղասպանութենէն 105 տարիներ ետք մեր հողային, նիւթական և բարոյական իրաւունքներու արդար պահանջատիրութեան պայքարը տակաւին կը մնայ իր սկզբնակէտին մէջ:

Սևրի դաշնագիրի 100ամեակին առիթով ՀՅԴ Բիւրոյի կազմակերպած ձեռնարկները համավարակին պատճառով յետաձգուեցան: Կը յուսանք, որ Ֆրանսայի հենց Սևր քաղաքին մէջ նախատեսուած միջազգային խորհրդաժողովը, ինչպէս նաև Ուաշինկթընի և այլ երկիրներու մէջ ծրագրուած ձեռնարկները կարելի ըլլայ իրագործել այս տարուան վերջին եռամսեակին:

Երիտասարդական մակարդակի վրայ ՀՅԴ Բիւրոյի երիտասարդական գրասենեակը անցնող ապրիլին հրապարակեց հայ երիտասարդութեան ուղղուած կոչ մը, որ թարգմանուեցաւ հինգ լեզուներով: Յառաջիկայ ամիսներուն համար նախատեսուած են և արդէն իսկ ընթացքի մէջ են բազմաթիւ այլ ուսումնասիրական, քարոզչական, արտաքին յարաբերական մակարդակի ու Թուրքիոյ իշխանութիւններուն ուղղուած պահանջատիրական աշխատանքներ:

Հրաժարիլ մեր արդար իրաւունքներէն կը նշանակէ մշտական դարձնել հայ ժողովուրդի և Հայաստանի Հանրապետութեան հանդէպ թրքական ու ազերիական սպառնալիքները և տկարացնել մեր ազգի անվտանգութիւնը: Հետևաբար հայութիւնն ու հայ երիտասարդութիւնը պէտք է հաստատակամ ըլլան մեր իրաւունքներու վերականգնումին ուղղութեամբ: Միասնականութիւնն ու մեր պահանջուած իրաւունքներու գծով համախոհութիւնը յաջողութեան նախապայմաններ են: Այս ուղղութեամբ Հայոց ցեղասպանութեան 100րդ տարելիցի համահայկական պահանջատիրական հռչակագիրը ունի այժմէական նշանակութիւն: Կը յուսամ, որ Հայաստանի իշխանութիւնները ոչ միայն պատշաճօրէն պիտի նշեն Սևրի դաշնագիրի հարիւրամեակը, այլև պիտի վերսկսին հատուցումներու ուսումնասիրութեան նուիրուած՝ ատենին ստեղծուած խումբի գործունէութիւնը:

Երիտասարդութիւնն է, որ պէտք է ըլլայ ջահակիրը մեր պահանջատիրական պայքարին: Ան պէտք է ամրացնէ իր կապը Արևմտահայաստանի պատմական, մշակութային, ազգագրական, աշխարհագրական տուեալներուն և արժէքներուն հետ, ձեռք բերէ քաղաքագիտութեան, պատմագիտութեան, ցեղասպանագիտութեան, միջազգային իրաւունքներու վերաբերող մասնագիտական կարողութիւններ և մասնակից դառնայ Հայ դատի հետապնդման աշխատանքներուն՝ նոր թափ հաղորդելով անոնց և մշտապէս արծարծելով հայութեան իրաւունքներու վերականգնման պահանջը:

«Դ.».- Կարելի՞ է ասել, որ սփիւռքահայութիւնը, ապրելով իր կեանքով, միաժամանակ հայեացքը

Ֆրանսիայի «Նոր սերունդ»ի երիտասարդները

մշտապէս յառած է Հայաստանին ու Արցախին և ապրում է նաև հայրենիքի ճակատագրով: Հայաստանում այսօր տեղի ունեցող գործընթացները ինչպէ՞ս են ընկալւում տեղի հանրութեան կողմից:

Յ.Տ.Գ.- Սփիւռքի, ինչպէս նաև հայաստանաբնակ հայութիւնը մեծ սպասումներ ունէր նոր իշխանութիւններէն:

Բոլորիս փափաքն էր, որ անոնք յաջողէին: Սփիւռքահայութեանն ուղղուած խոստումները բազմաթիւ էին՝ համահայկական օրակարգ, փոխադարձ վստահութեան վրայ հիմնուած նոր որակի յարաբերութիւններ, հայրենադարձութեան ծրագիրներ, բազմամիլիառ տոլարի տնտեսական ներդրումներու միջավայր և բազմաթիւ այլ յայտարարութիւններ... Դժբախտաբար, իրականութիւնը այսօր բոլորին այլ է. նախկին իշխանութիւններուն օրով գործադրուող ծրագիրները ջնջուած են, և նորերը չեն ծնիր, խօսքերէն անդին չկայ յստակ քաղաքականութիւն և աշխատանքային ծրագիր:

Աւելին՝ հայրենիքին մէջ ստեղծուած բաժանարար գիծերը կը հասնին Սփիւռք: Ականատէս կ'ըլլանք անհատներու և իսկական ներկայացուցչական հանգամանք չունեցող կազմակերպութիւններու կողմէ սփիւռքահայութեան անունով հրապարակուած՝ իշխանութիւններու նկատմամբ դրական յայտարարութիւններու, Սփիւռքի կազմակերպման կոչերու...

Հայաստանի իշխանութիւնները կրնան յաջողիլ Սփիւռքի նկատմամբ իրենց առաքելութեան մէջ, եթէ անկեղծ և խորքային համագործակցութիւն հաստատեն Սփիւռքը լաւապէս ճանչցող և այդ միջավայրին մէջ գործող կազմակերպութիւններու հետ: Սփիւռքահայ յանձնակատար մը նշանակելը կամ մի քանի ժամուան առցանց հանդիպումները անբաւարար են: Անընդունելին այն է, որ այս իշխանութիւնները ոչ միայն կը թերագնահատեն Սփիւռքի տասնեակ տարիներու վաստակ ունեցող կառոյցները, այլև կը հարուածեն զանոնք:

Հայ երիտասարդների ցույցը ընդդեմ ադրբեջանական ագրեսիայի՝ Հունաստանում

Բոլորի համար յստակ պէտք է ըլլայ, որ Հայաստանի իշխանութիւններուն կողմէ Հայաստանի ՀՅԴ կառոյցին դէմ ցեխյարձակումները ինքնաբերաբար ուղղուած են ՀՅԴ համահայկական ընտանիքին դէմ: Հետևաբար կարելի է այսօր անվարան հաստատել, որ ՀՅԴ աշխարհասփիւռ ընտանիքը իր ուղեկից միութիւններով և համակիրներով, որպէս Սփիւռքի ամենակազմակերպուած և ամենամեծ հատուածներէն մէկը, խոր յուսախաբութեամբ և ապագայի նկատմամբ չափազանց մտահոգութեամբ կ'անդրադառնայ տիրող իրավիճակին:

Գալով աւանդական կազմակերպութիւններէ դուրս գտնուող շարքային սփիւռքահայերուն՝ անոնց կարծիքը կարելի է հաւանաբար համեմատել մեր հայրենիքի ժողովուրդին կարծիքին հետ: Կան սատարողներ, որոնք համոզուած են, որ ներկայ իշխանութիւններուն կողմէ նախկին փտած իշխանութիւններու ներկայացուցիչներուն դէմ ծաւալած պայքարը մէկ ու միակ նախադրեալն է՝ որևէ յաջողութիւն և յառաջդիմութիւն ապահովելու: Մենք դէմ չենք, որ փտածութիւնը արմատախիլ ըլլայ, և անոնք, որոնք թալանած են երկիրը տասնամեակներով, արդարօրէն և առանց քաղաքական հաշուարկներու դատուին և վերադարձնեն գողօնը: Բայց նաև կը կարծենք, որ ճիշդ չէ պետութեան ամբողջ կարողականութիւնը ուղղել միայն ու միայն անցեալի հաշիւները մաքրելուն, մանաւանդ որ իբրև երկիր կը դիմագրաւենք սոսկալի աշխարհաքաղաքական մարտահրաւէրներու: Կան նաև թերահաւատներ, որոնք իշխանափոխութեան վաղորդայնին կարծեցին, թէ արդէն երկիրը կախարդուած է և փրկուած՝ անցեալի խնդիրներէն: Հոս է, որ մենք կը կրկնենք մեր մօտեցումը, որն է համակարգային փոփոխութեան անհրաժեշտութիւնը: Երկար ժամանակի, մտայնութիւններու փոփոխութեան, նոր ու տարբեր մօտեցումներու կարօտող խնդիրները կրնան լուծուիլ միայն, եթէ համակարգային փոփոխութիւններ ի գործ դրուին: Այս աշխատանքը տեղի կ'ունենա՞յ այսօր: Չենք կարծեր:

«Դ.».- Միջին Արևելքի հայութիւնը դժուարին օրեր է ապրում, համայնքների ներկան ու ապագան մտահոգում են համայն հայութեանը: ՀՅԴ Բիւրոն այս հարցով զորաշարժի ենթարկեց համահայկական իր բոլոր կառոյցները: Միւս կողմից՝ արևմտեան երկրների հայութիւնը առաւելաբար դիմագրաւում է ինքնութեան կորստի վտանգին:

ՀՅԴ Բիւրոն նախապէս յայտարարեց, որ նախապատրաստական աշխատանքներ է տանում Սփիւռքին նուիրուած համահայկական ընդգրկմամբ խորհրդաժողով կազմակերպելու ուղղութեամբ: Ինչպէ՞ս կարժևորեիք այս հարցերը:

Յ.Տ.Գ.- Այո՛, Լիբանանի հայութեան վիճակը խիստ մտահոգիչ է: Երկրի ներքաղաքական պայմանները, տնտեսական ճգնաժամը և թրքական

նկրտումները դիմագրաւելու մարտահրաւէրը միայն լիբանանահայութեան հարցը չէ, այլ իւրաքանչիւր հայու պատասխանատուութիւնը: Հակառակ համավարակի ստեղծած համաշխարհային տնտեսական դժուարութիւններուն՝ ողջունելի են այն բոլոր օժանդակութիւնները, որոնք կը հասնին մեր հայրենակիցներուն:

Միջինարևելեան մեր գաղութներու ապագան և հոն ապրող հայութեան ֆիզիքական ապահովութիւնը տեղական հայկական կառոյցներու առաջնահերթութիւնն են: Գաղութի ներքին միասնականութիւնը նախապայման է՝ յաղթահարելու բոլոր սպառնալիքները: Հայաստանի Հանրապետութեան դերն ալ պէտք է շեշտել, մասնաւորապէս այդ երկիրներէն արտագաղթած հայութիւնը ընդունելու, ինչպէս նաև դիւանագիտական միջոցներ ի գործ դնելու, իսկ եթէ հարկ ըլլայ, այդ գաղութներու անվտանգութեան պահպանման առումով:

Սփիւռքի վիճակը և ներկայ պայմաններուն համապատասխան նորարար լուծումներու փնտռտուքը կը մնան հայութեան տագնապալի հիմնահարցերէն մէկը: Հայ քաղաքական միտքը արդեօք այս հարցը ազգային հիմնախնդիրներէն մէկը կը դասէ:

Սփիւռքի ողնաշարը կազմող կազմակերպութիւնները հիմնուած են արդէն իսկ մէկ դար առաջ: Հպարտութեամբ կը տօնենք անոնց յոբելիանականները: Անոնք կը գոյատևեն և կը փորձեն քայլ պահել ներկայ պայմաններուն հետ՝ շնորհիւ կամաւորներու հսկայ փաղանգի մը, ի գին մեծ զոհողութիւններու, սակայն որքանո՞վ են անոնք համահունչ ներկայ պայմաններուն, Սփիւռքի մեծ տոկոսը կազմող՝ ձուլման եզրին գտնուողներուն կամ նոր Սփիւռքը կը համախմբե՞ն իրենց շուրջ, որքանո՞վ կը յաջողին երիտասարդութիւնը ներգրաւել իրենց շարքերուն կամ նոյնիսկ իրենց ծրագիրներուն մէջ:

Տպաւորութիւն կայ, թէ համահայկական օրակարգի (Հայաստանի ներքաղաքական կեանք, Արցախ, Հայ դատ...) ծանրաբեռնուած ըլլալու պատճառով Սփիւռքի օրակարգը կը մղուի երկրորդական պլան: Անգլերէնով կարելի է ըսել «business as usual», գործը սովորականի նման կ'ընթանայ, ընդհանրապէս կը բաւականանանք հանդիսաւոր խորհրդաժողովներ կազմակերպելով, ճառեր արտասանելով, ախտաճանաչումներ կատարելով, սակայն կը դժուարանանք նորը ստեղծելու հարցում: Իսկապէս, հատուկենտ են նոր ու նորարար ծրագիրները:

Ունի՞նք արդեօք այն ստեղծագործ միտքը, ներուժը և միջոցները՝ քայլ պահելու մերօրեայ միջավայրին և ընկերային զարգացումներուն:

Ո՞րն է, կամ որո՞նք են այն գաղափարները, որոնք պիտի ոգևորեն և համախմբեն սփիւռքահայութիւնը, մանաւանդ այն հատուածը, որ կը հեռանայ հայկական կեանքէն՝ հարենիքին հետ կա՞պը, Հայ դատի պահանջատիրութեան օրակա՞րգը, ներսփիւռքեան նոր տեսլակա՞ն մը, համամարդկային խնդիրնե՞ր...

Որո՞նք են միջոցները՝ առցանց տեղեկատուական արհեստագիտութի՞ւնը, սփիւռքահայ դպրոցները և բարեփոխուած միութիւնն՞ը, արհեստավարժ մարդուժ ու գործունէութի՞ւնը, Հայաստանի և Արցախի հանրապետութեանց հետ շօշափելի կապերը և Հայաստանի քաղաքական, տնտեսական, ընկերային կեանքին ներգրաւո՞ւմը:

Արդեօք կարելի՞ է իրավիճակի սպասուած փոփոխութիւնը կատարել մօտ մէկ դար Սփիւռքը կանգուն պահած սփիւռքեան ուժերով, ո՞րն է Հայաստանի Հանրապետութեան դերը: Ճիշդ է, որ տարիներու ընթացքին Սփիւռք-Հայաստան յարաբերութիւնները մնացին թերի և ընդհանրապէս արարողակարգայինէն անդին չանցան, սխալներ տեղի ունեցան, շատ յաճախ բաց ու անկեղծ մատնանշումներ չկատարուեցան: Իսկ ներկայ իշխանութիւնները յայտարարութիւններէն անդին երթալու պէտք եղած հասունութիւնը ունի՞ն: Այս հարցը կու տամ, քանի որ անցեալ երկու տարիներու ընթացքին անոնց ամբոխավարութիւնը լոզունգի վերածելով, բայց նաև հակասական յայտարարութիւններով արժեզրկեց ազգային առաջնային նշանակութիւն ունեցող գաղափարները, ինչպէս, օրինակ, հայրենադարձութիւնը:

Բարդ է Սփիւռքի վիճակը, խնդիրները բազմաթիւ են: Ինչպէս ֆրանսական առածը կ'ըսէ, պէտք չէ վարանիլ, ցուլը պէտք է բռնել կոտոշներէն, իսկ հայ քաղաքական միտքը և ղեկավարութիւնը պէտք է գործադրեն հարկ եղած համազգային ճիգը և իրենց մօտեցումին մէջ խորքային, ստեղծագործ ու հետևողական ըլլան:

Հայրենիքի և հայ ազգի գոյատևման ու զարգացման համար առանցքային է Սփիւռքի դերակատարութիւնը: Եթէ այս գաղափարին համաձայն ենք բոլորս, եկէ՛ք, ուրեմն, հաստատենք նաև, որ համազգային առումով աղետալի է Սփիւռքի մաշումը: Այսպէս պէտք է դիտել հարցը և, ըստ այնմ, լարել մեր ուժերը:

Հերթական արկածախնդրությունը պատժվեց հայկական զինված ուժերի կողմից

Արթուր Եղիազարյան
Ռազմական վերլուծաբան

2020 թվականի հուլիսի 12-ին՝ ժամը 12:30-ի սահմաններում, Ադրբեջանի զինված ուժերի զինծառայողները հայկական կողմի համար անհասկանալի պատճառով, «ՈՒԱՋ» մակնիշի ավտոմեքենայով Տավուշի ուղղությամբ ՀՀ պետական սահմանը խախտելու փորձ են կատարել: Հայկական կողմի նախազգուշացումից հետո Ադրբեջանի զինծառայողները, թողնելով «ՈՒԱՋ» մակնիշի ավտոմեքենան, վերադարձել են իրենց դիրք: Մեկուկես ժամ անց Ադրբեջանի զինված ուժերի զինծառայողները փորձել են գրավել հայկական զինված ուժերի սահմանային դիրքը՝ 82 մմ ականանետից և տանկից բացելով հրետանային կրակ, սակայն ճնշվել են հայկական կողմից և, կորուստներ կրելով, հետ շպրտվել:

ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտարարեց, որ իրավիճակի լարման հետևանքների ամբողջ պատասխանատվությունը կրելու է Ադրբեջանի ռազմաքաղաքական ղեկավարությունը:

Հայկական կողմը, անցնելով պատժիչ-կանխարգելիչ գործողությունների, բարելավում է իր դիրքը՝ ադրբեջանական բանակից գրավելով երկու մարտական դիրք: Այդ դիրքերը գտնվել են ՀՀ տարածքում, որտեղ մի քանի տասնամյակ (90-ականների սկզբից) տեղակայված են եղել ադրբեջանական ուժերը և կրակի տակ պահել հայկական սահմանամերձ մի քանի բնակավայրեր (Մովսես, Չինարի, Այգեպար), ինչպես նաև այդ տեղանքից իրականացնում էին դիվերսիոն գործողություններ: Հայկական կողմը գործողությունների ընթացքում կորուստներ չի կրել:

Կրելով խայտառակ պարտություն՝ ադրբեջանական կողմը չէր կարողանում հաշտվել իրականության հետ, և գնդակոծություններն ու հրետակոծությունները շարունակվեցին հաջորդ օրերին: Բայց հակառակորդի բոլոր փորձերը հայկական զինված ուժերի կողմից թիրախավորվում և չեզոքացվում էին: Հուլիսի 13-ի դրությամբ հայկական կողմը կորուստներ և վիրավորներ չուներ: Հետագա օրերին, հետևելով ադրբեջանական մամուլին ու սոցիալական ցանցերին, պարզ է դառնում, որ հակառակորդն ուներ ավելի քան 17 սպանված:

Հատկանշական է, որ հայկական կողմը իրականացված գործողությունների ընթացքում երբեք չի թիրախավորել հակառակորդի խաղաղ բնակավայրերը, քաղաքացիական բնակչությանն ու ենթակառուցվածքները: Բայց

ադրբեջանական կողմը, բացի դիրքային տեղանքներից, թիրախավորում էր նաև հայկական բնակավայրերը: Ավելին, խախտելով միջազգային նորմերը, իր հրետանային միջոցները տեղակայելով բնակավայրերում կամ մերձակա տարածքներում, թաքնվում էր քաղաքացիական բնակչության թիկունքում՝ այն հաշվարկով, որ հայկական կողմը կրակային միջոցներով չի թիրախավորի այդ գյուղերը, իսկ եթե թիրախավորի, և քաղաքացիական բնակչության շրջանում կորուստներ լինեն, իրենք կփորձեն տեղի ունեցածը շահարկել միջազգային հարթակում: Նման սցենարից խուսափելու համար հայկական կողմը հրապարակեց հետախուզական ԱԹՍ-ների միջոցով արված լուսանկարներ՝ ցույց տալով քաղաքացիական բնակավայրերում տեղակայված ադրբեջանական կրակամիջոցների ու հրետանու դիրքերը և բացահայտելով հակառակորդի իրական դեմքը: Հայկական զինված ուժերը ադրբեջանական բնակավայրերի ուղղությամբ կրակ չեն բացում: Թիրախավորվում են միայն ադրբեջանական զինված ուժերի ինժեներական ենթակառուցվածքներն ու տեխնիկական միջոցները, այն էլ՝ այնպիսի ճշգրտությամբ, որ անգամ քաղաքացիական բնակչության մեջ կամ թիկունքում թաքնվելը ադրբեջանական ուժերին չի փրկում հայ նշանառուների ու հրետանավորների ճշգրիտ հարվածներից:

Այս ողջ ընթացքում ՀՀ պաշտպանության

նախարար Դավիթ Տոնոյանը մշտապես կապ է պահպանում ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչ, դեսպան Անջեյ Կասպրշչիկի հետ և վերջինիս տեղեկացնում, որ հայկական բանակային զորամիավորման անձնակազմն ու հրամանատարությունը հրահանգավորված են դեռևս պահպանել զսպվածություն, իսկ հակառակորդի՝ ՀՀ սահմանների ուղղությամբ նոր սադրանքների պարագայում՝ արձագանքել ըստ անհրաժեշտության՝ դիմելով ընդհուպ մինչև նոր բարենպաստ դիրքերի զբաղեցման:

Ադրբեջանն այս գործողությունների ընթացքում, բացի հրետանային միջոցներից, լայնորեն կիրառում է անօդաչու թռչող հետախուզական, կրակային ու հարվածային սարքեր՝ թիրախավորելով նաև հայկական բնակավայրերի քաղաքացիական ենթակառուցվածքներն ու տները:

Վերջին տարիներին Ադրբեջանը հպարտանում էր իր արտադրության, ինչպես նաև Իսրայելից ձեռք բերված գերթանկարժեք ԱԹՍ-ներով՝ դրանք համարելով անտեսանելի ու անխոցելի հայկական կողմի համար: Բայց մի քանի օրվա ռազմական գործողությունները ցույց տվեցին, որ հայկական կողմը ոչ միայն կարողանում է հայտնաբերել ու խոցել հակառակորդի ԱԹՍ-ները, այլ նաև, կիրառելով սեփական արտադրության բարձր տեխնոլոգիական ծրագրեր ու միջոցներ, օդում որսալ ու անվնաս իջեցնել հակառակորդի օդային սարքերը: Համաշխարհային աղմուկ բարձրացրեց հայկական զինված ուժերի հակաօդային պաշտպանության ստորաբաժանումների կողմից հայ ինժեներների արդիականացրած «Օca» ՋՀՀ-ի միջոցով ադրբեջանական բանակին պատկանող՝ իսրայելական արտադրության գերթանկարժեք և գերժամանակակից «Hermes-900» անօդաչու թռչող սարքի խոցումը, որն ուներ անխոցելիի համբավ: Ընդ որում, սա այս տիպի ԱԹՍ-ի առաջին հայտնի խոցումն է աշխարհում: Մասնագետների գնահատմամբ՝ այն արժեր 30 միլիոն դոլար: «Hermes-900»-ը արտադրում է իսրայելական «Elbit systems» ընկերությունը: Ադրբեջանում դրանք տեղակայված են խոր թիկունքում, և ծախսերը վճարվում են Ադրբեջանի պետական սահմանապահ ծառայության (ՊՍԾ) և ոչ թե բանակի հաշվեկշռից: Սա կարող է վկայել, որ ընթացող գործողությունների ժամանակ, Ադրբեջանի բանակից բացի, ներգրավված է եղել նաև ՊՍԾ-ն:

Հայոց բանակի կողմից խոցված իսրայելական ԱԹՍ-ն

Հայկական ուժերը խոցում են ադրբեջանական բնակավայրին անմիջականորեն մոտ գտնվող հենակետը

Հետագա օրերին ադրբեջանցիները շարունակում էին ռմբակոծել, հրետակոծել և հարվածային ԱԹՍ-ներով («կամիկաձե») հարվածել հայկական դիրքերին, սահմանամերձ բնակավայրերին ու Բերդ քաղաքին: Բայց իսկույն ստանում էին պատասխան ու կրում թե՛ զինտեխնիկայի և թե՛ զինվորականության զգալի կորուստներ: Հայկական բանակի արհեստավարժ հրետանավորների ու հարվածային ԱԹՍ-ների կառավարողների շնորհիվ մինչև հուլիսի 16-ը ոչնչացվում են հակառակորդի բազմաթիվ ԱԹՍ-ներ (շուրջ 13 հատ), տանկեր, հրետանային կետեր, զինվորականության շրջանում արձանագրվում են զգալի կորուստներ, այդ թվում՝ բարձրաստիճան սպաների:

Հուլիսի 14-ին Թովուզում կայացած ճեպազրույցի ժամանակ Ադրբեջանի պաշտպանության փոխնախարար Քերեմ Վելիևը հայտնում է, որ հայկական զինված ուժերի հետ մարտերում, հրետանային կառավարման կետին հասցված, ճշգրիտ հարվածից սպանվել են Ադրբեջանի բանակի 3-րդ կորպուսի հրետանու պետ, գնդապետ Իլգար Միրզոևը, 3-րդ կորպուսի շտաբի պետ, գեներալ-մայոր Փոլադ Հաշիմովը ու ևս հինգ

զինծառայողներ՝ երկու մայոր, երկու ենթասպա և մեկ զինվոր:

Հուլիսի 12-16-ն ընկած ժամանակահատվածում, ըստ որոշ աղբյուրների և դիտարկումների, ադրբեջանական կողմը կորցրել է շուրջ 13 ԱԹՍ, 7 հրետանային կետ, 3 տանկ և 28 զինծառայող: Վիրավորների թիվն անհայտ է:

Ըստ ՀՀ քննչական կոմիտեի՝ 2020 թ. հուլիսի 12-16-ն ընկած ժամանակահատվածում Ադրբեջանի զինված ուժերը Տավուշի մարզի տարբեր բնակավայրերի և հայկական մարտական հենակետերի ուղղությամբ տարբեր տրամաչափի զինատեսակներից, այդ թվում՝ տանկերից, 6 հարվածային անօդաչու թռչող սարքերից, 82 մմ և 120 մմ ականանետներից, Դ30 հրանոթից և այլ հրետանային տեխնիկայից, արձակել են շուրջ 150 կրակոց: Հայկական մարտական հենակետերի վրա կատարված հարձակումների, կրակոցների և հրետակոծումների հետևանքով մարմնական վնասվածքներ է ստացել 36, զոհվել 5 զինծառայող, վնասվել 6 ավտոմեքենա, որոնցից մեկը՝ ԱԻՆ-ին պատկանող:

Տավուշի մարզի տարբեր բնակավայրերի վրա արձակված կրակոցների հետևանքով վնասվել են 24 տուն, 1 կոնյակի և 1 գինու գործարան, 1 մանկապարտեզ, գերեզմանատուն, 4 ավտոմեքենա, 1 ջրագիծ, 1 գազատար, 1 ջերմոց, ոստիկանական 1 պահակակետ, որտեղ գտնվող 2 ոստիկաններն ստացել են մարմնական վնասվածքներ: Բացի այդ՝ մարմնական վնասվածք է ստացել 1 քաղաքացիական անձ:

Ադրբեջանական կողմը հատկապես ծանր է տարել «տարածքային» կորուստը՝ չնայած այն հանգամանքին, որ նշյալ տեղանքի իրավական և օրինական տերը Հայաստանի Հանրապետությունն է: Սադրիչ և արկածախնդիր գործողությունների ձախողումից կատաղած՝ Ադրբեջանի բարձր հարթակներից հնչեցին Հայաստանի ԱԷԿ-ին հարված հասցնելու շանտաժային կոչեր (չնայած հետագայում ադրբեջանցիները հրաժարվեցին իրենց սպառնալիքից, քանի որ ստացան կոշտ արձագանքներ միջազգային տարբեր հարթակներից): Ի պաշտպանություն Ադրբեջանի՝ ՀՀ հասցեին կոշտ արձագանքեցին նաև Թուրքիայից՝ հերթական անգամ ցույց տալով իրենց իրական հակահայկական դեմքը և ակնհայտ կողմնակալությունը: Հուլիսի 12-16-ի ռազմական գործողություններից հետո Թուրքիան սկսել է էլ ավելի մեծ ծավալներով ռազմական աջակցություն ցույց տալ Ադրբեջանին՝ զինելով տարբեր զինամիջոցներով, մասնավորապես թուրքական արտադրության ԱԹՍ-ներով, իսկ միջազգային հարթակներում՝ դիվանագիտական աշխատանքով՝ ընդդեմ Հայաստանի:

Հուլիսի 21-ին՝ ժամը 22:30-ին, «Անվախ» դիրքի ուղղությամբ հակառակորդի՝ հատուկ նշանակության մոտ 100 հոգանոց ստորաբաժանումը (Ցաշմա) ձեռնարկեց հերթական հարձակումը: Հայկական ՋՈ 3-րդ կորպուսի դիրքապահ անձնակազմը հետ մղեց հակառակորդի հերթական գրոհը՝ պատճառելով զգալի կորուստներ (ըստ որոշ աղբյուրների՝ շուրջ 3 տասնյակից ավելի զոհվածներ): Հայկական կողմը կորուստներ չի ունեցել:

Ինչպես միշտ, Ադրբեջանը հերթական անգամ ցուցադրեց, որ անտարբեր է մարդկային ճակատագրերի հանդեպ և եթե անդրադառնում է դրանց, ապա զուտ քարոզչական նպատակներով շահարկելու համար: Բայց այս անգամ այդ շահարկումը բավականին ծանր նստեց Ադրբեջանի իշխանությունների վրա:

90-ականների պատերազմից հետո՝ տարիներ շարունակ, Ադրբեջանը, վարելով հակահայ, հայատյաց քաղաքականություն, ապատեղեկատվությամբ դաստիարակել է կեղծ արժեքներով ու ստով սնված հետպատերազմյան մի սերունդ, որը կարծում է, թե Հայաստանը ռազմական առումով զիջում է Ադրբեջանին, որ հայերի ունեցած նախկին հաղթանակները ձեռք են բերվել օտար ուժերի (մասնավորապես ՌԴ-ի) աջակցությամբ, որ Արցախը, Արևելյան Հայաստանն ու Երևանը ադրբեջանական են և այլն: Եվ այս ռազմական գործողությունների ընթացքում ունենալով բազմակողմ կորուստներ՝ ադրբեջանական որոշակի շրջանակներ Բաքվում, Սումգայիթում, Գյանջայում, Մինգեչաուրում ու այլ քաղաքներում կազմակերպեցին բողոքի ցույցեր՝ պահանջելով Ադրբեջանի իշխանությունից պատերազմ հայտարարել Հայաստանին:

Հայոց բանակի կողմից խոցված ադրբեջանական ԱԹՍ-ների մնացորդները

Բնականաբար, Իլհամ Ալիևը լավ է հասկանում, որ Ադրբեջանը չի կարող լայնամասշտաբ ու երկարատև պատերազմ վարել Հայաստանի դեմ՝ հաշվի առնելով վերջին գործողություններից ստացած հարվածներն ու դասերը, հայկական զինված ուժերի պատրաստվածությունը, կազմակերպվածությունը, տեխնիկական սպառազինվածությունն ու 2016 թ. ապրիլյան ռազմական գործողություններից հետո վերջինիս արդիականացումը և, սրան հակառակ, իր երկրում առկա սոցիալական դժգոհությունը, ազգային փոքրամասնությունների հարցը և այլն: Բայց տարիների հոետորաբանության փոփոխությունն էլ ավելի կսասաներ գործող իշխանությունների վարկանիշն ու աթոռը, հատկապես որ այդ պատերազմաշունչ բողոքի ցույցերի ժամանակ սկսեցին հնչել հակաիշխանական կոչեր: Իրավիճակից ելք փնտրելու ճանապարհին Ալիևը հրապարակավ հայտարարեց, որ այդ բազմահազարանոց ցույցերի մասնակիցներին կոչ է արել զինվորական կոմիսարիատներում ցուցակագրվելու և համալրելու բանակի շարքերը՝ հայերի դեմ պատերազմելու համար, բայց արձագանքել են ընդամենը 150 հոգի, որոնցից 60-ը՝ Թովուզի շրջանից: Փաստորեն, իր արկածախնդիր ու սադրիչ գործողությունների ու ձախողությունների պատասխանատվությունից խուսափելու, նման տրամադրությունների աճը կանխելու համար կատարվածի մեղքն Իլհամ Ալիևն այս անգամ բարդեց սեփական ժողովրդի վրա, և, պատրվակ դարձնելով իր իշխանության վերաբերյալ հնչող անվստահության կոչերը, արգելեց ու ցրեց այդ ցույցերը:

Բայց Ադրբեջանը հեշտությամբ կուլ չի տա հուլիսյան հերթական պարտությունը: Չնայած հավանականությունը մեծ չէ, որ կդիմի լայնածավալ ռազմական գործողությունների, բայց միշտ պետք է սպասել, որ հանկարծակիության գործոնն օգտագործելով՝ կփորձի փոքրիկ հաղթանակների հասնել, որպեսզի պահպանի իր իշխանության հզորության ու հաղթական բանակ ունենալու այն բլեֆը, որով տասնամյակներով սնել է սեփական հասարակությանը:

Ամփոփելով անդրադառնամ, թե ինչու Ադրբեջանն այս արկածախնդրությանը դիմեց ՀՀ Տավուշի մարզում, այլ ոչ թե հայ-ադրբեջանական արցախյան ճակատում: Հուլիսյան ռազմական գործողություններից մեկ շաբաթ առաջ Ալիևը հայտնեց, որ չկան բանակցային գործընթացներ Հայաստանի հետ, և ակնարկեց խնդրի ուժային լուծման մասին: Բայց նա քաջ գիտակցում է, որ Արցախի ուղղությամբ մեկ կայծից կարող է հրդեհ բռնկվել և տարածվել Օմարի լեռներից մինչև Հորադիզ՝ վերածվելով լայնածավալ պատերազմի՝ իր անկանխատեսելի հետևանքներով: Իսկ

Տավուշի մարզի սահմանի դեպքում վստահ է, որ ռազմական գործողությունը շատ խորքային կերպով ու տևականորեն չի կարող ծավալվել, և եթե կարողանա հաղթական մի փոքրիկ հաջողություն ձեռք բերել, իր հանրությանը վստահություն կներշնչի, որ Արցախի ճակատում էլ կարող են հաղթանակի հասնել: Բայց նրա ռազմական արկածախնդրությունը հերթական անգամ պատժվեց հայկական զինված ուժերի կողմից: Չթուլացնելով զգոնությունը՝ Ադրբեջանի յուրաքանչյուր ստոր քայլն ամեն անգամ այնպես պետք է պատժվի, որ Ադրբեջանն ի վերջո համոզվի, որ ռազմական ճանապարհով ոչ միայն չի կարող հասնել խնդրի կարգավորման, այլ նաև կվտանգի ոչ միայն իր իշխանության, այլև Ադրբեջանի ամբողջականությունը:

Ժամանակին ՀՀ պաշտպանության նախարար Դավիթ Տոնոյանն ասել էր. «Տարածքներ խաղաղության դիմաց՝ չի՛ լինելու: Ես այն ձևակերպել եմ՝ «նոր պատերազմ՝ նոր տարածքների դիմաց»»: Վերջին իրադարձությունները հենց այս խոսքի կենսունակության ապացույցն էին:

Փառք հայոց բանակին՝ Հայաստանի և հայության ֆիզիկական անվտանգության միակ երաշխավորին:

Սեւրի դաշնագիրը Հայոց ազգային ուխտին պատուանդանն է

Սեղօ Պոյաճեան

Երկու հազար չորս հարիւր տարի առաջ հին յոյն ողբերգակ Սոֆոկլէս գրած է. «Ոչ մէկ դաշնագիր կրնայ արգելք ըլլալ խաբեբային»: Մինչ օրս դիւանագէտներ և քաղաքական առաջնորդներ իրենց խօսքով և արարքով կը շարունակեն ձայնակցիլ յոյն մեծ իմաստասէրին՝ հաստատելու, թէ դաշնագրերը կը ստորագրուին չյարգուելու համար:

Դաշնակից ուժերու և Թուրքիոյ միջև հարիւր տարի առաջ՝ 1920 օգոստոս 10ին, Ֆրանսայի Սեւր քաղաքի մէջ կնքուած «խաղաղութեան» դաշնագիրը հարազատութեամբ հետևեցաւ սոֆոկլեսեան սկզբունքի վախճանական խաղին: Սեւրի դաշնագրի պարագային ճակատագիրը ի սկզբանէ յստակ պէտք է ըլլար, երբ ի մի հաւաքուած ստորագիր երկիրները, ի բացառեալ Հայաստանէն, դարերով ապացուցած էին իրենց՝ խաբեբայի սեփական յատկութիւնները:

Երբ 1918ին վերջ գտաւ Առաջին աշխարհամարտը, կայացաւ պատերազմը եզրափակող Փարիզի խաղաղութեան ժողովը, որ բացուեցաւ 1919 յունուար 18ին: Խորհրդաժողովը յանգեցաւ խաղաղութեան պայմանագրերու շարքի մը՝ մէկ կողմէ հաւաքաբար յաղթական դաշնակից ուժերու և միւս կողմէ անհատաբար պարտեալ կեդրոնական ուժերուն մաս կազմող երկիրներուն միջև, ինչպէս՝ Վերսայի դաշնագիրը (յունիս 8, 1919) Գերմանիոյ հետ, Սէն Ժերմէնի դաշնագիրը (սեպտեմբեր 10, 1919) Աւստրիոյ հետ, Նէուիի դաշնագիրը (նոյեմբեր 27, 1919) Պուլկարիոյ հետ, Թրիանոնի դաշնագիրը (յունիս 4, 1920) Հունգարիոյ հետ և Սեւրի դաշնագիրը (օգոստոս 10, 1920) Օսմանեան կայսրութեան հետ:

Սեւրի դաշնագիրը, ըստ էութեան, Օսմանեան կայսրութեան տարածքներու անդամահատման պայմանագիր էր: Այն վճռեց հողատարածքային ճակատագիրը, արաբական և միջերկրականեան կարգ մը շրջաններու կողքին՝ նաև Հայաստանի հողատարածքային ճակատագիրը:

Ա. Սեւրը շրջանցելու սադրանքները

Գործնապէս կարճատև եղաւ Սեւրի դաշնագրի կեանքը: Դաշնագրի պայմաններուն մեկնումը տակաւին չէր չորցած, երբ ստորագիր պետութիւնները լծուեցան անոնց գործնականացման ձախողութեան արշաւին: Յատկապէս դաշնակից ուժերու ղեկավար երկիրներից՝ Անգլիա, Ֆրանսա և Իտալիա, իւրաքանչիւրը իրեն յատուկ յաւելեալ հողային ու տնտեսական շահաբաժիններ կորզելու նպատակով սկսաւ կողմնակի համաձայնութիւններ կնքել Թուրքիոյ հետ: Առ ի հետևանք դիւանագիտական այս թաքուն խաղերուն, որոնք մէկ տարուան ընթացքին սկսան երևան գալ, Սեւրի ստորագիր պետութիւնները հերթաբար ու հաւաքաբար փախուստ տուին Սեւրի դաշնագրի վաւերացումը պայմանաւորող միջազգային

օրէնքի իրենց պարտաւորութիւններէն:

Այսուհանդերձ, Սեւրի դաշնագիրը նոյնիսկ իր անվաւեր կարգավիճակով իր ետին թողուց հողատարածքային ու ազգային իրաւունքներու հարցեր, որոնք ուշ կամ կանուխ պիտի գային՝ հալածելու դաշնագրի խաբեբայութեան աջակցող երկիրները քաղաքական, դիւանագիտական և պատերազմական մակարդակներու վրայ:

Սեւրի դաշնագրի մտահոգութեան առանցքը կը կազմէր Եւրոպան դարերով յուզող Արևելեան հարցը լուծելու իր ձգտումը: Իրենց յետագայ քայլերով դաշնակից ուժերը, Սեւրի տրամադրութեանց կիրարկումը խափանելով, պարտութեան մատնեցին Արևելեան հարցի լուծումը կարգաւորող իրենց իսկ ստորագրած պայմանագիրը:

Ներկայիս Միջին Արևելքի մէջ վեց տասնամեակ է ի վեր անլոյծ մնացած Սեւրի առաջադրանքները կը հալածեն թէ՛ Եւրոպան ու Միացեալ Նահանգները և թէ՛ նոյն ինքը Թուրքիան: Միջին Արևելքի տարածքային անկայունութեան ու պատերազմական իրավիճակներու յամեցումը պէտք է գլխաւորաբար որոնել Սեւրի դաշնագրի դիտաւորեալ ձախողութեան մէջ: Այնքան ատեն, երբ շահակցական տրամադրութիւններով անլոյծ կը պահուին միջինարևելեան ժողովուրդներու իրաւունքները, Սեւրի ուրուականը պիտի շարունակէ հալածել դաշնագիրը տապալող պետութիւնները:

Հայաստանի և հայութեան պարագային Սեւրի ցարդ չգործադրուող տրամադրութիւնները նոյն տարողութեամբ կը սաստկացնեն թափը այդ ուրուականին, որ վերջին յիսուն տարիներուն, շնորհիւ հայկական պահանջատիրութեան դիւանագիտական, քաղաքական, քարոզչական թէ այլ նախաձեռնութիւններուն, վերածուած է արևմտեան և թրքական իշխանութիւններու մղձաւանջին: Հայ դատը ձախողութեան մատնելու, հայկական պահանջատիրութիւնը կասեցնելու, Հայկական սփիւռքը պառակտելու և Հայաստանը տկարացնելու ու ապակայունացնելու բոլոր ճիգերուն արմատները պէտք է որոնել Սեւրի պատճառած արևմտեան և թրքական մղձաւանջին մէջ:

Բ. Հայութեան իրաւունքներուն բանաձևումը

Մղձաւանջէն անդին, մեր պարագային Սևրը սոսկ չգործադրուած դաշնագիր մը չէ: Սևրը Հայաստանի և հայութեան ազգային ու հողային տենչերը սահմանող այն միջազգային պարտամուրհակն է, որմէ զրկուած էինք աւելի քան եօթը դար, երբ մեր քաղաքական անօթը փշրուեցաւ, և մեր ժողովուրդը դատապարտուեցաւ անտէր կացութեան ու ազգային հաւաքական գոյութենէ անջատուած վիճակի: 16րդ դարու կէսերէն սկսեալ՝ փորձ կատարուեցաւ վերականգնելու մեր ժողովուրդի ազգային ու հողային իրաւունքները: Սկզբնական շրջաններուն այդ իրաւունքներու ձևաւորումն ու սահմանումը տարտամ էին: Բայց յստակ էր մէկ իրողութիւն՝ Հայկական բարձրաւանդակը կորիզն էր հայութեան ազգային ու հողային իրաւունքներուն: Այս իրողութիւնը հիմնաքարը կազմեց Հայկական հարցին:

Երկու դարերու վրայ երկարող դիւանագիտական միջոցառումներու ճամբով, քարոզչական աշխատանքով, ազգային-ազատագրական պայքարի մաքառումներով, ցեղասպանութեան հետևանքով իր համրանքին աւելի քան կէսը կորսնցնելով՝ հայութիւնը կարողացաւ ճիշդ, արդար ու վերջնական սահմանումը տալ իր ազգային և հողային իրաւունքներուն՝ իր ազատ ու անկախ պետութեան վճիռով: Հայաստանի Հանրապետութեան հաստատումով վերականգնեցաւ հայութեան քաղաքական անօթը: Անոր վիճակուեցաւ բանաձևել ու վճռել հայութեան և Հայաստանի իրաւունքները: Այսպէս, Հայաստանի Հանրապետութեան կառավարութիւնը, վարչապետ Ալեքսանդր Խատիսեանի առաջնորդութեամբ և Հայաստանի խորհրդարանի վաւերացումով, որոշեց վերականգնել հայրենիքի ամբողջութիւնը:

Հայաստանի խորհրդարանի դահլիճին մէջ, օտար դիւանագիտական ներկայացուցիչներու ներկայութեամբ 1919 մայիս 28ին յայտարարուեցաւ Միացեալ և Անկախ Հայաստանի ակտը:

Ակտը հաստատեց. «Հայաստանի ամբողջութիւնը վերականգնելու և ժողովրդի լիակատար ազատութիւնն ու բարգաւաճումն ապահովելու համար Հայաստանի կառավարութիւնը, համաձայն բովանդակ հայ ժողովրդի միահամուռ կամքի ու ցանկութեան, յայտարարում է, որ այսօրուանից Հայաստանի բաժան-բաժան մասերը մշտնջենապէս միացած են իբր անկախ պետական միութիւն»: Միացեալ Հայաստանի «բաժան-բաժան մասերը» կը կազմէին Արևելեան Հայաստանի և Արևմտեան Հայաստանի ներկայ հողատարածքները:

Սևրի դաշնագիրը հաստատեց Միացեալ և Անկախ Հայաստանի ստեղծումի ակտը, իսկ Միացեալ Հայաստանի սահմաններուն վերջնական վճռահատումը վստահուեցաւ Ամերիկայի Միացեալ Նահանգներու նախագահ Վուտրօ Ուիլսընին, որ իր իրաւարարական վճիռը կայացուց 1920 նոյեմբեր 22ին:

Այս առումներով Սևրի դաշնագիրը հայութեան իրաւական, քաղաքական և ազգային պարտամուրհակն է: Այդ պարտամուրհակին տէրը իրաւազուրկ հայութիւնն է և իրաւազրկումի արդիւնք ներկայ Հայաստանը:

Սևրի դաշնագրի խորագիրն է «Թուրքիոյ հետ խաղաղութեան դաշնագիր»: Ան կը բաղկանայ նախաբանէ մը և 13 գլխաւոր մասերէ: Ուղղակիօրէն հայութեան և Հայաստանին կը վերաբերին դաշնագրի երրորդ մասի վեցերորդ բաժինի թիւ 88-93 յօդուածները: Հայութեան հետ առնչութիւն ունին որոշ այլ յօդուածներ ևս, ինչպէս՝ յօդուած 125 (քաղաքացիութեան մասին), յօդուածներ 142 և 144 (փոքրամասնութիւններու մասին), յօդուած 230 (մարդկութեան դէմ ոճիրներու համար ատեաններ հաստատելու մասին), յօդուած 288 (կալուածներու և իրաւունքներու մասին):

Դաշնագրի 88րդ յօդուածով Թուրքիա պաշտօնապէս ընդունեց և ճանչցաւ արդէն իսկ գոյութիւն ունեցող Հայաստանի Հանրապետութիւնը՝ իբրև ազատ և անկախ պետութիւն:

Դաշնագրի 89րդ յօդուածով Թուրքիա և Հայաստան, ինչպէս նաև պայմանագրին բարձր կողմերը համաձայնեցան նախագահ Ուիլսընի իրաւարարութեան յանձնել Էրզրումի, Տրապիզոնի, Վանի և Պիթլիսի նահանգներու մէջ Թուրքիոյ և Հայաստանի սահմանի որոշումը, Հայաստանի՝ դէպի ծով ելքի կարգաւորումը և ճշդուած սահմանին յարող օսմանեան բոլոր տարածքներուն մէջ ապառազմականացման հարցը: 89րդ յօդուածը իրականացումն էր Միացեալ Հայաստանի ակտին: Այդ ուղղութեամբ արդէն իսկ դաշնակից ուժերը Սան Ռեմոյի մէջ 1920 ապրիլ 24ին՝ նախքան Սևրի դաշնագիրը, քննած ու որոշում կայացուցած էին Միացեալ Հայաստանի մասին: 89րդ յօդուածը Միացեալ Հայաստանի ակտին և Սան Ռեմոյի որոշումին դաշնագրային բանաձևումն էր:

Գ. Սևրը փոխարինելու փորձերը

Ինչպէս նշուեցաւ, իբրև դաշնագիր՝ Սևրը մնաց անվաւեր: Հակառակ միջազգային օրէնքի իրենց պարտաւորութեանց՝ Սևրի ստորագիր պետութիւնները դաշնագրի վաւերացումը չհետապնդեցին իրենց օրէնսդիր իշխանութիւններուն մօտ: Քաղաքական, տնտեսական և զինուորական յաւելեալ շահեր կորզելու իրենց ագահութեամբ դաշնակից ուժերը նախաձեռնեցին կողմնակի համաձայնութիւններու, որոնք պատճառ դարձան Սևրի դաշնագրի գործադրման տապալումին:

Այսուհանդերձ, ստորագիր պետութիւնները, ներառեալ Թուրքիան, չմերժեցին և չէին կրնար մերժել Սևրի դաշնագիրը՝ ոչ ըստ ձևի, ոչ ըստ էութեան: Հետևաբար անոնք ձախաւեր փորձեր կատարեցին զայն փոխարինելու: Բայց բոլոր փորձերը մնացին ապարդիւն՝ չկարենալով իրականօրէն փոխարինել Սևրը:

1920 դեկտեմբեր 2էն սկսեալ՝ Հայաստանի և Թուրքիոյ միջև սահմանագիծը իրողական (de facto) հանգամանք

ունի, բայց ոչ իրաւական (de jure): Բուն իրաւական հանգամանքով սահմանագիծը հաստատուեցաւ Սևրի դաշնագրի տրամադրութեամբ և Ուիլսընի իրաւարար վճիռով: Թուրքիա փորձեց և կը շարունակէ փորձել Սևրը փոխարինել այլ համաձայնագրերով, որպէսզի իրաւականացուի ներկայ սահմանագիծը, և վերջ դրուի ամբողջական Հայաստանի սահմանագծումին:

ա. Ալեքսանդրապոլի դաշնագիրը: Սևրը փոխարինելու և վերջնականապէս թաղելու թրքական առաջին փորձը 1920 դեկտեմբեր 2ի Ալեքսանդրապոլի դաշնագիրն էր: Թրքական մուրճի և պոլշևիկեան սալի միջև բռնուած Հայաստանի Հանրապետութիւնը ստիպողաբար կ'ենթարկուէր թրքական պարտադրանքներուն: Այս դաշնագրով Հայաստան կը հրաժարէր Սևրի դաշնագրէն: Բայց այս դաշնագիրը զուրկ էր որևէ իրաւականութենէ: Հայաստանի Հանրապետութեան պատուիրակութիւնը նախկին վարչապետ Ալեքսանդր Խատիսեանի գլխաւորութեամբ դիտմամբ երկարաձգեց բանակցութիւնները մինչև դեկտեմբեր 3ի լուսցող ժամերը: Երբ ստորագրուեցաւ դաշնագիրը, արդէն իսկ օր մը առաջ՝դեկտեմբեր 2ի կէսօրէ ետք ժամը 5ին, Հայաստանի պետական լիազօրութիւնները ստանձնած էր պոլշևիկեան Յեղկոմը: Իրենց կարգին Քեմալ Աթաթուրքի ներկայացուցիչները իրաւասու չէին Օսմանեան պետութեան անունով դաշնագիր ստորագրելու:

բ. Մոսկուայի համաձայնագիրը: Սևրը փոխարինելու թրքական երկրորդ փորձը 1921 մարտ 16ի Մոսկուայի համաձայնագիրն էր՝ կնքուած Ռուսիոյ Սոցիալիստական Դաշնակցային Խորհրդային Հանրապետութեան և Թուրքիոյ Ազգային մեծ ժողովին միջև: Համաձայնագիրը, ի միջի այլոց, կը տրամադրէր նաև առկայ Հայաստան-Թուրքիա սահմանագծի վերջնականացման: Սակայն սոյն համաձայնագիրը իր կարգին անվաւեր էր, որովհետև միջազգային օրէնքի հասկացողութեամբ իբրև պետութիւն գոյութիւն չունէին ստորագիր երկու կողմերը: Միաժամանակ, համաձայնագրի՝ Հայաստանին վերաբերող տրամադրութիւնները ի զօրու չէին Հայաստանի համար, որովհետև Հայաստան ոչ մասնակից կողմ էր և ոչ ալ գոյութիւն ունէր իբրև պետութիւն:

գ. Կարսի դաշնագիրը: Թրքական կողմը շարունակեց Սևրի դաշնագրի և ուիլսոնեան վճիռի շրջանցման ու Հայաստանի հետ սահմանագծի վերջնականացման նոր սադրանքները: 1921 հոկտեմբեր 13ին Կարսի մէջ Խորհրդային Հայաստանի և Մուսթաֆա Քեմալի ներկայացուցիչները ստորագրեցին դաշնագիր մը՝ հաստատելու համար Թուրքիոյ և Հայաստանի միջև գոյութիւն ունեցող սահմանագիծը: Կարսի դաշնագիրը նախորդող երկու դաշնագրերու հետևողութեամբ զուրկ էր իրաւական հիմունքներէ և վաւերականութենէ, որովհետև Խորհրդային Հայաստանի կողմէ ստորագիր իշխանութիւնը Մոսկուան էր, իսկ թրքական կողմէն Մուսթաֆա Քեմալի ներկայացուցիչը չէր լիազօրուած պաշտօնական օսմանեան կառավարութեան կողմէ:



դ. Լօզանի դաշնագիրը: 1923 յուլիս 24ին Թուրքիոյ և դաշնակից ուժերու միջև կնքուած Լօզանի դաշնագիրը յատուկ պարագայ մըն է միջազգային օրէնքի դիտանկիւնէն: Այս օրինական դաշնագիրը, ըստ ձևի, ըստ էութեան և ըստ ամենայնի, առանձին համաձայնագիր մըն է: Բայց Թուրքիան, արևմտեան պետութիւնները և մինչև իսկ պատմաբանները զայն կը ներկայացնեն որպէս Սևրի դաշնագիրը փոխարինող նոր համաձայնագիր մը: Սակայն, միջազգային օրէնքի հիմամբ, Լօզանը չփոխարինեց և չէր կրնար փոխարինել Սևրը: Այս երկու դաշնագրերը առաջին հերթին իրարու հետ չեն առնչուիր, որովհետև կ'ընդգրկեն իրարմէ տարբեր նիւթեր: Երկրորդ՝ անոնց ստորագիր պետութիւնները նոյնը չեն և նոյն նպատակները չունին: Իրականութեան մէջ Լօզանի դաշնագիրը հաստատումն է Սևրի դաշնագրով ճշդուած Հայաստան-Թուրքիա այն սահմանագիծին, որ ցարդ կը մնայ գործադրելի: Շատ յատկանշական է Լօզանի դաշնագրի 16րդ յօդուածը, որ բառացիօրէն կը տրամադրէ, թէ Թուրքիա կը հրաժարի իր բոլոր իրաւունքներէն և իրաւատիրութենէն բոլոր այն տարածքներուն մէջ, որոնք մաս չեն կազմեր Լօզանի դաշնագրի քննարկման: Յստակօրէն, Սևրի դաշնագրով Ուիլսոնեան իրաւարար վճիռին հիմամբ ճշդուած Հայաստանի հողատարածքի սահմանները մաս չէին կազմեր Լօզանի քննարկումներուն:

Դ. Սևրի դաշնագրի օրինականութիւնը

Պետութիւններու միջև դաշնագրի մը վաւերացումը միջազգային օրէնքով պահանջուած պարտաւորութիւն է:

Գոյութիւն ունին միջազգային օրէնքի և միջպետական յարաբերութիւններու վերաբերող համընդհանուր ընդունուած սկզբունքներ, որոնք ի զօրու են նաև ստորագրուած դաշնագրի մը վաւերացման պարագային:

Առաջին՝ դաշնագրի ստորագիր պետութիւն մը բարոյապէս պարտաւորուած է չմերժելու իր ստորագրած դաշնագրին վաւերացումը: Երկրորդ՝ նման մերժում կրնայ իրաւական հետևանքներ ունենալ, երբ դաշնագրի չվաւերացումով կողմերէն մին վնաս կը կրէ: Երրորդ՝ ստորագիր պետութիւնները պէտք է ցուցաբերեն բարի կամեցողութիւն (good faith) և, ըստ այնմ, դաշնագիրը ներկայացնեն վաւերացման ու զերծ մնան դաշնագիրը տապալելու արարքներէ:

Բնականաբար, դաշնագրի մը վաւերացումը կամ վաւերացումի մերժումը որևէ պետութեան օրէնսդիր իշխանութեան իրաւունքն է: Սևրի պարագային ստորագիր պետութիւնները դաշնագիրը չներկայացուցին իրենց օրէնսդիր իշխանութիւններուն: Անոնք մեղանչեցին վերոնշեալ միջազգային սկզբունքներուն դէմ՝ Սևրի տրամադրութեանց հակոտնեայ քայլերու դիմելով:

Իրենց արարքներով Սևրի ստորագիր պետութիւնները հիմնովին խախտեցին (material breach) Սևրի

Փարիզի խաղաղութեան վեհաժողովը

դաշնագիրը՝ դիտաւորեալ կերպով զայն վաւերացումի չներկայացնելով: Դաշնագիրը ինքնին օրինական էր՝ միջազգային օրէնքի կանոններուն համաձայն: Ստորագիր պետութիւնները չվաւերացուցին և չգործադրեցին դաշնագիրը, բայց անոնց այս արարքը իր միջազգային օրինականութենէն չզրկեց Սևրի դաշնագիրը, որովհետև ցարդ ոչ մէկ միջազգային համաձայնագիր փոխարինած է Սևրի դաշնագիրը:

Հետևաբար այսօր Սևրը կը գոյատևէ իբրև միջազգային իրաւական փաստագիր: Առ այդ, Սևրի միջազգային օրինականութեան պահպանումը իրաւական ուժ կու տայ հոն արձանագրուած և ստորագրուած յօդուածներուն ու տրամադրութիւններուն: Անոր յօդուածները և տրամադրութիւնները ոչ միայն իրաւական նախընթացի ուժ ունին, այլև կիրարկելի իրաւական պայմաններ են:

Օրինակ՝ արդէն Երկրորդ համաշխարհային պատերազմի աւարտին՝ 1945 օգոստոս 8ին, դաշնակիցները կնքեցին Լոնտոնի համաձայնագիրը (1945, London Agreement), ուր որդեգրեցին պատերազմական ոճիրներու համար Միջազգային զինուորական ատեաններու ուխտը (Charter of International Military Tribunal): Այս ուխտին թիւ 6-գ յօդուածը կը վերաբերի ցեղասպանութեան ոճիրի դատավարութեան: Դատական այս գործընթացը միջազգային օրէնքով հիմնաւորելու համար անոնք դիմեցին անվաւեր մնացած Սևրի դաշնագրի թիւ 230 յօդուածին, որ կը նախատեսէր զինուորական ատեաններու ստեղծումը՝ մարդկութեան դէմ գործուած ոճիրներուն համար: Այսպէս, Սևրի դաշնագրի յօդուածներէն մէկը՝ թիւ 230ը, նախընթաց ծառայեց Լոնտոնի համաձայնագրի ստորագիր պետութեանց: Այլ խօսքով, պահելով իր օրինականութիւնը, չվաւերացուած Սևրի դաշնագրի տրամադրութիւնները իրաւական ուժի մէջ էին դաշնակիցներուն համար:

Իբրև օրինականութիւնը պահող դաշնագրի՝ Սևրի

տրամադրութիւնները, ներառեալ Հայաստանի ու հայութեան վերաբերող բաժինները, կը շարունակեն պահել իրենց իրաւական ուժը: Հարցը անոնց գործադրումն է, ինչպէս անոր յօդուածներէն մին գործադրուեցաւ Լոնտոնի համաձայնագիրին ճամբով:

Ե. Հայոց ազգային ուխտի պատուանդանը

Որքան ալ ճշմարտութիւն ըլլայ Սևրի անվաւեր մնալու հանգամանքը, իբրև միջազգային իրաւական փաստագիր՝ ան կը շարունակէ պահել իր միջազգային օրէնքի իրաւական, բարոյական և քաղաքական հեղինակութիւնը: Իբրև փաստագրի՝անոր տրամադրութիւնները ի զօրու են և ըստ ամենայնի՝ գործադրելի: Շնորհիւ անկախաբար գոյութիւն ունեցող և տակաւին ի զօրու նախագահ Ուիլսընի իրաւարար վճիռին՝ ամբողջական Հայաստանով սահմանուած հայութեան իրաւունքները կը մնան ի զօրու և գործադրելի: Մնացածը Հայաստանի և հայութեան կողմէ զանոնք իրականացնելու գիտակցութեան, դիւանագիտական հետևողական աշխատանքի և քաղաքական կամքի հարց է:

Մեր պարտաւորութիւնն է հետևողական ըլլալ և հաւատարիմ մնալ այդ աշխատանքին ու կամքին, որովհետև ինչպէս Սևրի դաշնագրէն առաջ, այնպէս և ատկէ ետք Հայ դատը կը մնայ Հայաստանի ու հայութեան գոյատևելիութեան գլխաւորագոյն օրակարգը: Բոլոր ժամանակներէ աւելի այս օրակարգին համար պէտք է ձևաւորուի Հայոց ազգային ուխտը, ճիշդ այնպէս, ինչպէս ասկէ հարիւր մէկ տարի առաջ բանաձևեց և ձևաւորեց Հայաստանի Հանրապետութիւնը՝ Միացեալ և Անկախ Հայաստանի ակտով:

Սփիւռքի հայութիւնը իր բոլոր քաղաքական հոսանքներով և գաղութներով իր բանաձևումը տուած է մեր ազգային ուխտին: Սփիւռքահայութեան համար բռնագրաւուած հայրենի հողերը պէտք է վերադարձուին իրենց միակ իրաւատիրոջ՝ հայութեան: Սփիւռքահայութիւնը, հիմնուելով այս բանաձևումին վրայ, երբեք չէ դիմած և պիտի չդիմէ յայտարարութիւններու կամ արարքներու, որոնք ուղղակիօրէն կամ անուղղակիօրէն կը դրժեն Սևրի դաշնագրի և ուիլսոնեան վճիռի տրամադրութիւնները:

Նոյն կեցուածքը պէտք է ակնկալել նաև Հայաստանէն և հայրենի ժողովուրդէն: Դժբախտաբար, վերանկախացած Հայաստանի մէջ գտնուեցան նախագահներ և վարչապետներ, որոնք իրենց ելոյթներով Թուրքիայէն հողային պահանջի հարց չեն տեսներ: Նման դրսևորումներ կը հարուածեն Սևրի դաշնագրի և ուիլսոնեան վճիռի իրաւականութեան:

Սևրը և զայն ամբողջացնող իրաւարար վճիռը Հայոց ազգային ուխտի պատուանդանին պէտք է վերածել: Անոնք պէտք է մաս կազմեն հայրենի դիւանագիտութեան և արտաքին յարաբերութեանց օրակարգերուն: Դժբախտաբար, տակաւին այդպէս չէ: Վերջերս հայրենի կառավարութիւնը հրապարակեց Հայաստանի ազգային անվտանգութեան ռազմավարութիւնը, ուրկէ ակնյայտօրէն կը բացակայէր հայութեան իրաւազրկումի վերացման ռազմավարական թիրախը:

Իբրև պետութիւն, ժողովուրդ և Սփիւռք՝ մենք պարտաւոր ենք ունենալ Սևրի ու ուիլսոնեան վճիռի պատուանդանին վրայ կառուցուած մեր ազգային ուխտը: Հոս հարցը մեր իրաւազրկումի վերացման և իրաւունքներու վերականգնման մասին է: Հոս հարցը իրաւազրկումի ենթարկուած մեր հայրենիքի ապագայ գոյատևելիութեան մասին է: Հոս հարցը արդարութեան մասին է, որ կը պահանջէ հպարտութիւն և խիզախութիւն, ոչ թէ օտարին՝ թուրքին, ռուսին, եւրոպացիին կամ ամերիկացիին հաճոյանալու կորաքամակութիւն: ■

Սևրը և քրդերը

Արամ Սայիյան
Պատմական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ պատմ. ինստիտուտի ընդհանուր բաժնի ավագ գիտաշխատող

1918 թ. հոկտեմբերի 30-ին Մուդրոսի զինադադարով Օսմանյան կայսրությունն ընդունեց իր պարտությունն Առաջին աշխարհամարտում և անձնատուր եղավ: 1919 թ. հունվարին Փարիզում իր աշխատանքները սկսեց Խաղաղության վեհաժողովը, որը պետք է նոր աշխարհակարգ սահմաներ աշխարհում: Ակնհայտ էր, որ պարտված երկրները կորցնելու էին գրեթե ամեն ինչ, այդ թվում՝ իրենց տարածքների մի մասը: Դա վերաբերում էր նաև Օսմանյան կայսրությանը, առավել ևս, որ նրա արաբական գաղութներն արդեն գրավված էին Անտանտի զորքերի կողմից: Մյուս կողմից, իրենց պատմական հողերն էին պահանջում նրանց դաշնակիցներ Հունաստանը և նորաստեղծ Հայաստանի Հանրապետությունը: Դաշնակից երկրները հակված էին բավարարելու նրանց պահանջները, ինչը նշանակում էր, որ Արևմտյան Հայաստանը պետք է մտներ Հայաստանի կազմի մեջ: Այս վերջին հանգամանքը լուրջ անհանգստություն առաջ բերեց քրդական շրջանակներում, որոնք սկսեցին պայքարել այդ ծրագրերի դեմ: Խնդիրը հայկական կողմի համար բարդանում էր նրանով, որ Հայաստանին անցնելիք տարածքներում հայերը կազմում էին շատ չնչին տոկոս, իսկ բնակչության գերակշիռ մեծամասնությունը կազմում էին քրդերը, որոնք զինված էին և ունեին մեծաքանակ մարտունակ ուժեր:

Ինչ վերաբերում է քրդերին, ապա պետք է նշել, որ երիտթուրքերի՝ իշխանության գալուց և պանթուրքիզմը որպես պետական գաղափարախոսություն որդեգրելուց հետո լուրջ տարաձայնություններ են ծագում վերջինների և քրդական վերնախավի միջև: Քրդերի մեջ բարձրանում է ազգային ինքնագիտակցությունը, սկսում է լույս տեսնել քրդալեզու մամուլ, բացվում են քրդական քաղաքական և հասարակական կազմակերպություններ: Պատերազմից հետո այդ գործընթացն ավելի է արագանում:

Քրդերը, ըստ իրենց քաղաքական հայացքների, բաժանված էին հինգ հոսանքների:

Առաջին հոսանքը կողմ էր Քրդստանի լիակատար անկախության ձեռքբերմանը: Հետագայում այս շարժման ղեկավարները և համախոհները ստեղծեցին «Քրդստանի անկախության կոմիտե» կազմակերպությունը:

Երկրորդ հոսանքը ցանկանում էր Քրդստանի ներքին ինքնավարություն թուրքական պետականության շրջանակներում: Այն գլխավորում էր սենատոր սեիդ Աբդուլ Քադիրը: Այս հոսանքի կողմնակիցները ցանկանում էին նաև վերադարձնել մինչերիտթուրքական հեղափոխությունը՝ սուլթանական ժամանակաշրջանում իրենց ունեցած դիրքը: Նրանք չէին ուզում խզել իրենց ավանդական հարաբերությունները Ստամբուլի վերնախավի հետ, բայց նաև չէին ուզում մնալ ենթակա ազգի կարգավիճակում: Հիսուն տարի անց, խոսելով այս հոսանքի վարքագծի մասին, Քամուրան Բադրխանը մասնավորապես ընդգծել է. «Մեծամասնությունը մեկ ոտքով քրդական ճամբարում էր, իսկ մյուս ոտքով՝ դեռ

օսմանյան-իսլամական վերնախավում: ...նրանք բոլորն էլ ուզում էին նախարարներ դառնալ»[1]: Այս հոսանքի անդամները կազմում էին «Քուրդիստանի վերածնունդի ընկերություն» կազմակերպության մի մասը:

Երրորդ հոսանքը կողմնակից էր Քրդստանի անկախությանը Իրանի հովանավորության տակ: Այս հոսանքի ջատագովները գտնում էին, որ ընտրում են «ոսկե միջինը», այն է՝ քրդերը չեն լինի ոչ թուրքական, ոչ էլ անգլիական տիրապետության տակ, այլ արյունակից և կրոնակից թույլ Իրանի կազմում: Մասնավորապես հետագայում այդ տեսակետն էր պաշտպանում Շերիֆ փաշան:

Չորրորդ հոսանքը, որի կողմնակիցները մեծ թիվ էին կազմում հատկապես Հարավային Քրդստանում, կողմնակից էր քրդական պետության ստեղծմանը Մեծ Բրիտանիայի հովանավորության ներքո:

Հինգերորդ հոսանքը, որն իրեն ակտիվորեն դրսևորեց քեմալական հեղափոխության ժամանակ, հանդես էր գալիս քրդերի՝ թուրքերին լիակատար ենթարկվելու օգտին: Այս հոսանքում հիմնականում ընդգրկված էին այն քրդերը, որոնք քաղաքացիական, զինվորական և դիվանագիտական ծառայության մեջ էին, ինչպես նաև պատգամավորներ, թրքացած քաղաքական գործիչներ, որոնք կարևոր դեր էին խաղում Օսմանյան կայսրության, իսկ հետագայում՝ քեմալական Թուրքիայի քաղաքական կյանքում: Նրանք գտնում էին, որ քրդերը, չունենալով դարերով մշակված պետական ավանդույթ, ի զորու չէին լինելու ինքնուրույն պետություն ստեղծելու, և որպեսզի չնվաճվեին Անգլիայի ու Հայաստանի կողմից, պետք է մնային Թուրքիայի կազմում:

Քրդական հարցը Փարիզում պաշտպանելու նպատակով այս հոսանքները հիմնում են քաղաքական կուսակցություններ: Պետք է նշել, որ քրդական քաղաքական կազմակերպությունների մեծ մասը գտնվում էր Ստամբուլում, Կահիրեում և Եվրոպայում: 1918 թ. Սեիդ Աբդուլքադիրը՝ հանրահայտ շեյխ Ուբեյդուլլահի որդին, Ստամբուլում հիմնում է

«Քրդական վերածնունդի ընկերությունը», հայտնի Բադրխանների տոհմից Սուրեիա Բադրխանը Կահիրեում սկսում է հրատարակել «Քուրդիստան» թերթը: Եվրոպայում քրդական շահերը պաշտպանելու պատրաստակամություն է հայտնում Մուհամեդ Շերիֆ փաշան:

1919 թ. փետրվարի 26-ին Տասի խորհրդի նիստում ելույթ է ունենում հայկական պատվիրակության ղեկավար Ավետիս Ահարոնյանը, իսկ մարտի 22-ին՝ քրդական պատվիրակության ղեկավար Շերիֆ փաշան: Երկու կողմերի ելույթներում ներկայացված պահանջներն աչքի էին ընկնում ծայրահեղություններով՝ առանց հաշվի առնելու տվյալ պահի իրականությունը և սեփական հնարավորությունները: Ա. Ահարոնյանը պահանջում էր ստեղծել «Մեծ Հայաստան», որի մեջ պետք է մտնեին Կիլիկիան, ներառյալ Մարաշը, Էրզրում, Բիթլիս, Վան, Խարբերդ, Սվաս վիլայեթներն ամբողջությամբ, Դիարբեքիր վիլայեթի հյուսիսային մասը և Տրապիզոնի վիլայեթի արևելյան մասը՝ դեպի Սև ծով ելքով: Իր հերթին Շերիֆ փաշան իր ելույթում կտրականապես մերժեց հայկական կողմի պահանջները՝ դրանք անվանելով «Հայաստանի իմպերիալիստական հավակնություններ»: Նա պահանջում էր քրդական անկախ պետության ստեղծում Վիլսոնի 14 դրույթների համաձայն, դեմ էր քրդերի կողմից զավթված հայկական հողերն իրենց օրինական տերերին վերադարձնելուն և կոչ էր անում ստեղծելու միջազգային հանձնաժողով, որը պետք է քրդական պետության մեջ միավորեր այն հողերը, որոնց բնակչության մեծամասնությունը կազմում էին քրդերը: Ապագա Քրդստանի մեջ պետք է մտներ նաև իրանական Քրդստանը: Այդ ելույթում Շերիֆ փաշան ներկայացնում էր ապագա Քրդստանի սահմանները՝ արևմուտքում՝ Էրզրում-Էրզինջան-Արաբկիր-Դիվրիգ գիծը, հյուսիսում՝ մինչև 1914 թ. ռուս-թուրքական սահմանը, որն այդ ժամանակ Հայաստանի Հանրապետության և Օսմանյան կայսրության սահմանն էր, հարավում՝ Սինջարի լեռներով մինչև Թել-Աֆար, Էրբիլ, Քիրքուք, Սուլեյմանիե, Սեննե, արևելքում՝ Ռևանդուզ-Բաշքալե գծով մինչև իրանական սահմանը, այնուհետև՝ իրանական սահմանով մինչև Արարատ լեռը[2]:

1919 թ. երկրորդ կեսին քեմալական շարժումը շարունակում էր օրեցօր թափ հավաքել: Դրան զուգահեռ կարծրանում էր սուլթանական կառավարության դիրքորոշումը, ինչպես նաև խորանում էին հակասությունները դաշնակիցների ճամբարում՝ մի կողմից՝ Մեծ Բրիտանիայի և մյուս կողմից՝ Ֆրանսիայի ու Իտալիայի: Հայ-քրդական հակասությունը թույլ չէր տալիս գալ վերջնական որոշման, ինչից էլ օգտվում էր թուրքական կողմը: Այս խնդիրը լուծելու համար բրիտանացիները սկսեցին ճնշում գործադրել երկու կողմերի վրա՝ միասնական դիրքերից հանդես գալու համար: Փարիզում բրիտանական հանձնաժողովի անդամները հանդիպում են հայկական պատվիրակության ղեկավար Պողոս Նուբար փաշայի հետ և, բացատրելով ստեղծված իրավիճակը, խորհուրդ տալիս նրան միանալու քրդական պատվիրակությանը: Պողոս Նուբար փաշան անմիջապես համաձայնում է: Իր համաձայնությունն է տալիս նաև Շերիֆ փաշան, և

Մերձավոր Արևելքի քարտեզը ըստ Սևրի պայմանագրի

1919 թ. նոյեմբերի 20-ին նրանք հռչակում են համատեղ կազմված մի հուշագիր, որում ասվում էր, որ երկու պատվիրակությունների ղեկավարները որոշել են միավորել իրենց ջանքերը: Հուշագրում մասնավորապես նշվում էր, որ հայ և քուրդ ժողովուրդները, ցանկանալով ազատագրվել թուրքական ծանր լծից, խնդրում են դաշնակից տերություններին աջակցել Միացյալ և Անկախ Հայաստանի ու Անկախ Քրդստանի ստեղծմանը՝ ըստ ազգային սկզբունքի, և օժանդակել իրենց ինչպես տեխնիկապես, այնպես էլ տնտեսապես: Ինչ վերաբերում է կարևոր՝ հողային խնդրին, ապա ապագա պետությունների միջև սահմանների որոշումը կողմերը թողնում էին դաշնակից տերություններին[3]:

Համաձայնագիրն առաջ բերեց ինչպես հայկական, այնպես էլ քրդական քաղաքական կուսակցությունների և հասարակական կազմակերպությունների դժգոհությունը: Հայերը մեղադրում էին Պողոս Նուբար փաշային հայկական հողերի մեծ մասը քրդերին զիջելու մեջ, որոնք թուրքերին հավասար մեղավոր էին հայկական կոտորածների համար, իսկ քրդերն էլ մեղադրում էին Շերիֆ փաշային արդեն քրդաբնակ հողերը հայերին վերադարձնելու մեջ:

Ի վերջո, Շերիֆ փաշայի հեղինակությունն այն աստիճանի ընկավ քրդերի շրջանում, որ նա ստիպված էր Սևրի պայմանագրի կնքումից մի քանի օր առաջ հրաժարական տալ քրդական պատվիրակության ղեկավարի պաշտոնից: Սա խիստ թուլացրեց քրդերի դիրքերը (ի տարբերություն հայերի, որոնք կարողացան իրենց մի շարք պահանջներն ընդունել տալ դաշնակիցներին), քանի որ այդքան կարճ ժամանակահատվածում նրանք չէին կարող նոր ղեկավար ընտրել: Որպես արդյունք՝ քրդերը չկարողացան Սևրում պատվիրակություն ունենալ, և փաստացի նրանց ճակատագիրը որոշվեց առանց իրենց ներկայության:

Սակայն հասկանալի էր, որ քրդերին պետականություն տալու կամ չտալու հարցը կախված չէր Շերիֆ փաշայից: Գլխավոր դերակատարները, իհարկե, Մեծ Բրիտանիան ու Ֆրանսիան էին, և նրանց հակամարտությունից էր կախված քրդերի կարգավիճակը: Ֆրանսիան, պարտություն կրելով բրիտանացիներից Մոսուլի հարցում, ամեն ջանք գործադրում էր, որպեսզի բրիտանական հովանավորության տակ գտնվող Մոսուլից

հյուսիս ընկած տարածքներում քրդական պետություն չստեղծվի: Բրիտանական արտաքին գերատեսչության աշխատակից Վանսիթարթին ուղղված հուշագրում Ֆրանսիայի արտգործնախարարության քաղաքական և առևտրի բաժնի ղեկավար Բերտելոն գրում էր, որ ապագա Քրդստանը չպետք է Հայաստանի հետ միասին լինի, և նրա սահմանները պետք է ձգվեն Մոսուլի վիլայեթի հյուսիսային սահմանից մինչև Վանա լիճ և Դիարբեքիր: Ֆրանսիան նույնիսկ համաձայն էր, որ Քրդստանի վրա տարածվեր Թուրքիայի գերիշխանությունը:

Բրիտանական կողմը, որպես պատասխան, 1920 թ. փետրվարին կազմում է Քրդստանի վերաբերյալ իր տեսլականը, համաձայն որի՝ Մոսուլի վիլայեթից (որն արդեն զբաղեցված էր նրանց կողմից) հյուսիս ստեղծվելիք Քրդստանում չպետք է լիներ ոչ մի մանդատ (այդպիսով նրանք չեզոքացնում էին ֆրանսիացիների՝ այդ շրջաններում ամրանալու փորձերը), և այնտեղ բացառվում էր թուրքական գերիշխանությունը: Քրդերն իրենք պետք է որոշեին՝ պետք է ունենան մեկ միասնական պետությո՞ւն, թե՞ մի քանի ազատ տարածքներ՝ ըստ կրոնական և ցեղային պատկանելության: Նրանց հարցը պետք է լուծվեր հայերի խնդրի հետ և այլն: Այդպիսով նրանք լուծում էին երկու խնդիր՝ ստեղծել քրդական մի քանի փոքր պետություններից բուֆերային գոտի Մոսուլի վիլայեթի ու Թուրքիայի միջև և չեզոքացնել ֆրանսիացիների հավակնություններն այդ շրջանում:

1920թ. փետրվարի 10-ից մինչև մարտի 12-ը Լոնդոնում դաշնակից տերությունների վեհաժողովում հստակեցվեցին Թուրքիայի հետ կնքվելիք հաշտության պայմանագրի հիմնական կետերը, որոնք վերջնական տեսք ստացան նույն թվականի ապրիլի 19-26-ը կայացած Սան Ռեմոյի վեհաժողովում:

1920թ. օգոստոսի 10-ին Փարիզի Սևր արվարձանում հաղթանակած երկրները Օսմանյան կայսրության հետ ստորագրեցին հաշտության պայմանագիրը: Քրդական հարցին վերաբերում էին երեք հոդվածներ՝ 62-րդը, 63-րդը և 64-րդը: 62-րդ հոդվածում նշվում էր, որ Կոստանդնուպոլսում նստող 3 հոգանոց հանձնաժողովը, որի անդամներին նշանակում էին Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Իտալիայի կառավարությունները, դաշնագրի՝ ուժի մեջ մտնելուց հետո 6 ամսվա ընթացքում Եփրատից արևելք, Հայաստանից հարավ ու Սիրիայի, Թուրքիայի սահմանից և Միջագետքից հյուսիս ընկած քրդական գերակշիռ բնակչությամբ տարածքների համար ինքնավարության նախագիծ պետք է ներկայացնի: 63-րդ հոդվածում նշվում էր, որ Օսմանյան կայսրության կառավարությունը համաձայն է ընդունել և իրագործել 62-րդ հոդվածում նշված հանձնաժողովի որոշումները, իսկ 64-րդ հոդվածում էլ ասվում էր, որ եթե դաշնագրի՝ ուժի մեջ մտնելուց 1 տարի անց 62-րդ հոդվածում նշված տարածքներում բնակվող քրդերը դիմեն Ազգերի լիգայի հանձնաժողովին՝ հայտնելով, որ ցանկանում են անկախանալ Թուրքիայից, և եթե հանձնաժողովը որոշի, որ քրդերը կարող են անկախ լինել, Թուրքիան պետք է համաձայնի և հրաժարվի այդ տարածքների նկատմամբ իրավունքներից: Բացի այդ, 64-րդ հոդվածի համաձայն, քրդական անկախ պետության ստեղծման դեպքում դաշնակից ուժերն առարկություն չեն ունենա, եթե Մոսուլի վիլայեթում ներառված քրդաբնակ տարածքները վճռեն միանալ քրդական պետությանը[4]:

Թվում էր, թե Թուրքիայում բնակվող քրդերը վերջապես ստանալու էին իրենց այդքան բաղձալի անկախությունը: Սակայն Քեմալի միլլի շարժման հաղթանակը և դրան հետևած Լոզանի հաշտության պայմանագիրը, որով, փաստորեն, դաշնակից տերություններն ուժը կորցրած ճանաչեցին Սևրի պայմանագիրը, խորտակեցին նրանց հույսերը: Այս ամենով հանդերձ՝ Սևրի պայմանագրի կետերի իրագործումը քրդերի համար դարձավ հիմնական նպատակ, և 20-30-ական թվականներին Թուրքիայում տեղի ունեցած հակաթուրքական ապստամբությունների մեծ մասի հիմնական պահանջներից մեկը դա էր:

Ինչ վերաբերում է այժմյան քրդական իրականությանը, ապա պետք է նշել, որ ինչպես և անցյալում, այնպես էլ հիմա քրդական հասարակությունը բաժանված է իրար դեմ հակամարտող բազմաթիվ ուժերի: Սակայն Սևրի պայմանագրի նկատմամբ քրդական հասարակության մեջ կա սառը վերաբերմունք: Աբդուլլահ Օջալանը գտնում է, որ Սևրի պայմանագիրը կապիտալիստական կայսրությունների՝ Անգլիայի և Ֆրանսիայի միջև 1916 թվականին կնքված Սայքս-Պիկոյի գաղտնի համաձայնագրի շարունակությունն էր, և Սևրի պատճառով Քրդստանի՝ արդեն չորս մասերի բաժանումը ստացավ իրավական տեսք, որն ամրողջացվեց Լոզանի պայմանագրի ժամանակ[5]: Իրաքում քրդական ինքնավարության ղեկավարությունը ստանձնած Քրդստանի դեմոկրատական կուսակցությունը, որն այժմ գլխավորում է Նեչիրվան Բարզանին, ունի ընդգծված թուրքամետ դիրքորոշում, և թե ինչ վերաբերմունք ունի Սևրի պայմանագրի նկատմամբ, երևի թե կարիք չկա նշելու: Քրդական ինքնավարության մյուս զորեղ ուժի՝ Թալաբանիների (Քրդստանի հայրենասիրական միություն) դիրքորոշումը գրեթե նույնն է: Ամենայն հավանականությամբ, քրդական քաղաքական ուժերը գտնում են, որ ներկայիս արագ փոփոխվող ռազմաքաղաքական իրադրության պայմաններում Սևրի պայմանագիրն այլևս կորցրել է իր արդիականությունը, առավել ևս, որ այն ընդունելու դեպքում ստիպված պետք է նաև հաշվի առնվեն հայկական կողմի պահանջները, որոնք ընդունել էր Շերիֆ փաշան:

Օգտագործված աղբյուրներ և գրականության ցանկ

McDowall D. A modern history of the Kurds. London, 2005, p. 124.

Տե՛ս Лазарев М. Империализм и курдский вопрос 1917-1923. Москва, 1989, էջ 137:

Տե՛ս Սասունի Կ., Քիւրտ ազգային շարժումները և հայ-քրտական յարաբերութիւնները, Պեյրութ, Համազգայինի տպարան, 1968, 331 էջ:

Տե՛ս Treaty of Peace with Turkey, Signed at Sevres August 10, 1920, http://treaties.fco.gov.uk/docs/pdf/1920/TS0011.pdf: Տե՛ս նաև Սասունի Կ., նշվ. աշխ., էջ 237-238:

Տե՛ս https://www.ozgurpolitika.com/abdullah-ocalan-ortadodu-da-ulus-devlet-ve-sykes-picot/:

Թուրքիայի մղձավանջը. Սևրի պայմանագրի նկատմամբ թուրք «գիտական» շրջանակների նոր մոտեցումները

Մելինե Անումյան
Թուրքագետ, պատմական գիտությունների թեկնածու

Թեև հայտնի են թուրքական պնդումներն այն մասին, թե Սևրի պայմանագիրը վավերական չէ ու երբեք էլ չի եղել, այնուամենայնիվ սույն դաշնագիրը 100 տարի շարունակ մղձավանջ է եղել թուրք ժողովրդի և հատկապես Թուրքիայի Հանրապետության քաղաքական ու գիտական շրջանակների համար: Այս ահը երբեմն այնքան ցայտուն է դրսևորվել, որ մինչև իսկ շրջանառության մեջ է մտել «Սևրի սինդրոմ» (թուրք.՝ Sevr Sendromu) արտահայտությունը:

Վերջին տարիներին որոշ թուրքական «գիտական» շրջանակներ, մասնավորապես Թուրքիայի պաշտոնական պատմագրության խոսափողը հանդիսացող Թուրքական պատմագիտական ընկերության (Türk Tarih Kurumu) ներկայացուցիչները փորձում են նոր մոտեցումներ մշակել Սևրի պայմանագիրը թուրք հասարակության շրջանում և Թուրքիայի կրթական հաստատություններում ներկայացնելու ուղղությամբ:

Այսպես, օրինակ, ըստ «Միլլիյեթ» պարբերականի՝ տվյալ ժամանակաշրջանում Թուրքական պատմագիտական ընկերության նախագահ դոկտոր, պրոֆեսոր Ռեֆիկ Թուրանը 2018 թ. օգոստոսի 9-ին հայտարարել է, թե Պատմագիտական ընկերությունն աշխատանքներ է սկսել Թուրքիայի կրթական հաստատությունների նոր ուսումնական ծրագրերում Սևրի դաշնագիրը որպես ոչ թե պայմանագիր, այլ ընդամենը փաստաթուղթ ներկայացնելու ուղղությամբ:

Ռեֆիկ Թուրանը մասնավորապես նշել է. «...Դա կարող է ոչ էական թվալ, սակայն կարևոր է, քանի որ Սևրը մեր երեխաների և (թուրք) հասարակության գիտակցության մեջ որպես դաշնագիր է ընկալվում: Այնինչ խոսքը ոչ թե պայմանագրի, այլ միայն փաստաթղթի մասին»:

Թուրանն ընդգծելով, որ Մուստաֆա Քեմալ Աթաթյուրքը 1920 թ. օգոստոսի 10-ին կնքված, սակայն «անվավեր համարվող» Սևրին տվել է «Թուրք ժողովրդի դեմ կազմակերպված մեծ մահափորձ» բնութագրումը, թուրքական պետական «Անադոլու» լրատվական գործակալության հետ զրույցում շեշտում էր նաև, թե «Սևրը իրենց համար պայմանագիր չէ, քանի որ դաշնագրերը հիմնված են միջպետական փոխադարձ համաձայնության վրա, մինչդեռ Սևրի դեպքում նման բան չի եղել»:

Խեղաթյուրելով պատմական փաստերը, նաև նշում է, թե իբր Սևրի պայմանագիրը չի ստորագրվել, և հավելում. «Այսուհետև Թուրքական պատմագիտական ընկերությունը,

որպես հաստատություն, Սևրն անվանելու է «փաստաթուղթ» և պաշտոնապես հանդես է գալու «Սևրի պայմանագիր» արտահայտության օգտագործման դեմ: Երբեմն սխալ ձևով են արտահայտվում: Նման դաշնագիր չկա: Մենք սույն հարցն այդ կերպ ենք ներկայացնելու նաև մեր կրթական ծրագրերում: Թեև իրավասու չենք դա օրենքով ամրագրելու, բայց ջանքեր ենք գործադրելու, որպեսզի մեր հասարակությունն սկսի այդ ձևով ընկալել սույն փաստաթուղթը»:

Հասկանալի է, որ թուրք պատմաբանների կողմից այս մոտեցման մշակումը չի սկսվել 2018 թ., այլ շատ ավելի վաղ: Այսպես, օրինակ, 2017 թ. օգոստոսի վերջերին «Haber7.com» թուրքական լրատվական կայքէջում հրապարակվել է թուրք պատմաբան Ահմեթ Անափալլի հոդվածաշարը, որը կրում էր հետևյալ խորագիրը «Անգրագետ են բոլոր նրանք, ովքեր ասում են, թե Սևրի պայմանագիրը ստորագրվել է» : Այս թուրք կեղծարարը ևս փորձում է ներկայացնել, թե իբր «Սևրը չի ստորագրվել», ու «Թեև այն միջազգային շրջանակներում հայտնի է որպես պայմանագիր, սակայն ընդամենը «նախագիծ» մնացած մի ծրագիր է եղել»:

Ահմեթ Անափալլն սույն հոդվածում վկայակոչում էր նաև Մուստաֆա Քեմալին և այդ թեմային վերաբերող այս հատվածը ներկայացնում վերջինիս հանրահայտ «Ճառից». «...Պարոնա՛յք, Մուդրոսի զինադադարի կնքումից հետո, հաղթանակած տերությունների կողմից Թուրքիային 4 անգամ խաղաղության պայմաններ են թելադրվել: Դրանցից մեկն էլ Սևրի խաղաղության նախագիծն է, որը, առանց քննարկվելու, ներկայացրել են Անտանտի

տերությունները՝ Հունաստանի վարչապետ Վենիզելոսի մասնակցությամբ, 1920 թ.օգոստոսի 10-ին էլ ստորագրվել սուլթան Վահիդեթթինի կառավարության կողմից (ընդգծումն իմն է-Մ. Ա.)»: (...) Ինչպես տեսնում եք, Մ. Քեմալ փաշան այդ տեքստը միշտ նախագիծ է անվանում: (…) Մինչև իսկ Իսմեթ Ինյոնյուն, անգամ իր հուշերում, Սևրին անդրադառնալիս այն նախագիծ է կոչում»:

Ուշագրավ է, որ Աթաթյուրքի խոսքը մեջբերող թուրք պատմաբանը փաստորեն ակամա ընդունում է, որ Սևրի պայմանագիրն այնուամենայնիվ ստորագրվել է: Անափալքն փորձում է այդ փաստը խեղաթյուրել այն «հիմնավորմամբ», թե այս փաստաթուղթը ստորագրվել է ոչ թե քեմալականներից բաղկացած Անկարայի իշխանությունների, այլ միայն Ստամբուլի իշխանության, այն է՝ օսմանյան սուլթանի կողմից՝ անտեսելով, որ տվյալ ժամանակաշրջանում, որպես Թուրքիայի օրինական իշխանություն, այլ տերությունների կողմից ճանաչված էր միայն Ստամբուլի կառավարությունը:

Թուրք կեղծարարների այս ոչ գիտական մոտեցումը խիստ քննադատության է արժանացել անգամ որոշ թուրք պատմաբանների կողմից: Այսպես, օրինակ, հայությանը Թալեաթ փաշայի փաստաթղթերի հրապարակմամբ հայտնի թուրք պատմաբաններից Մուրադ Բարդաքչին «Հաբերթյուրք» պարբերականի 2018 թ.օգոստոսի 12-ի համարում «Ահա՛ այն Սևրի պայմանագրի փաստաթղթերը, որի մասին ասում են, թե գոյություն չունի» վերնագրով հրապարակված իր հոդվածում Ռեֆիկ Թուրանի և ընդհանրապես Թուրքական պատմագիտական ընկերության այդ մոտեցման մասին գրում է. «Պարզվում է՝ Թուրքական պատմագիտական ընկերությունն աշխատանքներ է իրականացնելու, որ այսուհետև դպրոցներում Սևրը ներկայացվի ոչ թե որպես «պայմանագիր», այլ «փաստաթուղթ», քանզի պարզվում է, որ «Սևր» անվամբ որևէ պայմանագիր գոյություն չունի: Ճիշտ է, մի փաստաթուղթ այնուամենայնիվ կա, սակայն պարզվում է, որ այն չի կարող «պայմանագիր» լինել:

Լա՛վ, մենք սովոր չենք մեր պարտությունների մասին խոսել, աշխատում ենք չհիշել դրանք մինչև իսկ այն դեպքերում, երբ դա անհրաժեշտ է մեր սխալներն ուղղելու համար: (…)

Սևրը Թուրքիայի կողմից չի վավերացվել, սակայն թուրք պատվիրակները ստորագրել են այն, իսկ սույն դաշնագրի տակ իրենց ստորագրությունները դրած մյուս պետություններից մի քանիսի նախագահները, թագավորները և խորհրդարանները հետագա ամիսներին հաստատել են այս պայմանագիրը...»:

Մուրադ Բարդաքչին իր այս հոդվածում նաև նշելով, թե «Ինչպե՞ս կարելի է անտեսել այս փաստաթղթերը», հրապարակել է Թուրքիայի



Սևրի պայմանագիրը ստորագրած թուրքական պատվիրակության անդամները

օսմանյան արխիվում պահպանվող Սևրի պայմանագրին առնչվող բազմաթիվ վավերագրեր:

Թուրք հեղինակը նաև ընդգծում է, որ թեև գրեթե մեկ դար է անցել Սևրի պայմանագրի կնքումից հետո, սակայն սույն թեմայի վերաբերյալ թուրք գիտական շրջանակների կողմից դեռևս որևէ համապարփակ ուսումնասիրություն չի արվել, որի հետևանքներից մեկն էլ Թուրքիայում տարածված այն թյուր պատկերացումն է, թե Սևրը բաղկացած է Դաշնակից տերությունների և Թուրքիայի միջև կնքված միայն մեկ դաշնագրից, այնինչ սույն փաստաթուղթը «պայմանագրերի մի ամբողջ շարք է»:

Բարդաքչին, շարունակելով Թուրքական պատմագիտական ընկերության հիշյալ նախաձեռնությանն ուղղված իր քննադատությունը, հոդվածի վերջում շեշտում է.«Թուրքական պատմագիտական ընկերությունը, որը պատմագրության առումով պետք է լինի մեր երկրի ամենալուրջ հաստատությունը, կարողանում է պնդել, թե. «Սևրը պայմանագիր չէ»: Թուրքական պատմագիտական ընկերության՝ Սևրի վերաբերյալ այդ տրամաբանությամբ շարժվելով՝ կարող ենք այլ տարօրինակ պնդումներ էլ անել: Օրինակ՝ ելնելով այն փաստից, թե քանի որ 1878 թ.մարտի 3-ին Ռուսաստանի հետ կնքված Սան-Ստեֆանոյի պայմանագրի ծանր դրույթները մեղմացվեցին նույն տարվա հուլիսի 13-ին ստորագրված Բեռլինի կոնգրեսի ժամանակ, ուրեմն՝ մեր պատմության մեջ «Սան-Ստեֆանո» անվամբ որևէ դաշնագիր չի եղել, չի գործադրվել: Կարող ենք բարբաջել, թե «Սան-

Ստեֆանոն ընդամենը փաստաթուղթ է»: Առանց այդ էլ մեր նորագույն պատմության վերաբերյալ տարիներ շարունակ աշխարհի չափ ստեր ենք փչում, հիմա էլ «Սևրը ոչ թե պայմանագիր է, այլ փաստաթուղթ» ասելով՝ գիտական աշխարհի քմծիծաղին ենք արժանանալու և մի քանի սերունդ հետո ծիծաղելի, խեղճ ու անկարող վիճակում ենք հայտնվելու մեր ապագա լուրջ պատմաբանների առաջ:

Թուրքական պատմագիտական ընկերության նախագահ և սելջուկյան պատմության մասնագետ դոկտոր, պրոֆեսոր Ռեֆիք Թուրանը թող ներողամիտ լինի, սակայն պետության՝ պատմությունն ուսումնասիրող ամենանշանավոր հաստատությունը բացարձակապես իրավունք չունի նման անհեթեթություններով այդպիսի ամոթալի պիտակ կպցնել թուրք պատմագրությանը»:

Փաստորեն Սևրի մղձավանջը շարունակում է հանգիստ չտալ թուրք պատմաբաններին և լրագրողներին: Բայց և այնպես հատկանշական է, որ Սևրի թեման, հասկանալի պատճառներով, առանձնապես շատ չի արծարծվում թուրքալեզու մամուլում, իսկ անդրադարձների մեծ մասն էլ պարուրված են լինում կեղծ շեշտադրումներով:

Հետաքրքիր է, որ անցյալ տարի՝ 2019 թ.օգոստոսին 10-ին, անգլիական հեղինակավոր «Independent» պարբերականի թուրքալեզու ծառայության կայքէջում թեմային է անդրադարձել թուրք լրագրող Մեհմեթ Մազլում Չելիքը, որի նպատակն առավելապես եղել է անգլախոս ընթերցողներին մոլորության մեջ գցելը:

Այսպես՝ թուրք հեղինակը «Դամաթ Ֆերիթ փաշայի մեղքերի օրագիրը Սևրի պայմանագրի տարելիցին» վերնագրով հոդվածում նախ՝ անդրադառնում է այդ օրերին Օսմանյան պետության մեծ վեզիր Դամաթ Ֆերիթ փաշայի դեմ ծրագրված մահափորձին՝ շեշտելով, որ այն իրականում կազմակերպել էր հենց ինքը՝ Դամաթ Ֆերիթը, որպեսզի քիչ թե շատ թոթափի թուրք ժողովրդի շրջանում իր դեմ ուղղված բացասական տրամադրությունները, ապա՝ ներկայացնում, թե իբր անգլիացի մտավորականները ևս դեմ են արտահայտվել այդ դաշնագրին:

Սևրի պայմանագիրը կնքելու ժամանակ

Այսպիսով՝ վերջին տարիներին թուրքական պաշտոնական պատմագրությունը փորձել է նոր մոտեցումներ մշակել՝ Սևրի պայմանագիրը թուրք հասարակությանը ներկայացնելու ուղղությամբ: Սակայն այս պայմանագիրը միայն որպես փաստաթուղթ, բայց ոչ՝ «պայմանագիր» ներկայացնելու անհեթեթ առաջարկը քննադատության է արժանացել մի շարք թուրք պատմաբանների կողմից:

Թեև թուրքական լրատվամիջոցները փորձում են հնարավորինս հազվադեպ անդրադառնալ իրենց համար անհաճո այս թեմային, այնուամենայնիվ Սևրի «ուրվականը» շարունակում է հետապնդել թուրք քաղաքական գործիչներին և մտավորականներին:

Օգտագործված աղբյուրներ և գրականության ցանկ

1- Սևրի սինդրոմի մասին ավելի մանրամասն տես՝ Լևոն Հովսեփյան, Սևրի սինդրոմ: Սևրի սինդրոմի դրսևորումները Թուրքիայի հասարակական-քաղաքական քննարկումներում, Երևան, 2012: Հրատարակվել է նաև այս մենագրության անգլերեն տարբերակը՝ Levon Hovsepyan, The Fears of Turkey: The Sèvres Syndrome. Manifestations of the “Sèvres Syndrome” in Turkey’s Socio-Political Discourse, Yerevan, 2012.

2- https://www.milliyet.com.tr/gundem/son-dakika-ttk-dan-sevr-hamlesi-antlasma-degil-belge-2721674 (Վերջին դիտում՝ 17.07.2020):

3- Նույն տեղում:

4- Նույն տեղում:

5- Ahmet Anapali, Sevr Antlaşmasi İmzalandi Diyenler Cahildir “1”, Sevr Antlaşmasi İmzalandi Diyenler Cahildir “2”, Sevr Antlaşmasi İmzalandi Diyenler Cahildir “3”, www.haber7.com

6- https://www.haber7.com/yazarlar/ahmet-anapali/2410633-sevr-antlasmasi-imzalandi-diyenler-cahildir-3, (Վերջին դիտում՝ 17.07.2020):

7- Նույն տեղում:

8- Murat Bardakçi, İşte, ‘Yoktur’ dedikleri Sevr’in belgeleri!, https://www.haberturk.com/yazarlar/murat-bardakci/2099644-iste-yoktur-dedikleri-sevrin-belgeleri, (Վերջին դիտում՝ 17.07.2020):

9- Նույն տեղում:

10- Նույն տեղում:

11- Նույն տեղում:

12- https://www.indyturk.com/node/60506/haber/sevr-antla%C5%9Fmas%C4%B1n%C4%B1n-y%C4%B1l-d%C3%B6n%C3%BCm%C3%BCnde-damat-ferit-pa%C5%9Fa%E2%80%99n%C4%B1n-g%C3%BCnah-defteri (Վերջին դիտում՝ 17.07.2020):

13- Նույն տեղում:

Ամբողջական հայութեամբ դէպի Միացեալ Հայաստան

Յողիկ Աշրգեան
Ճարտարապետ, ՀՅԴ Հայաստանի երիտասարդական միութեան կեդրոնական վարչութեան անդամ

Դեկտեմբեր 1990ին ՀՅԴ Հայաստանի կազմակերպութիւնը կը գումարէ իր Ա. Շրջանային (գերագոյն) ժողովը, որուն յաջորդող յայտարարութեան մէջ կ'ըսուի. «Մեկնելով ՀՅԴ Ծրագրի և 24րդ Ընդհանուր ժողովի տրամադրութիւններից՝ Շրջանային ժողովը մշակեց Հայաստանի կազմակերպութեան ռազմավարութիւնն ու քաղաքական ուղեգիծը և հաստատեց Հայ Յեղափոխական Դաշնակցութեան հայաստանեան գործունէութեան պլատֆորմը, որը շուտով կը ներկայացուի հանրութեանը: Շրջանային ժողովը հաւաստեց, որ ՀՅԴ մայր կազմակերպութիւնը, հաւատարիմ Դաշնակցութեան հարիւրամեայ աւանդոյթներին, հողահաւաք-հայահաւաք շրջագծի մէջ հետապնդելու է հայ ժողովրդի ամբողջական իրաւունքների լիակատար վերականգնումը»:

Դաշնակցութեան ծրագրային առաջադրանքները էապէս գործնականացումն են անոր գաղափարաբանութեան: Ըստ էութեան, ընդգրկուն աշխարհայեացքով հարազատ խօսքն են ազատատենչ հայութեան և միտուած են ծառայելու բացառապէս անոր արդար դատին ամբողջական իմաստով՝ Յեղասպանութեան հատուցում, Արցախի միջազգային ճանաչում և միացում մայր հայրենիքին, Ջաւախքի և Նախիջևանի երկրամասերու խնդիրներ, Հայաստանի ընկերատնտեսական մարտահրաւէրներ:

ՀՅԴ հիմնադրութիւնը արտայայտութիւնն էր հայ ազգի արդար և վեհանձն գաղափարականչին:

Այս կուսակցութիւնը տակաւին կը մնայ հայութեան բոլոր ցիրուցան, տարտղնուած ուժերը համախմբող, զանոնք ներդաշնակող և ազգի ու պետութեան օրհասական օրերուն հաւաքական կամքը ջրդեղող յառաջամարտիկը: 130 տարուան գաղափարակեդրոնացեալ գործունէութեամբ, Դաշնակցութիւնը յաջողած է ըլլալ կենսունակ և ազատաշունչ՝ ի պատիւ իր պայծառ սերունդներու ճկուն ու արթուն քաղաքական մտքին, և առարկայական պայմաններու համատեղ ներգործութեամբ ու հաշուառումով, ապահոված է ծրագրային առաջադրանքներու բնականոն և տրամաբանական հոլովոյթն ու զարգացումը և հայութեան դատի բազմաբովանդակ գործընթացներու հասունացումը՝ բարենորոգումներու ճամբով Տաճկահայաստանի (Արևմտահայաստանի) հայութեան վիճակի բարելաւման և բարենորոգումներու պահանջներէն սկսած մինչև Կովկասեան նախագիծ՝ ստանձնելով համայն հայութեան պաշտպանութեան և անվտանգութեան գործը, ապա՝ Ազատ, Անկախ և Միացեալ Հայաստանի տեսլականի որդեգրումը:

Ծրագրային առաջադրանքներու հոլովոյթը ծաւալուն յօդուածներու նիւթ կրնայ ըլլալ

հաստատաբար: Սակայն ծրագրի հետևեալ նախադասութիւնը կը գծէ վառ պատկեր մը Դաշնակցութեան ապագայ տեսլականին. «Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը կը ձգտի Հայ դատի լուծմանը՝ ամբողջական հայութեամբ ամբողջական հայրենիքի կերտմանը»: Այս տողերուն առանցքային նշանակութիւնը և գործնականացման համար մղուած պայքարը դարձած են կայուն ընթացակարգեր և աւելին՝ համոզում ու հաւատք դաշնակցական գործին մէջ: Հողահաւաք և հայահաւաք բանաձևը իր մէջ կը խտացնէ ծրագրային ընդգրկուն հայեցակարգ մը, որ ազատութեան, անկախութեան և միասնութեան կերտման երկու հիմնական նախադրեալները կը ճշդէ՝ հայ մարդը և հայ հողը: Հասկնալի է, որ նշեալ բանաձևումով, առաջին հերթին կը պատկերուին հայկական բռնագրաւեալ հողերու ազատագրումը և աշխարհասփիւռ հայութեան վերադարձը հայրենիք: Իսկ երբ նշեալ բանաձևումը տեսութենէ անդին վերլուծական ու քննական մօտեցումի ենթարկենք, այդ պարագային յստակօրէն երևան կու գայ անոր հանգրուանային իրականացման հնարաւորութիւնը: Ցանկացած ծրագիր՝ քաղաքական թէ այլ բնոյթի, անհնար է իրականացնել միանուագ կերպով: Հեռահաս տեսլական հետապնդող ծրագիրները անհրաժեշտաբար կը յատկանշուին գաղափարական և քաղաքական հիմնաւորումներով, անոնցմէ բխող ռազմավարական ուղեգիծով և ամենակարևորը՝ ճանապարհային քարտէզով՝ հասնելու համար ճշդուած նպատակներուն: Հայ իրականութեան մէջ, իբրև քաղաքական կուսակցութիւն, Դաշնակցութեան առանձնայատկութիւնը ոչ միայն անոր Ծրագիրի անզուգականութիւնն է, այլ նաև Ծրագիրի հետ գործելակերպերու ոճային այլազանութեան հա-

մադրութիւնը:

Հողահաւաքն ու հայահաւաքը համալիր, միաձոյլ և անքակտելի գաղափարներ են, թէև բաղադրիչները կրնան ունենալ իրականացման փոխընդմէջ կամ համաժամանակեայ որոշակի հանգրուաններ և յարաբերական զարգացումի աստիճաններ: Ջուտ ֆիզիքական հաւաքագրում մը չեն ենթադրեր այս ձևակերպումները, այլ նաև ու մանաւանդ ենթակայական բարենպաստ պայմաններ ու ենթահող: Եւ այս է անոնց այժմէականութեան մէկնակէտը: Այսինքն՝ հայկական բռնագրաւեալ տարածքներու հողահաւաքը իրականացնելու համար (Ուիլսընեան քարտէս) նախ և առաջ պէտք է հզօրացնել առանցքը՝ Հայաստանի Հանրապետութիւնը և Արցախի Հանրապետութիւնը՝ ազգաբնակչութեան համար ապահովելով արժանավայել կեանք, պատուաբեր աշխատանք, կենցաղային դիւրութիւններ, մշակութային վերելք, ընկերային արդարութիւն և այլն: Ասոնք կը նպաստեն առողջ հասարակութեան ձևաւորման՝ տեղական համայնքային դրութեամբ, արտագաղթի կործանիչ երևոյթի վերացման, ինչպէս նաև ներգաղթի խթանման: Ահա և հողահաւաքը կը դառնայ երաշխիքներէն մէկը հայահաւաքին:

Մեր երկրի պայմանները երանելի չեն, այնուամենայնիւ ունինք երկու հիմնական հզօրագոյն նախադրեալ՝ հաստատակամ յառաջանալու դէպի ապագայ՝ հող (բնութիւն, աշխարհագրութիւն և անոնցմէ բխած բարիքներ) և մարդկային ստեղծագործ ներուժ ու միտք, հայ մարդու, քաղաքացիի հմտութիւններ և մատուցած ծառայութիւններ: Մարդկային ներուժի և բարիք ստեղծելու շրջագիծին մէջ անփոխարինելի են դերն ու տեղը ինքնաբաւ երկիր դառնալու բանալին հանդիսացող հայ գիւղացիին:

Դար մը ի վեր հողահաւաքի ու հայահաւաքի տեսլականով պայմանաւորուած է Դաշնակցութեան գործունէութիւնը, և անով կ'առաջնորդուին անոր բոլոր միաւորները, ինչպէս և անոր մայր կազմակերպութիւնը՝ Հայաստանի մէջ կուսակցութեան վերընձիւղման օրերէն ասդին:

Ներկայ հանգրուանին, հայրենի հասարակութիւնը

ծանր պայմաններու մէջ կը դիմագրաւէ տնտեսական և ընկերային ծանրակշիռ հարցեր՝ ակնկալելով արագ արդիւնքներ կարճ ժամանակամիջոցի մէջ: Մինչդեռ համաճարակային սուր ճգնաժամին մէջ երկրին ղեկավարութիւնը կը շարունակէ փուճ խոստումներ և յոյս շռայլել՝ կրկին շեղելով քաղաքացիներուն հայեացքը հիմնական իսկական օրակարգերէն ու հիմնախնդիրներէն: Հասարակական ճնշուած վիճակին մէջ մեր տեսլականը առաջնահերթ ու այժմէական կրնայ չթուիլ, անոր քարոզչութիւնն ու փոխանցումը կրնան անիմաստ, ոչ անհրաժեշտ նկատուիլ: Գուցէ: Բայց և այնպէս, պէտք է գիտակցիլ, որ ամէն դժուարութիւն ու մարտահրաւէր յաղթահարելի են հաւաքական ուժերուն լարումով, միասնականութեամբ և ծրագիր ու ճամբու քարտէզ ունենալով: Կարևորագոյն նախապայմանը, այսուհանդերձ, քաղաքական կամք ցուցաբերելն է: Միասնական իտէալներու իրականացումը ամէն բանէ առաջ կ'ենթադրէ քաղաքական վճռորոշ կամք:

Դաշնակցութեան ճամբան երկարաշունչ, անշեղ պայքարի ճամբան է: Դժուար է այդ ճամբան: Բնականաբար: Անշեղելի է: Անշուշտ: Պատմութիւնը վկայ:

Եւ հոս է հիմնական ուժը Դաշնակցութեան: Ան երկարաշունչ պայքարի զինուորագրեալն է՝ Հայաստանի ու հայութեան դատին ծառայելու համար: Անցնող հարիւր երեսուն տարիներուն անոր պայքարի միջոցները փոխուած են: Վերջին երեսուն տարիներուն Դաշնակցութեան համար պետական իշխանութեան հասնիլը նպատակ ըլլալով՝ բնաւ ինքնանպատակ չէ եղած, որովհետև ան չունի իշխանութեան միջոցով ինքնահաստատուելու խնդիր, ոչ ալ կուսակցական կամ խմբակային շահադիտական նկրտումներ: Ներկայ հանգրուանին, սակայն, ամէն ժամանակէ աւելի, այո՛, Դաշնակցութեան համար իշխանութեան հասնելն անհրաժեշտ է, միջոց մը՝ թէ՛ պետութեան գահավէժ ընթացքը կասեցնելու և թէ՛ ծրագրային իր առաջադրանքները իրականացնելու ուղղութեամբ ճամբայ հարթելու: ■

Հայաստանի հետխորհրդային երիտասարդությունը

Անահիտ Դանիելյան
Տիգրան Զանդոյան

Հայաստանյան հասարակության մեջ երիտասարդության մասին խոսելիս հիմնականում նկատի է առնվում, այսպես ասած, «անկախության սերնդի»՝ 1991 թվականին և դրանից հետո ծնված երիտասարդությունը: Այս մոտեցումը հիմնավորված է մի շարք պատճառներով, ինչպիսիք են երիտասարդության տարիքային խումբը, սոցիալ-քաղաքական հանգամանքները և այլն

Հետխորհրդային Հայաստանում իրականացված հետազոտությունները ցույց են տալիս, որ երիտասարդները հայ լինելու հետ առաջնային են համարում Հայ առաքելական եկեղեցուն պատկանելը, ինչը կրոնը և քրիստոնեությունը նրանց ազգային ինքնության էական բաղադրատարր է դարձնում: Հայաստանյան երիտասարդներն իրենց բնութագրելիս հատկապես ընդգծում են, որ հայ են և քրիստոնյա: Կրոնական դավանանքը երիտասարդների շրջանում կապվում է կոնկրետ, սոցիալապես ընդունելի ու նպաստավոր բարոյական վարքի և մոտեցումների հետ: Որոշ հետազոտություններ փաստում են, որ կրոնի նկատմամբ մեծ հակում ունեցող երիտասարդության շրջանում արձանագրվում է սոցիալական ավելի բարձր մակարդակ: Որոշ հետազոտողների պնդմամբ՝ երիտասարդության ինչպես ակադեմիական, այնպես էլ սոցիալական կարողություններն ուղղակի կապ ունեն հոգևոր կյանքի անցուդարձին մասնակցության և համապատասխան արժեքային դիրքորոշումների հետ: Վերջին շրջանի մի հետազոտություն ցույց է տալիս նաև, որ համեմատաբար ավելի ավանդապահ ընտանիքներից սերող երիտասարդների դրսևորած կրոնական վարքագիծը սոցիալապես ավելի արդյունավետ է, քան ոչ ավանդապահ ընտանիքներից սերող երիտասարդներինը: Հայ երիտասարդության շրջանում եկեղեցու նկատմամբ վստահությունն ու հավատը համեմատաբար մեծ են՝ ի տարբերություն պետական և հասարակական այլ ինստիտուտների: Միայն բանակն է, որ եկեղեցուց ավելի մեծ վստահություն է վայելում: Հետաքրքրական է, որ Հայաստանում երիտասարդներն իրենց կյանքում համեմատաբար ավելի մեծ տեղ են հատկացնում կրոնին, ավելի հաճախ են գնում եկեղեցի և ավելի շատ են հետևում եկեղեցական խորհուրդներին, քան իրենց ծնողները: Այս հանգամանքը պատճառաբանվում է նրանով, որ նրանց ծնողները ծնվել, հասունացել և դաստիարակվել են Խորհրդային Միությունում, որտեղ պաշտոնապես աթեիզմ էր քարոզվում, և հավատացյալ լինելը չէր խրախուսվում:

Երիտասարդության շրջանում ինքնաբնութագրման առավել չկարևորվող հատկանիշներից

են աշխարհաքաղաքացիությունը, «եվրոպացիությունը» և այլն: Հայ լինելն առավելապես դիտարկվում է էթնիկության, այլ ոչ թե պետականության համատեքստում, և որպես ինքնության անկյունաքար՝ քաղաքացիությունն ավելի քիչ է կարևորվում: Եթե համաձայն արևմտյան մոդելի՝ հասարակական կազմակերպման լեգիտիմ ձևը պետությունն է, ապա հայաստանյան իրականության պայմաններում այս կարևոր դերը վերապահված է ընտանիքին: Հատկապես ուշագրավ է, որ հայ երիտասարդի կյանքի հիմնական նպատակն իր ծնողներին հպարտություն պարգևելն է:

Անդրադառնալով երիտասարդների արժեհամակարգին՝ պետք է նշել, որ որպես կարևորագույն արժեքներ առանձնացվում են արժանապատվությունը, ազնվությունը, հավատարմությունը, կամքի ուժը, պայքարելու համառությունը, ինչպես նաև սերը և հարգանքը դիմացինի նկատմամբ, պարկեշտությունն ու հայրենասիրությունը:

Հայաստանյան երիտասարդության շրջանում լուրջ խնդիր է լավ մասնագիտական կրթություն ստանալու համար անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսների սակավությունը: Երիտասարդների մի ստվար հատված չի ցանկանում շարունակել կրթությունը ֆինանսական միջոցների բացակայության պատճառով, իսկ ստացած գիտելիքները չեն երաշխավորում ըստ մասնագիտության աշխատանք գտնելը: Տարբեր պատճառներով երիտասարդների մեծ մասը ստացած մասնագիտությամբ աշխատանք չի գտնում: Բարձրագույն կրթություն ստանալու հարցում առաջնային կարևորություն ունի երիտասարդների ֆինանսական վիճակը: Ցածր եկամուտ ունեցող ընտանիքներում բարձրագույն կրթություն ստանալու ցանկությունը գրեթե

երկու անգամ փոքր է, քան միջին կամ բարձր եկամուտ ունեցող ընտանիքներում: Բարձրագույն կրթություն ստանալու մոտիվացիայի վրա ազդում է նաև ընտանիքում ծնողներից մեկի կամ երկուսի՝ բարձրագույն կրթություն ունենալու հանգամանքը: Այն ընտանիքներում, որտեղ այդպիսիք չկան, բարձրագույն կրթություն ստանալու ցանկությունը համեմատաբար փոքր է: Սա ևս մեկ անգամ փաստում է երիտասարդների կյանքում ընտանիքի ունեցած մեծ դերակատարության մասին: Հարկ է ընդգծել, որ երիտասարդների 80 տոկոսից ավելիի համար բարձրագույն կրթություն ստանալը մոդայիկ է ընկալվում, իսկ բուհ հաճախելը երիտասարդների շրջանում ոչ միշտ է կապվում սովորելու՝ որպես առաջնային նպատակի հետ: Համալսարանական միջավայրը ոչ միայն ուսանելու, այլ նաև սոցիալական կապեր ստեղծելու ու երիտասարդ տարիները ուսանողի կարգավիճակում անցկացնելու հնարավորություն է ընձեռում:

Երիտասարդների մոտ մեկ հինգերորդ մասն է, որ ունի սեփական եկամուտ: Մնացածը ստիպված են ապավինել այլոց աջակցությանը: Որքան նվազում են երիտասարդների անձնական ծախսերը (սոցիալ-տնտեսական պայմանների պատճառով), այնքան նրանք ավելի են հակվում հանրային բարիքի հավասար բաշխման գաղափարին:

Երիտասարդության շրջանում փոքր թիվ չեն կազմում երկիրը լքել ցանկացողները: Հայաստանից հեռանալու հիմնական պատճառը կյանքի որակը բարելավելու ցանկությունն է, մասնավորապես ավելի լավ աշխատանքի հնարավորությունը, ինչպես նաև ավելի որակյալ կրթություն ստանալու ձգտումը:

Երիտասարդության շրջանում արժևորված է քաղաքականությունը, և երիտասարդության զգալի մասը հետաքրքրվում է քաղաքական հարցերով, սակայն գործնական քայլերի մակարդակում ցուցաբերվում է քաղաքական անտարբերություն: Փաստացի նրանց զգալի մասը չի պատրաստվում մասնակցելու խորհրդարանական ընտրություններին, եթե ընտրություններն անցկացվեն ներկա պահին: Որքան բարձր է հարցվածների կրթական մակարդակը, այնքան նրանք հակված չեն քվեարկելու որևէ կուսակցության օգտին կամ մասնակցելու խորհրդարանական ընտրությունների: Երիտասարդների մի զգալի հատված անգամ կարծում է, որ երիտասարդության ձայնը վճռորոշ չէ քաղաքական որոշումների կայացման հարցում: Որքան ավելի են երիտասարդները բավարարված ՀՀ-ում ժողովրդավարության աստիճանով, այնքան ավելի լավատեսական են նրանց պատկերացումները սեփական ապագայի և երկրի տնտեսական ապագայի վերաբերյալ: Երիտասարդների մեծ մասը համամիտ է այն մոտեցմանը, որ պետությունը

պետք է ավելի մեծ պատասխանատվություն կրի մարդկանց սոցիալական ապահովության հարցում: Նրանց կարծիքով՝ ՀՀ կառավարության առաջնային խնդիրները պետք է լինեն գործազրկության մակարդակի կրճատումը, հայոց բանակի հզորացումը, տնտեսական աճը, կոռուպցիայի և հանցավորության դեմ պայքարը, Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը, արցախյան հիմնահարցի կարգավորումը, մարդու իրավունքների պաշտպանությունը, բարոյական վերադաստիարակության խնդիրների լուծումը և այլն: Տարածված է նաև ՀՀ-ում կրթության վիճակի ոչ բավարար լինելու մասին տեսակետը, և առաջնային հասարակական խնդիրների թվում, որոնց վրա ՀՀ կառավարությունը պետք է սևեռի իր ուշադրությունը, հաճախ նշվում է կրթության որակի բարձրացումը: Ինչպես արդեն անդրադարձանք վերևում, սոցիալապես անապահով երիտասարդները հակված են բարձրաձայնելու, որ հանրային բարիքը պետք է հավասարապես բաշխվի: Եթե հաշվի առնենք այն փաստը, որ երիտասարդների մեծամասնության քաղաքական հայացքները համընկնում են իրենց ծնողների հայացքների հետ, ապա պարզ է դառնում, որ կոմունիզմի խորհրդային գաղափարախոսությունը վերարտադրվում է Հայաստանի Հանրապետության անկախության տարիներին ավելի փոքր տնտեսական կապիտալ ունեցող ծնողների կողմից՝ իրենց երեխաներին համապատասխան դիրքորոշումների փոխանցման միջոցով: ■

Ազգային երիտասարդությունը որպես քաղաքական ակտոր

Տիգրան Զանդոյան. ՀՅԴ «Նիկոլ Աղբալյան» ուսանողական միության անդամ, քաղաքագետ

Երիտասարդության՝ որպես սոցիալական խմբի սահմանումը տարբեր ուսումնասիրողների կողմից տարբեր կերպ է տրվում՝ հիմք ընդունելով այնպիսի չափորոշիչներ, ինչպիսիք են կրթական ցենզը, տնտեսական ակտիվությունը, հասարակական դերակատարումը և այլն: Սակայն այստեղ փորձելու ենք անդրադարձ կատարել երիտասարդությանը՝ որպես հասարակաքաղաքական գործոնի, որի կարևորության ու ազդեցիկության մեջ համոզվեցինք հատկապես երկու տարի առաջ՝ «թավշյա» իշխանափոխության օրերին: Երիտասարդությունը մշտապես ձգտել է ակտիվ քաղաքական կյանքի: Դրա վառ օրինակն է 20-րդ դարի առաջին կեսը, երբ առավելապես ուսանող երիտասարդությունն էր մասնակցում ազգային-ազատագրական և հեղափոխական շարժումներին:

Երիտասարդությունը, լինելով ազդեցիկ քաղաքական գործոն և ներուժ, ինչպես նաև քաղաքական առաջնորդների և վերնախավի լեգիտիմության հենարան, գրավում է ոչ միայն քաղաքագետների, սոցիոլոգների և հարակից այլ ոլորտների ուսումնասիրողների, այլ նաև հասարակական առաջնորդների ու քաղաքական գործիչների ուշադրությունը և ինքնին մասնակցում է քաղաքական գործընթացին որպես առանձին, ասել է թե՝ ինքնուրույն քաղաքական ակտոր (դերակատար): Երիտասարդությունը, որպես կանոն, քաղաքական գործընթացներում ներգրավվում է տարատեսակ շարժումներին մասնակցության միջոցով: Վերջիններիս յուրահատկությունը խմբային գործունեությունն է, երբ դրսևորվում է կոլեկտիվ վարքը: Այսօր երիտասարդներին հնարավոր է ներգրավել շարժումների, խմբերի և քաղաքական գործունեություն ծավալող այլ միավորումների մեջ միայն այն պարագայում, եթե նրանք համոզված լինեն, որ կկարողանան ազդեցություն ունենալ շրջակա աշխարհի և մարդկանց վրա՝ դրսևորելով իրենց անհատականությունը և իրականացնելով իրենց գաղափարները, ինչպես և բավարարելով սեփական հավակնությունները:

Որպես քաղաքական հարաբերությունների դերակատար՝ երիտասարդությունն աչքի է ընկնում սոցիալական ինքնագիտակցության յուրահատկությամբ, որը պայմանավորված է նրա ներկայացուցիչների տարիքով ու սոցիալական դիրքով: Երիտասարդների ինքնագիտակցությունը համեմատաբար հեշտ է փոփոխվում տարբեր գործոնների, օրինակ՝ տնտեսական, սոցիալական, քաղաքական, և հատկապես ԶԼՄ-ների ազդեցությամբ, ինչը պայմանավորված

է երիտասարդների քաղաքական ոչ լիարժեք հասունությամբ: Սրանից ելնելով, հաճախ սեփական շահադիտական նպատակներով առաջնորդվելով՝ քաղաքական գործիչները, հատկապես հետխորհրդային և երրորդ աշխարհի անցումային փուլում գտնվող երկրներում, մանիպուլացնում են երիտասարդներին՝ որպես դեռևս ամբողջովին չձևավորված քաղաքական գիտակցության կրողների: Մեր օրերում երիտասարդությունը, կորցնելով հավատն առ օրվա իշխանությունը, մեծավ մասամբ անտարբեր է հասարակաքաղաքական ակտիվության ցանկացած ձևի նկատմամբ՝ դրսևորելով քաղաքական աբսենթիզմ (խուսափողականություն):

Դարեր ի վեր կրթությունն է համարվել ուժեղ և կայուն հասարակության կառուցման հիմնական գործիքը, հասարակություն, որտեղ երիտասարդության դերակատարմանն անդրադարձանք վերևում: Իսկ կրթական համակարգերից լավագույնը, որը պատմական բարդ քննություն է բռնել, ազգային հայեցակարգ կրող կրթական համակարգն է, որի թողարկած սերունդն է միայն ի զորու դիմակայելու օտարածին և հոռի բարքերին՝ որպես ազգային հասարակության քայքայման թիվ մեկ գործոնի: Ազգային կրթահամակարգի նպատակն է մատաղ սերնդի ու պետության վաղվա քաղաքացու մեջ ձևավորել ու ամրապնդել սեփական մշակույթի, պատմության, ազգային արժեհամակարգի նկատմամբ ակնածանք և սեր, դրանք ամեն գնով արժևորելու և պահպանելու մղում: Միայն այս ամենի միջոցով կարող է ձևավորվել միասնական և իմուն (դիմադրողականությամբ

օժտված) հասարակություն՝ ընդունակ արագ մոբիլիզացվելու ընդդեմ տարատեսակ մարտահրավերների: Հայաստանի Հանրապետության տարածաշրջանային քաղաքական իրադրության պայմաններում սա կենսական, ավելի շուտ՝ գոյաբանական նշանակություն ունի: Սակայն միասնական և ազգային հասարակության լոկոմոտիվը միայն ազգային կրթություն ստացած և ազգային արժեհամակարգի կրող երիտասարդությունը կարող է լինել՝ որպես հասարակության թարմ արյուն և որպես հավակնոտ ու ապագայամետ քաղաքական ուժ: Այս ամենը չգիտակցող կամ գիտակցաբար սրան ընդդիմացող քաղաքական էլիտան ոչ միայն դատապարտված է կորցնելու իր լեգիտիմությունը, իհարկե այն ունենալու դեպքում, այլև վաղ թե ուշ լքելու է քաղաքական ասպարեզը, վատագույն դեպքում՝ պետական դավաճանի խարանով:

Գլոբալիստական ահագնացող ալիքին ընդդեմ միակ գաղափարախոսությունը թե՛ եվրոպական երկրներում և թե՛ ամբողջ աշխարհում ընդհանրապես այսօր շարունակում է մնալ ազգային արժեհամակարգի վրա հիմնված գաղափարախոսությունը: Հայաստանյան քաղաքական ասպարեզում այն ևս ունի իր կայուն տեղը և դերակատարումը: Երիտասարդությունը՝ որպես քաղաքական դերակատար, քաղաքական ամենատարբեր գաղափարախոսությունների կրող է՝ սկսած քաղաքական մարգինալիզմից (լուսանցքայնությունից) ընդհուպ մինչև ազգային արժեբանության կրող քաղաքական ուժերի երիտթևերը: Այնուհանդերձ, վերոշարադրյալ հիմնախնդիրների համատեքստում առավել կարևոր է երիտքաղաքական ուժերի ազգային թևի՝ որպես ազգային պետությունը քայքայող հայեցակարգերի դեմ ներկայում և ապագայում

պայքար մղող ուժի քաղաքական կայունացումն ու հզորացումը: Սակայն սա լավագույնս պետք է գիտակցվի և ընդունվի երկրի՝ օրվա իշխող քաղաքական ուժի կողմից՝ խթան հանդիսանալով կրթության և դաստիարակության համապատասխան հայեցակարգերի մշակման ու կենսագործման համար, ինչն այսօր ոչ միայն չի իրականացվում, այլ նաև ականատես ենք լինում միանգամայն հակառակ գործընթացին: Այս համատեքստում երիտասարդության ազգային դաստիարակության պարտավորեցուցիչ գործն ընկնում է հանրային սեկտորի վրա՝ ի դեմս քաղաքական կուսակցությունների, հասարակական և այլ կազմակերպությունների, ինչը ևս իր առկա ներուժով չի իրականացվում գլոբալիստական արտաքին ֆինանսական հոսքերով պայմանավորված ուղղորդումների պատճառով:

Վերոշարադրյալի համադրումից գալիս ենք այն եզրահանգմանը, որ ազգայնական քաղաքական գաղափարախոսության կրող երիտասարդությունը՝ որպես քաղաքական ակտոր, այսօր առավել, քան երբևէ կարևոր առաքելությամբ է օժտված, և վերջինիս իրականացման հրամայականն օրեցօր ավելի արդիական է դառնում, ինչն էլ իր հերթին մեծացնում է ազգային երիտասարդության քաղաքական կշիռն ու դերը քաղաքական դաշտում: ■

Հայրենիքը գործով են սիրում

Անահիտ Դանիելյան. ՀՅԴ Նիկոլ Աղբալյան ուսանողական միության և ՀՅԴ Հայաստանի երիտասարդական միության անդամ. ԵՊՀ ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի ուսանող

Ամիսներ շարունակ աշխարհում մոլեգնում է թագավարակ կոչվող չարիքը: Այն հասցրել է հողին հավասարեցնել իր ճանապարհին հայտնված շատ տնտեսություններ: Կաթվածահար վիճակում են բոլոր ոլորտները, կյանքն աշխարհում կարծես կանգ է առել, մարդիկ հոգեբանորեն շատ ճնշված են: Այս օրերին ամբողջ աշխարհն է պայքարում համավարակի դեմ: Բոլոր հնարավոր միջոցներով փորձ է արվում հաղթահարել հիվանդությունը և դրա պատճառով առաջացած բազմաթիվ (այդ թվում՝ սոցիալական) խնդիրները: Հայաստանը ևս բացառություն չէ: Այստեղ խնդիրները բազմազան են: Շատերի մոտ ճնշվածության հետևանքով ընկճախտ է նկատվում, ինչի պատճառներից մեկն էլ թերևս Կառավարության իրարամերժ հայտարարություններն են: Թիրախում է հայտնվել հատկապես սոցիալապես անապահով խավը: Ստեղծված ճգնաժամի հետևանքով առանց այդ էլ սոցիալական բազմաթիվ խնդիրներ ունեցող մեր հայրենակիցներն ավելի են կռացել հոգսերի ծանր բեռի տակ: Շատերն օրվա հացի խնդրին են բախվել: Թեև Կառավարությունը ձեռնարկել է 2 տասնյակից ավելի հակաճգնաժամային սոցիալական աջակցության միջոցառումներ, սակայն դրանց արդյունքներն այնքան էլ տեսանելի չեն: Հասկանալի չէ, թե ինչին են ուղղվում համավարակի հաղթահարման համար նախատեսված միջոցները: Աղքատության շեմին գտնվող 700 հազար քաղաքացի ունեցող երկրում հարյուր հազարավոր կարիքավորներ չընդգրկվեցին աջակցության շահառուների ցանկում, իսկ շահառուները չստացան համաչափ սոցիալական աջակցություն: Քաղաքացիների մյուս խումբն էլ, որն օգտվեց աջակցությունից, ստացած աջակցությամբ չէր կարող հոգալ նույնիսկ իր չաշխատած ամիսներից մեկի նվազագույն ծախսերը: Սակայն այս ամենի ֆոնին մեկ այլ ցավալի բան էլ կա. տպավորություն է ստեղծվում, թե սահմանամերձ գոտում բնակվող մեր հայրենակիցների, նրանց կարիքների մասին մոռացել են: Շատերը կարող են մոռանալ, սակայն դաշնակցական երիտասարդները երբեք չեն մոռանում մեր հայրենիքը պահողներին (սահմանամերձ գյուղերում ապրելը հերոսություն է):

Ապրիլի 8-ին հայտարարություն տարածվեց, ըստ որի՝ ՀՅԴ Հայաստանի երիտասարդական և «Նիկոլ Աղբալյան» ուսանողական միությունները ՀՅԴ մարզային կառույցների հետ ձեռնարկում են սահմանամերձ համայնքների սոցիալապես անապահով ընտանիքներին անհրաժեշտ օգնություն տրամադրելու ծրագիր: Ինքնաֆինանսավորման մի քանի ծրագրերից կուտակված գումարով գնվեց առաջին անհրաժեշտության պարենամթերքի առաջին խմբաքանակը, որը մի քանի օր անց հասավ Տավուշ: Իսկ արդեն ապրիլի 16-ին սկսվեց դրամահավաք, որի ողջ հասույթն ուղղվելու էր «Օգնի՛ր հայրենակցիդ - միասին կհաղթենք» օժանդակության ծրագրին: Այս դրամահավաքը թույլ տվեց ընդլայնել օգնության տրամադրման շրջանակը և օգնություն տրամադրել նաև սահմանամերձ գոտուց դուրս բնակվող ընտանիքներին:

Անչափ կարևոր է այն փաստը, որ տեղում դրամահավաքներ կազմակերպեցին նաև Սփյուռքում գործող հայկական դպրոցները, հայրենակցական միությունները, ՀՅԴ կառույցները՝ անտեսելով այն հանգամանքը, որ ճգնաժամը թակել է նաև իրենց դռները: Օժանդակության ծրագրում իրենց մեծ ներդրումն են ունեցել նաև ՀՅԴ ուղեկից կառույցները՝ ՀՕՄ-ը և ՀՄԸՄ-ը: Մարդիկ, որոնցից շատերը երբևէ չէին տեսել Հայաստանը, իրենց հնարավորությունների սահմաններում արեցին ամեն բան մեկ ավել ընտանիքի օգնելու համար: Շնորհիվ այս դրամահավաքին մասնակցած յուրաքանչյուր անհատի և կազմակերպության՝ մինչ այս պահը հնարավոր է եղել օժանդակել Հայաստանի 8 մարզերում (Տավուշ, Լոռի, Շիրակ, Գեղարքունիք, Կոտայք, Վայոց ձոր, Արագածոտն, Սյունիք) և Երևանում բնակվող շուրջ 2300 ընտանիքների: Ստորև ներկայացնում ենք դրամահավաքին մասնակցած կազմակերպությունների ցանկը.

- ԱՄՆ-ի Նոր Ջուղայի «Ջարթոնք» միություն,
- ՀՅԴ Արևելյան Ամերիկայի երիտասարդական միություն,
- ՀՅԴ Կանադայի կառույց, երիտասարդական և ուսանողական միություններ, Կանադայի հայկական համայնք,
- ԱՄՆ-ի «Սասուն» հայրենակցական միություն,
- ԱՄՆ-ի «Ալեքս Պիլիպոս» դպրոցի սաներ և ուսուցչական կազմ,
- ՀՅԴ Լոնդոնի երիտասարդական միություն,
- ՀՅԴ Արևմտյան Ամերիկայի երիտասարդական միություն,
- ՀՅԴ Բելգիայի երիտասարդական միություն,
- ՀՅԴ Ֆրանսիայի երիտասարդական միություն,
- ՀՅԴ Հունաստանի երիտասարդական միություն,
- ՀՅԴ Նիդեռլանդների երիտասարդական միություն,
- Նոր Ջուղայի կրոնական խորհուրդ:

Նվիրատուների շնորհիվ ծրագիրն այսօր էլ շարունակվում է: Անգնահատելի է այս ծրագրին տրամադրված յուրաքանչյուր դրամը: Դրամահավաքին մասնակցած յուրաքանչյուր անհատ գործով ապացուցեց, որ հայրենիքի և հայրենակիցների կողքին է: Ի վերջո, հայրենիքը գործով են սիրում:

Կենսոլորտային պահպանավայր. էությունն ու կիրառման անհրաժեշտությունը Հայաստանում

Արեգ Ղարաբեգյան. ՀՅ Դաշնակցության Հայաստանի գերագույն մարմնի շրջակա միջավայրի պահպանության և բնական ռեսուրսների հանձնախմբի նախագահ

Աշխարհում գերիշխանություն հաստատած տեխնածին տնտեսական համակարգերը կորզում են բնական պաշարները՝ առանց դրանց բնական սահմանափակվածությունն ու վերականգնման ունակությունը նկատի առնելու: Բնական պաշարների վրա մեծացող ճնշումը պահանջում է հասարակական-բնապահպանական նոր մոտեցում, որը մի կողմից պետք է մեղմի կենսաբազմազանության կորուստը, մյուս կողմից՝ խթանի կայուն հողօգտագործումը՝ ներառելով տեղի բնակչության կարիքները: Այդպիսի լուծումներից մեկը կենսոլորտային պահպանավայրն է:

Միավորված ազգերի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպությունը (ՅՈՒՆԵՍԿՕ – UNESCO) մշակել է խիստ պահանջներ՝ կենսոլորտային պահպանավայրերի ստեղծման համար: Այդպիսի պահպանավայրի ստեղծումն առաջադրվում է պետության կողմից և ստանում է միջազգային ճանաչում: Կենսոլորտային պահպանավայրը որոշ առումով ծառայում է որպես «կենդանի լաբորատորիա»՝ հողի, ջրի և կենսաբազմազանության միասնական կառավարման փորձարկման և ցուցադրման համար: Կենսոլորտային պահպանավայրերը ձևավորում են համաշխարհային ցանց, որի ներքո հեշտանում է տեղեկատվության, փորձի և աշխատակազմի փոխանակումը: Ներկայումս աշխարհի 124 երկրներում կա 701 կենսոլորտային պահպանավայր, ներառյալ 21 անդրսահմանային պահպանավայրերը:

Ինչպես նշվեց, կենսոլորտային պահպանավայրն անդրադառնում է մեր ժամանակների ամենակարևոր և անհետաձգելի խնդիրներից մեկին՝ ինչպես ապահովել մարդկության և բնության համերաշխ կեցությունը: Դա ապահովելու համար պետք է միասին աշխատեն շատ շրջանակներ, որոնց թվում են բնապահպանները, հասարակական կազմակերպությունները, տեղական իշխանությունները, գիտնականները և ամենակարևորը՝ տեղական համայնքները: Հետևաբար կենսոլորտային պահպանավայրերը տարբերվում են պահպանվող սովորական տարածքներից: Դրանք միևնույն ժամանակ նպաստում են պաշարների կայուն օգտագործմանը և տեղական համայնքների բարեկեցությանը:



«Կայունություն» հասկացությունը թելադրում է, որ այսօրվա մարդկությունը չպետք է ապագա սերունդների գոյությունը դնի վտանգի տակ: Կենսոլորտային պահպանավայրի նպատակն է պահպանել կենսաբազմազանությունը, կարգավորել բնական պաշարների օգտագործումը՝ պահպանելով դրանք, խթանել կայունության և ներառական տնտեսական զարգացումը:

Հայաստանն առայժմ չունի ՅՈՒՆԵՍԿՕ-ի գործող կենսոլորտային պահպանավայրեր, սակայն 1990-ականներից սկսած՝ մի շարք փորձեր են ձեռնարկվել այդ ուղղությամբ: Արդեն իսկ ստեղծվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի պահանջներին համապատասխան «Մարդը և կենսոլորտը» (MAB) ազգային հանձնաժողովը: Հայաստանի պարագայում առաջնահերթ է դիտարկել «Սևան» ազգային պարկի կարգավիճակը՝ այն ՅՈՒՆԵՍԿՕ-ի պահանջներին համապատասխան կենսոլորտային պահպանավայրի վերածելու հարցը:

Կենսոլորտային պահպանավայրերի գործառույթները

Նախատեսված է, որ ցանկացած կենսոլորտային պահպանավայր պետք է կատարի երեք հիմնական գործառույթ, որոնք լրացնում և փոխադարձաբար ամրապնդում են մեկը մյուսին: Դրանք են՝

- ***պահպանման գործառույթը***, որի նպատակն

է նպաստել տեսակների, լանդշաֆտների, էկոհամակարգերի և գենետիկ պաշարների բազմազանության պահպանմանը,

- ***զարգացման գործառույթը***, որի նպատակն է նպաստել տնտեսական և հասարակական զարգացմանը, որն ունի հասարակական-մշակութային և էկոլոգիական նշանակություն,
- ***գիտակրթական աջակցության գործառույթը***, որի նպատակն է աջակցել պահպանման ու զարգացման հարցերին առնչվող հետազոտություններին, մշտադիտարկմանը, էկոլոգիական կրթությանը, տեղեկատվության փոխանակմանը տեղային, ազգային և համաշխարհային մակարդակներում:

Կենսոլորտային պահպանավայրերի գոտիները

Կենսոլորտային պահպանավայրերն ունեն-



են երեք փոխկապակցված գոտիներ՝ միջուկային, բուֆերային և աշխատանքային, որոնք ձգտում են կատարել միմյանց փոխլրացնող և ուժեղացնող դերակատարություն:

- Միջուկային գոտու տարածքն ընդգրկում է խստորեն պաշտպանված մի էկոհամակարգ, որը նպաստում է լանդշաֆտների, էկոհամակարգերի, տեսակների և գենետիկ տատանումների պահպանությանը:
- Բուֆերային գոտին շրջապատում է միջուկային տարածքը և օգտագործվում է բարենպաստ ու ճիշտ էկոլոգիական գործունեության համար, որը կարող է նպաստել գիտական հետազոտություններին, մոնիտորինգին, ուսուցմանը և կրթությանը:
- Աշխատանքային գոտու տարածքը պահպանավայրի այն մասն է, որտեղ հասարակական-մշակութային ամենալայն ու էկոլոգիապես կայուն գործունեությունը խթանում է տնտեսական և սոցիալական զարգացումը:

Միայն միջուկային գոտին է պահանջում խիստ իրավական պահպանություն և հետևաբար դրանով կարող է համապատասխանել արդեն գոյություն ունեցող պահպանվող տարածքներին, ինչպիսիք են, օրինակ, բնապահպանական արգելոցը, արգելավայրը կամ ազգային պարկը:

Այս գոտիավորման սխեման աշխարհում գործադրվում է տարբեր ուղիներով՝ ելնելով աշխարհագրական, հասարակական-մշակութային պայմաններից, պահպանության առկա իրավական միջոցներից և տեղային խոչընդոտներից: Այս ճկունությունը կարող է օգտագործվել ստեղծարար ճանապարհով և համարվում է «կենսոլորտային պահպանավայր» հասկացության ամենաբնորոշ գծերից մեկը, որը նպաստում է, որ պահպանվող տարածքները միավորվեն ավելի ընդարձակ լանդշաֆտների մեջ:

ՅՈՒՆԵՍԿՕ-ին դիմելու առաջին քայլերը

Կենսոլորտային պահպանավայր ստեղծելը ժամանակատար գործընթաց է, որը պահանջում է լայն տեղեկատվության հավաքում և հանրային լայն ներգրավվածություն: Այս գործընթացի ժամանակ պետք է առաջինը որոշվի՝ արդյոք տարածաշրջանն ունի՞ կենսոլորտային պահպանավայր դառնալու ներուժ: Հետևաբար առաջին քայլը պետք է լինի տարածաշրջանի ներուժի վերլուծությունն ու իրագործելիության ուսումնասիրությունը:

Ըստ ՅՈՒՆԵՍԿՕ-ի՝ որոշակի քայլեր են անհրաժեշտ կենսոլորտային պահպանավայր ստեղծելու համար: Նախ պետք է ուսումնասիրություն կատարվի, որպեսզի հայտնաբերվի կենսոլորտային պահպանավայրի լավագույն ու ամենանպատակահարմար վայրը: Ապա որոշված վայրի համար անհրաժեշտ է կատարել իրագործելիության (fiesability) ուսումնասիրություն: Վերջում ՅՈՒՆԵՍԿՕ-ի համար պետք է պատրաստվի այն թղթածրարը, որը հիմնավորելու է նշված տարածքում կենսոլորտային պահպանավայրի ստեղծումը:

Կարևոր է նախ, որ գնահատման մեջ նշվեն միջուկային ու բուֆերային համապատասխան գոտիների առկայությունը և այն փաստը, որ տարածաշրջանի բնական որակներն ունեն համաշխարհային կարևորություն: Բացի այդ՝ տվյալ տարածքի՝ կենսոլորտային պահպանավայր դառնալու համար կարևոր նշանակություն ունի նաև համայնքային հստակ աջակցությունը:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի դիմումը բաղկացած է երեք մասից:

1. Առաջին մասն ամփոփումն է, որում նշվում է, թե առաջադրված տարածքն ինչպես է արձագանքում կանոնադրական հիմունքների սահմանած՝ կենսոլորտային պահպանավայրերին բնորոշ գործառույթներին և չափանիշներին: Դրա հետ մեկտեղ ներկայացվում են այս հարցով մտահոգ իշխանությունների հավանությունը փաստող ստորագրությունները:
2. Երկրորդ մասն ավելի շատ մանրամասներ է ներկայացնում և ավելի նկարագրողական բնույթ ունի, անդրադառնում է մարդկային, ֆիզիկական և կենսաբանական հատկանիշներին:
3. Երրորդ մասը բաղկացած է երկու հավելվածներից: Առաջին հավելվածը կիրառվում է կենսոլորտային պահպանավայրերի ցանցի տեղեկատուն թարմացնելու համար, եթե իհարկե տեղանքը ճանաչվել է որպես կենսոլորտային պահպանավայր: Երկրորդ հավելվածը կիրառվում

է կենսոլորտային պահպանավայրերի վերաբերյալ խթանիչ և հաղորդակցական բնույթի նյութեր ապահովելու համար:

Գերմանական «Միխայել Սուքոյ» (Michael Succow) հիմնադրամը, որն ունի հարուստ փորձ կենսոլորտային պահպանավայր ստեղծելու ուսումնասիրություններ կատարելու և ՅՈՒՆԵՍԿՕ-ի փաստաթղթերի ծրարը պատրաստելու ոլորտում, 2017 թվականին Հայաստանի բնապահպանության նախարարության գաղափարաբանական առաջնորդությամբ և Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնի անմիջական մասնակցությամբ նախաձեռնեց անհրաժեշտ նախնական ուսումնասիրություններ՝ բացահայտելու այն վայրերը, որտեղ հնարավոր է ստեղծել կենսոլորտային պահպանավայր: Դիտարկվում էր, որ երկրում այդպիսի հնարավոր տարածք կարող է լինել նաև «Սևան» ազգային պարկը:

«Սևան» ազգային պարկը

Սևանա լիճը պարունակում է Անդրկովկասի ամենամեծ քաղցրահամ ջրային պաշարը և հետևաբար տարածաշրջանում քաղցրահամ ջրի և քաղցրահամ ջրի ձկան ամենակարևոր աղբյուրն է: Պատմականորեն այն կարևոր դեր է խաղացել Հայաստանի համար և մինչ օրս մեծ դեր է խաղում երկրի տնտեսության մեջ՝հանդիսանալով ոռոգման ջրի և ցածր գնի էլեկտրաէներգիայի արտադրության, ինչպես նաև ձկնապաշարների, հանգստի և զբոսաշրջության ապահովման ու կազմակերպման հիմնական աղբյուր:

«Սևան» ազգային պարկը ստեղծվել է 1978 թվականին՝ Սևանա լճի էկոհամակարգերի պահպանման համար: Այն ընդգրկում է Սևանա լիճը և հարակից տարածքները՝ մինչև լճի շրջակայքում գտնվող մայրուղին: Ազգային պարկի համար սահմանվել է պահպանության խիստ ռեժիմ, ինչպես նաև խիստ պաշտպանական, հանգստի և տնտեսական գործունեության գոտիներ: Ազգային պարկի պահպանվող տարածքները շարունակական կամ մշտական գոտիներ չեն (չնայած կոչվում են գոտիներ) և տարածվում են պարկի ամբողջ տարածքում: 3700 հա արգելոցի գոտին բաղկացած է հինգ հիմնական տարածքներից՝ Արտանիշ, Վարդենիս, Լիճք, Նորադուզ և Նորաշեն, ինչպես նաև տասը այլ պահպանվող տարածքներից, որոնք ձգվում են 500 մ երկայնքով՝ խոշոր գետերի շրջակայքում՝ սկսած գետաբերանից: Հանգստի գոտին զբաղեցնում է 4200 հա ափամերձ տարածք, որը նախատեսված է հանգստի և առողջության համար: Այստեղ գործում են սպասարկման տարբեր հաստատություններ, ինչպիսիք են հյուրատները, հյուրանոցները, մասնավոր հանգստի վայրերը և այլն, որոնք տեղակայված են ամբողջ ափամերձ հատվածում, բայց ավելի շատ կենտրոնացած են լճի

արևմտյան մասում:

Սևանի թերակղզին ազգային պարկի ամենամեծ ցամաքային տարածքներից մեկն է, որը տարիների ընթացքում ենթարկվել է մարդածին ճնշման և կորցրել իրեն բնորոշ բնական բուսականությունը:

Արտանիշ թերակղզին պարկի լավագույնս պահպանվող տարածքներից մեկն է: Այն համարվում է բնության բացառիկ հուշարձան և սահմանվել է որպես արգելոցի տարածք: Մոտ 2500 հա ծածկված է եզակի բուսականությամբ: Հատկապես հետաքրքրություն է ներկայացնում քարանձավներ ունեցող հարավային ժայռոտ լանջը:

Պարկի բուսական աշխարհը ներկայացված է 28 տեսակի ծառերի, 42 տեսակի թփերի, 866 տեսակի բազմամյա խոտաբույսերի և 307 տեսակի տարեկան ու երկամյա բույսերի տեսքով: Ազգային պարկի և դրա բուֆերային գոտու բուսական աշխարհը ներառում է մոտ 1600 տեսակի բույսեր, որոնք ներկայացված են ինչպես ջրային, այնպես էլ ցամաքային տեսակներով:

Քսանութ գետեր և հոսանքներ թափվում են Սևանա լիճ, բայց լճից դուրս է գալիս միայն Հրազդան գետը: Այնուամենայնիվ, 1933 թվականից լճից ջրի արտահոսքը արհեստականորեն կազմակերպվել է հիդրոէներգետիկայի և ոռոգման նպատակով:

Մարդածին երկարատև կործանարար ազդեցության հետևանքով Սևանա լիճը Հայաստանի ամենախաթարված էկոհամակարգն է: Այսպես կոչված «Սևանի խնդիրը» ծագել է 19-րդ դարում: Այդ ժամանակից ի վեր հիմնական մարտահրավերը եղել է այն հարցը, թե ինչպես օգտագործել լճի ջրային պաշարները, քանի որ Սևանա լիճը ճանաչվել է Հայաստանի համար կարևոր ջրային պաշար: Լիճը դեռևս քայքայված վիճակում է, իսկ դրա՝ որպես արտադրության և կենսապահովման ձկնորսական կարևոր տարածքի ապագան՝ վտանգված: Վտանգված է մնում նաև թռչնատեսակների բնադրման և գաղթի կարևոր կենսամիջավայրը:

«Սևան» ազգային պարկը կենսոլորտային պահպանավայր դարձնելու մարտահրավերը

Սևան» ազգային պարկի սպառնալիքների ցանկը ընդարձակ է՝ օրինական և անօրինական

ձկնորսություն, ջրերի աղտոտում, արոտավայրերի անկանոն շահագործում, աղբահանություն, հողերի յուրացում, տուրիզմ և հանգիստ, հողօգտագործման փոփոխություն, որս, որսագողություն, անտառահատում, հանքարդյունաբերություն և այլն: Հետևաբար «Սևան» ազգային պարկի հիման վրա կենսոլորտային պահպանավայր ստեղծելը դժվարին գործ է: Դա անելու համար անհրաժեշտ են՝

- ձկնորսության կանոնակարգերի խստագույն հսկողություն և կայուն ձկնորսության սխեմայի մասին համաձայնագիր, որը ձեռնտու կլինի տեղի բնակչությանը,
- թափոնների (նաև կեղտաջրերի) արդյունավետ կառավարում, երկարաժամկետ պաշտոնական հանձնարարականներ/կարգավորող շրջանակներ և կոյուղաջրերի համակարգերի օրինական կիրառում (առևտրային տուրիզմի մատակարարների համար),
- ջրի մակարդակի բարձրացմանը խոչընդոտող շենքերի քանդում և ենթակառուցվածքային փոփոխություններ,
- դրենաժի և էրոզիայի վերահսկում,
- կայուն հողօգտագործման խթանում և իրավական աջակցություն,
- տեղական բնակչության հետևողական ներգրավումն ու մասնակցությունը նախագծման և զարգացման ծրագրերում,
- բնական ափի վերականգնում (թռչունների հանգստավայրեր),
- և ամենակարևորը՝հիմնական գոտու խիստ պահպանվածություն:

Հիմնական գոտու խիստ պահպանվածությունը հնարավոր է միայն հաշվի առնելով վերակենտրոնացումը՝ վերանայելով ազգային պարկի սահմանները: Մասնավորապես մինչ այժմ լճի ափին գտնվող կենսաբազմազանությունը բավականին աղքատ է, և ոչ մի ազգային անտառ դրանում ներառված չէ: Հետևաբար կենսոլորտային պահպանավայրերի ստեղծման նախադրյալները կլինեն հիմնական գոտու վերակենտրոնացումը, այսինքն՝ ոչ թե ամբողջ լճի, այլ ավելի շուտ շրջակա էկոհամակարգերի ներառումը, և հետևաբար ազգային պարկի խոշորացումը լրացուցիչ պահպանվող տարածքների միջոցով, օրինակ՝ Մասրիկ գետի և նրա վտակների ներառումը, որոնք հոսում են քաղաքային տարածքների հարևանությամբ: Վերջինս մեծ նշանակություն ունի, քանի որ այն ձկների բազմացման անհրաժեշտ միջավայր է:

Ըստ Հայաստանի կառավարության և ոլորտի փորձագետների՝ Սևանն ունի զբոսաշրջության մեծ ներուժ, մասնավորապես բնական միջավայրին համահունչ սպորտը և էկոտուրիզմը՝ սուզում, պարագլայդինգ և ծայրահեղ (էքստրեմալ) սպորտի այլ ձևեր, ինչպես նաև սպորտային ձկնորսություն, թռչունների դիտում, թիթեռների դիտում (արդեն գոյություն ունի, բայց հավանաբար կարող է հետագայում զարգանալ), բույսերի դիտում (հաշվի առնելով կարևոր բույսերի տարածքները՝ Սևան, Արդանի թերակղզի, Արեգունիի գիհի անտառտնտեսություն) և արշավ:

Եզրափակում

Ինչպես վերը նշվեց, 2017 թվականին Հայաստանի բնապահպանության նախարարը առաջ էր մղում կենսոլորտային պահպանավայրերի ստեղծան գաղափարը, որը ՀՅ Դաշնակցության կողմից պաշտպանվող սոցիալ-տնտեսական ներառական և էկոլոգիական հավասարակշռված քաղաքականության կիրառական հիմնական մոտեցումն է:

Ինչո՞ւ է կենսոլորտային պահպանավայրերի զարգացումը լավ գաղափար Սևանի համար: Ինչո՞ւ օգտակար կլինի: Քանի որ Սևանա լճին առնչվող յուրաքանչյուր գործողություն մեծ ուշադրության և բազմակի ճշգրտման կարիք ունի, խորհուրդ է տրվում դրսևորելու կշռադատված մոտեցում: Իրոք, կենսոլորտային պահպանավայրը կարող է օգնել համայնքների հասարակական-տնտեսական վիճակի բարելավմանը՝ ստեղծելով նոր հնարավորություններ, լավ հիմք ձևավորել այլընտրանքային և կայուն զբոսաշրջության համար, ինչպես նաև կազմակերպել օրգանական արտադրություն և այլն: Քանի որ Սևանի շուրջ զբոսաշրջության զարգացումը կայացած փաստ է, հետևաբար կարիքները կառավարելու համար Սևանում կենսոլորտային պահպանավայրերի զարգացման հիմնական տեսլականը պայմանավորված է նաև զբոսաշրջության կայուն զարգացմամբ՝ ներկայումս միջին հաշվով դիտարկվող 60-օրյա տարեկան հանգստի շրջանը վերածելով ողջ տարվա ընթացքում գործունեության ծավալման շրջանի:

Ամփոփելով արձանագրենք, որ այն աշխատանքը, որը սկսվել է 2017 թվականին ու մնացել անկատար, պետք է շարունակել: Անհրաժեշտ է կատարել իրագործելիության մանրամասն ուսումնասիրություն, պատրաստել դիմումի փաստթղթային ծրարը և դիմել ՅՈՒՆԵՍԿՕ-ին՝ Սևանում կենսոլորտային պահպանավայր ստեղծելու համար:

«Բարեփոխումներ» Ադրբեջանում՝ ընտանեկան միապետության ամրապնդման հեռանկարով

Միքայել Հաջյան
Քաղաքական մեկնաբան

Հանրագիտարանային ճշմարտություն է, որ միապետությունը (լատին. monarchia) պետական կառավարման այն ձևն է, որի դեպքում գերագույն իշխանությունը մասամբ կամ լիովին պատկանում է մեկ անձի՝ միապետին, ով ցմահ կամ մինչև գահից հրաժարականը գլխավորում է պետության գլխի պաշտոնը՝ կրելով համապատասխան տիտղոս (արքա, ցար, կայսր, արևելքում՝ սուլթան, խան, Հին Եգիպտոսում՝ փարավոն և այլն): Որպես կանոն, միապետությունները ժառանգական են: Դրանցում մարդիկ պաշտոնների են նշանակվում ոչ թե ըստ իրենց անձնական հատկանիշների, այլ ըստ պետության առաջնորդի հետ ունեցած ազգակցական կապերի: Ինչ խոսք, գոյություն ունեն նաև միապետություններ, որոնց դեպքում իշխանությունը մասամբ պատկանում է միապետին, բայց փաստացի խորհրդարանի ձեռքում է (Մեծ Բրիտանիա, Բելգիա, Դանիա, Նիդեռլանդներ, Իսպանիա և այլն):

Որպես պետություն՝ Ադրբեջանը, անշուշտ, չի դասվում վերը նշված պետական համակարգերից և ոչ մեկի շարքին: Համաձայն 1995 թ. նոյեմբերի 12-ին ընդունված առաջին Սահմանադրության՝ այն հանրապետություն է՝ նախագահին վերապահված լայն լիազորություններով: Երկրի բարձրագույն օրենսդիր ու գործադիր իշխանությունները ձևավորվում են համապետական ընտրություններով, իսկ պետության կառավարումը հիմնված է օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների տարանջատման սկզբունքի վրա:

Հիմնական օրենքի հետագա փոփոխությունները և լրացումները չեն անդրադարձել նշված սահմանադրական հիմնադրույթներին, այլ կերպ ասած՝ պահպանվել է նախագահական կառավարմամբ գործող հանրապետության կարգավիճակը: Մյուս կողմից, թեկուզ այդ փոփոխություններն ու լրացումները բավական նախադրյալներ են պարունակում միապետական կարգերին հատուկ ժառանգաբար փոխանցվելու հնարավորության համար, բայց և այնպես այդ ամենը ներկայացվում է ժողովրդավարության քողածածկույթի ներքո:

Տակավին Հեյդար Ալիևի նախագահության օրոք Սահմանադրության առաջին փոփոխությունների համատեքստում (24 օգոստոսի 2002 թ.), որը ներառում էր երկրի նախագահի կողմից առաջարկված 39 լրացում 23 հոդվածում, ամրագրվել է, որ հանրապետության նախագահի լիազորությունները իր կողմից վաղաժամկետ վայր դնելու դեպքում փոխանցվում են վարչապետին, այլ ոչ թե, ինչպես մինչ այդ ամրագրված էր, խորհրդարանի նախագահին: Հիշենք, որ դա այն ժամանակ էր, երբ Ադրբեջանի գործող նախագահն առողջական ծայրաստիճան լուրջ խնդիրներ ուներ և որոշել էր իշխանության սանձերը հանձնել որդուն՝ Իլհամին: Ի դեպ, նախքան այդ Իլհամ Ալիևը,

ով Մոսկվայում հոր պաշտոնանկությունից հետո հեռացել կամ հեռացվել էր Մոսկվայի միջազգային հարաբերությունների պետական ինստիտուտում դասախոսական աշխատանքից, հիմնականում զբաղված էր մասնավոր բիզնեսով, այսպես ասած, չարչիական գործունեությամբ և Մոսկվա-Ստամբուլ ու հակառակ ուղղությամբ օդային երթուղու մշտական ուղևորներից էր, իսկ, ըստ Ադրբեջանի պաշտոնական լրատվության, 1991 թվականից գլխավորելով «Օրիենտ» ֆիրման, որն իր գործունեությամբ կապված էր Թուրքիայի հետ, հաջորդ տարվանից բնակություն էր հաստատել Ստամբուլում: Մինչդեռ ոչ պաշտոնական աղբյուրների համաձայն՝ Ստամբուլում նա խաղատների մշտական հաճախորդն էր և քամուն էր տալիս հոր կուտակած փողերը, քանիցս ընկել է աղմկահարույց պատմությունների մեջ, իսկ մի անգամ էլ, ասում են, Հեյդար Ալիևի խնդրանքով միջամտել ու պատանդի ծայրաստիճան նվաստացուցիչ վիճակից նրան հանել, փրկել է այն ժամանակ Ստամբուլի քաղաքապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանը՝ անձամբ վճարելով Իլհամի՝ 6 միլիոն դոլարի հասնող խաղատան պարտքը: Այդ միջադեպից հետո է, որ նախագահ Ալիևը խաղամոլ որդուն 1994 թ. հարկադրաբար վերադարձրել է Բաքու և, այսպես ասած, մի «թեթև» գործի դրել: Նախ նրան նշանակել է Ադրբեջանի պետական նավթային ընկերության նախագահի տեղակալ, հետագայում՝ 1-ին տեղակալ, ապա՝ խորհրդարանի պատգամավոր, հանրապետության ազգային օլիմպիական կոմիտեի նախագահ, իշխող «Նոր Ադրբեջան» կուսակցության նախագահի տեղակալ, այնուհետև՝ 1-ին տեղակալ, Ադրբեջանի Միլլի մեջլիսի պատվիրակության ղեկավար Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովում և այլն, միով բանիվ՝ մինուճար որդու համար ստեղծելով բոլոր նպաստավոր պայմանները հարկ եղած դեպքում, հնարավոր X ժամին իրեն արժանավայել փոխարինելու համար:

Ըստ երևույթին, կյանքի մայրամուտն ապրող Ադրբեջանի զառամյալ ղեկավարը, ոչ առանց իր մերձավոր շրջապատի, առանձնապես իր իսկ գլխավորած նախիջևանյան կլանի խորհրդատվության,

արդեն իսկ մարգարեաբար կանխատեսում էր այդ վճռորոշ X ժամը, ինչը իրականում երկար սպասեցնել չտվեց:

Սահմանադրական առաջին փոփոխություններից մեկ տարի էլ չէր անցել, երբ ծանր հիվանդ Հեյդար Ալիևը 2003 թ. հունիսի 8-ից հերթական անգամ բուժումներ էր անցնում նախ Անկարայում՝ Թուրքիայի ռազմաբժշկական ակադեմիայի «Գյուլխանե» հիվանդանոցում, իսկ մեկ ամիս անց՝ օգոստոսի 7-ից, Միացյալ Նահանգների Օհայո նահանգի Քլիվլենդ քաղաքի հոսպիտալում, ուր նա փոխադրվել էր, թող տարօրինակ չթվա, եթե ասեմ՝ Ռուսաստանի արտակարգ իրավիճակների նախարարության կողմից հատուկ հատկացված ինքնաթիռով: Կյանքի վերջին տարիներին Հեյդար Ալիևը քանիցս բուժվել էր ամերիկյան այդ հիվանդանոցում, որտեղ երեք վիրահատություն էր տարել, այդ թվում՝ աորտապսակային զուգահեռման վիրահատություն: Այդ ընթացքում ադրբեջանական խորհրդարանի հապշտապ ընդունած որոշումներով վարչապետ Արթուր Ռասիզադեն միանգամայն անսպասելի, իր դիմումի համաձայն, ազատվում է զբաղեցրած պաշտոնից, և կառավարության ղեկավար է կարգվում Իլհամ Ալիևը: Միևնույն ժամանակ Ադրբեջանում և նրա սահմաններից դուրս համառորեն լուրեր էին շրջանառվում, որ Հեյդար Ալիևը վաղուց մահացել է, ընդ որում՝ ոչ թե ամերիկյան Քլիվլենդում, այլ ավելի շուտ՝ թուրքական «Գյուլխանե»-ում (հիշենք Վրաստանի նախագահ Էդուարդ Շևարդնաձեի հապշտապ հղած ցավակցական հեռագիրը), և Միացյալ Նահանգներ էր փոխադրվել ոչ թե Ադրբեջանի հիվանդ նախագահը, այլ նրա անշնչացած մարմինը՝ Բաքվում կիսատ մնացած որոշ կազմակերպչական հարցերի լուծման համար ժամանակ շահելու նպատակով: Իսկ նպատակը երկրի նախագահի լիազորությունները, համաձայն փոփոխված սահմանադրական նորմի, դեռ նոր-նոր վարչապետ կարգված նրա որդուն՝ Իլհամ Ալիևին, «ժամանակավորապես» հանձնելն էր: Իբր թե տակավին «Գյուլխանե»-ում գտնվելու օրերին ավագ Ալիևն իր ստորագրությամբ հաստատել էր խորհրդարանի որոշումը կրտսեր Ալիևին վարչապետ նշանակելու մասին, իսկ Քլիվլենդ տեղափոխվելուց հետո պաշտոնապես ինքնաբացարկ էր հայտնել առաջիկա նախագահական ընտրություններում որպես նախագահի թեկնածու մասնակցությունից՝ հօգուտ իր հետ միաժամանակ նախագահի թեկնածու առաջադրված Իլհամ որդու: Քլիվլենդում ամերիկացի բժիշկները տակավին «շարունակում էին» Ադրբեջանի

հիվանդ նախագահի «ինտենսիվ բուժումները», իսկ նրա հայրենի երկրում արդեն իսկ թափ էր առել նախագահական ընտրությունների քարոզարշավը: Ի վերջո 2003թ. հոկտեմբերի 15-ին անցկացվեցին նախագահական ընտրությունները, և, չնայած միջազգային դիտորդական առաքելությունների ահազանգերին առ այն, որ դրանց ընթացքում արձանագրվել են բազմաթիվ կոպիտ խախտումներ, իսկ քաղաքական ընդդիմությունը, չճանաչելով հրապարակված արդյունքները, հաջորդ օրը բազմահազար բողոքավորներով հեղեղեց Բաքվի կենտրոնական փողոցներն ու հրապարակները, համաձայն նախասահմանված խաղի կանոնների, Ադրբեջանի ԿԸՀ-ն հայտարարեց, որ ընտրություններում 79,46 տոկոսով հաղթել է նախագահի թեկնածու Իլհամ Ալիևը: Իհարկե, միջազգային դիտորդական առաքելությունները, ինչպես սովորաբար լինում է, բավարարվեցին արձանագրված խախտումների վերաբերյալ միանգամյա ահազանգման նախադեպով՝ կամա թե ակամա ընդունելով, որ դրանք էականորեն չեն ազդել քվեարկության արդյունքների վրա: Բողոքի ելած ադրբեջանական ընդդիմությունը, բառիս բուն իմաստով, դաժանորեն ջախջախվեց ներքին զորքերի գնդի և մյուս ուժային կառույցների կողմից, ինչը հանգեցրեց ցուցարարների շրջանում մեծ թվով վիրավորների ու զոհերի: Ի դեպ, բողոքավոր ընդդիմության հետ այդ արյունալի ընդհարումները գործող իշխանություններն արձանագրեցին որպես օրինական իշխանության տապալման առաջին փորձ Իլհամ Ալիևի նախագահական կառավարման օրոք: Հետագայում դարձյալ հեղաշրջման նման փորձեր արձանագրվեցին, որոնք, սակայն, կապված էին ոչ միայն հոգեվարք ապրող ավանդական ընդդիմության քաղաքական գործունեության, այլև հետզհետե սրվող ներիշխանական և միջկլանային պայքարի հետ, որ առ այսօր մղվում է ընդհանուր կերատաշտակից առավել արտոնյալ պայմաններով օգտվելու համար: Մասնավորապես նշվում են 2005 թ. հոկտեմբերյան դեպքերը, երբ պաշտոնապես հայտարարվեց պետական հեղաշրջման փորձի մասին, որի մեջ մեղադրվեց և ձերբակալվելով տարբեր ժամկետներով ազատազրկման դատապարտվեց 12 մարդ: Դրանց թվում՝ տնտեսական զարգացման նախարար Ֆարհադ Ալիևը, ֆինանսների նախարար Ֆիքրեթ Յուսիֆովը, առողջապահության նախարար, «Նոր Ադրբեջան» կուսակցության իրական հիմնադիր, «երազների» (երևանցի, հայաստանցի ադրբեջանցիների) պարագլուխ Ալի Ինսանովը, «Ադրքիմիա» պետական կոնցեռնի նախագահ Ֆիքրեթ Սադիխովը, Ադրբեջանի գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ Էլդար Սալաևը և ուրիշներ: Իրականում առավելապես այդ և հետագա «բացահայտումները» միևնույն կերատաշտակի մոտ խմբված քաղաքական ընտրանու շարքերի զտման ու նոսրացման փորձեր էին՝ պայմանավորված ազդեցության ոլորտների և, ըստ այդմ, ֆինանսատնտեսական աղբյուրների վերաբաշխման անհրաժեշտությամբ, ինչը և հաստատվեց հետագա բոլոր տարիներին՝ իշխանական վերնախավում

իրականացված կադրային փոփոխությունների ու նոր ձերբակալությունների համապատկերում:

Սակայն, առաջ չընկնելով այդ և այլ իրադարձությունների հետագա զարգացումներից, արձանագրենք, որ Ադրբեջանի նորընտիր նահագահի առաջին իսկ հրամանագրերից մեկով Արթուր Ռասիզադեն իսկույն ևեթ վերականգնվեց կառավարության ղեկավարի ժամանակավորապես լքած պաշտոնում, իսկ դեկտեմբերի 12-ին գուժվեց Քլիվլենդի հիվանդանոցում Հեյդար Ալիևի մահվան մասին: Ադրբեջանում ժառանգականության սկզբունքով բարձրագույն իշխանության անցնցում փոխանցումը հորից որդուն, փաստորեն, իրականացվել էր, և, համաձայն խաղի կանոնների, նախագահական ընտրություններում Իլհամ Ալիևի հաղթանակն ազդարարող ծնծղաներից հետո կարելի էր հնչեցնել նաև ընտանեկան ու համազգային սգո մեղեդին: Երեք օր անց Ադրբեջանի նախկին նախագահի՝ Միացյալ Նահանգներից փոխադրված դին հանդիսավորապես հուղարկավորվեց Բաքվի պատվավոր հուղարկավորումների ծառուղիում:

Ադրբեջանում սահմանադրական փոփոխությունների երկրորդ փուլը, դարձյալ միանձնյա իշխանության պահպանման հեռանկարով, տեղի ունեցավ 2009 թ. մարտի 18-ին: Թեև հանրաքվեի էր դրված հիմնական օրենքի 29 հոդվածի փոփոխություն, սակայն դրանցից առանցքայինը 101-րդ հոդվածի 5-րդ կետն էր: Այն վերաբերում էր հանրապետության նախագահի ընտրության սահմանադրական հիմունքին, համաձայն որի՝ «Ոչ ոք իրավունք չունի Ադրբեջանի Հանրապետության նախագահ ընտրվելու ոչ ավելի, քան երկու ժամկետով»: Մինչդեռ առաջարկված և ընդունված տարբերակը հնչում է հետևյալ կերպ. «Եթե պատերազմի պայմաններում ռազմական գործողությունների անցկացումը թույլ չի տալիս ընտրել Ադրբեջանի Հանրապետության նախագահ, ապա Ադրբեջանի Հանրապետության նախագահի լիազորությունների ժամկետը երկարաձգվում է մինչև ռազմական գործողությունների ավարտը: Այդ մասին որոշումն ընդունվում է Ադրբեջանի Սահմանադրական դատարանի կողմից՝ այն պետական մարմնի դիմումի հիման վրա, որն ապահովում է ընտրությունների (հանրաքվեի) անցկացումը»: Դժվար չէ կռահել, որ խոսքը վերաբերում էր նույն պաշտոնում միևնույն անձի, տվյալ պարագայում՝ գործող նախագահ Իլհամ Ալիևի լիազորությունների երկարաձգման և հաջորդաբար՝ երրորդ և ավելի անգամ ընտրվելու սահմանադրական սահմանափակումը վերացնելու խնդրին, ինչից նա հետագայում հաջողությամբ օգտվեց 2013 և 2018 թվականներին կայացած համապատասխանաբար հերթական և արտահերթ ընտրություններում: Պարզապես խնդրի լուծումը սահմանադրականից սահուն կերպով փոխադրվեց, այսպես ասած, «տեխնիկական» հարթություն: Նախ՝ Ադրբեջանն այն ժամանակ և առ այսօր իրեն համարում է պատերազմի մեջ հարևան Հայաստանի Հանրապետության հետ՝ Լեռնային Ղարաբաղի «բռնազավթված» տարածքն ազատագրելու անհրաժեշտությամբ, իսկ ռազմական

գործողությունները, չնայած 1994 թ. մայիսյան անժամկետ հրադադարին, գրեթե անընդհատ կրկնվում են այս կամ այն տեսքով ու ծավալով, բնականաբար, բացառապես ադրբեջանական զորքերի նախաձեռնությամբ: Ի դեպ, ի շարս այլ քաղաքական ու ռազմական դրդապատճառների, որոնք առանձին վերլուծության նյութ են, այդ խնդրին էր հետամուտ նաև 2016 թ. ապրիլյան պատերազմը, որ Բաքուն սանձազերծեց ադրբեջանա-արցախյան հակադիր զորքերի շփման գծի ողջ երկայնքով: Մյուս կողմից՝ Ալիևի համար ամենևին խնդրահարույց չէր ստանալ ընտրությունները (հանրաքվեն) ապահովող «գրպանային» պետական մարմնի՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համապատասխան դիմումը «գրպանային» կարգավիճակի տեր մեկ այլ պետական մարմնին՝ Սահմանադրական դատարանին, և վերջինիս դրական եզրակացությունը:

Անշուշտ, իրատեսական էր ի սկզբանե լայնորեն տարածված այն կարծիքը, թե այդ հանրաքվեն կոչված էր հասկացնելու ինչպես քաղաքական ընդդիմությանը, նույնպես և իշխող ընտրանու իրար հետ մրցակցող կլանային խմբավորումներին, որ մոտ ապագայում Ադրբեջանում իշխանափոխություն տեղի չի ունենա: Ընդդիմությունն Ալիևին մեղադրում էր, որ նա Ադրբեջանը վերածել է միապետության, իսկ Եվրոպական հանձնաժողովը հանրաքվեն գնահատում էր որպես «լուրջ հետքայլ ժողովրդավարության զարգացման գործում»: Վենետիկի հանձնաժողովն իր եզրակացության մեջ Ադրբեջանն անվանում էր «մի երկիր, որտեղ նախագահն իր ձեռքում լայնածավալ իշխանություն է կենտրոնացրել»:

Ադրբեջանում մենիշխանության կամ նոր միապետականության հաստատման միտումն առավել պարզորոշ ընդգծվեց հատկապես 2016 թ. սեպտեմբերի 26-ի սահմանադրական փոփոխությունների հանրաքվեի ժամանակ, որն անցկացվեց Իլհամ Ալիևի նախագահության երրորդ ժամկետում: Եվ եթե նախորդ հանրաքվեի սահմանադրական փոփոխություններն առաջարկվել էին իշխող «Նոր Ադրբեջան» կուսակցության նախաձեռնությամբ, ապա այս անգամ նախաձեռնողի դերում հանդես եկավ անձամբ պետության ղեկավարը՝ հանրության հավանությանը ներկայացնելով ընդհանուր առմամբ 29 փոփոխություն: Մասնավորապես քաղաքացիներին առաջարկվեց կողմ քվեարկել, նախագահական լիազորությունների ժամկետը՝ 5-ից 7 տարի դարձնելուն: Սահմանվեցին 1-ին փոխնախագահի և փոխնախագահի պաշտոնները:

Բացի այդ՝ առաջարկված փոփոխությունների մեջ կար ևս երկու կետ, որոնք շոշափում էին օրենսդիր և գործադիր իշխանությունների գործունեությունը: Բանն այն է, որ եթե Հեյդար Ալիևի օրոք՝ 2002 թ. անցկացված սահմանադրական հանրաքվեի արդյունքներով նահագահի լիազորությունները իր վաղաժամկետ հեռանալու դեպքում հանձնվում էին ոչ թե խորհրդարանի նախագահին, այլ վարչապետին, ապա նոր փոփոխության համաձայն դրանք անցնելու էին 1-ին փոխնախագահին: Միևնույն ժամանակ գործող նախագահն օժտվելու էր խորհրդարանը լուծարելու և պետության ղեկավարի արտահերթ ընտրություններ նշանակելու իրավունքով: Այն, որ այդ փոփոխությունները նույնպես հեռագնա նպատակների էին հետամուտ միանձնյա իշխանության ամրապնդման, և փոխանցման ժառանգականության սկզբունքի արմատավորման ուղղությամբ, այլևս ոչ մի կասկած չէր հարուցում ներքին և արտաքին վերլուծական կենտրոններում:

Նշենք, որ այդ հանրաքվեն նույնպես արժանացավ խիստ քննադատության ինչպես միջազգային հանրության, այնպես էլ քաղաքական ընդդիմության կողմից: Եվրոպայի խորհուրդը, օրինակ, այն բնութագրեց որպես «հարված երկրի ժողովրդավարական զարգացմանը»: Եվրոպական հեղինակավոր կառույցի կողմից իրադրության նման բնորոշումն ինքնին որոշակի տարակուսանքի տեղիք է տալիս, քանզի միանգամայն անհասկանալի էր, թե ադրբեջանական քաղաքական առօրյայում մինչ այդ առանձնապես ինչ զարգացումներում էր հատկանշվում ու դրսևորվում այդ եվրոպական արժեքը՝ ժողովրդավարությունը: Այս առումով, կարծում եմ, առավել իրատեսական է ՌԴ ԳԱԱ հետխորհրդային հետազոտությունների կենտրոնի գիտաշխատակից, պատմաբան Վադիմ Մուխանովի այն գնահատականը, որ Ադրբեջանում ձևավորվող քաղաքական համակարգը ոչ այլ ինչ է, քան «նոր միապետականություն» կամ, «նեոմոնարխիզմ»: Նույն տեսակետին էր նաև ադրբեջանական ընդդիմությունը՝ համարելով, որ Իլհամ Ալիևը նախապատրաստվում է իշխանության փոխանցմանը ժառանգականության ապահովման սկզբունքով՝ ոչ հեռու ապագայում պետության ղեկը որդուն՝ կրտսեր Հեյդարին հանձնելու նպատակով՝ այդ շղթայում որպես միջանկյալ անցումային օղակ դիտարկելով իր տիկնոջ՝ Մեհրիբան Ալիևայի կողմից երկրի կառավարման տարբերակը:

Ինչո՞վ էր պայմանավորված այդ շտապողականությունը, մանավանդ որ գործող նախագահը (այն ժամանակ հազիվ 55 տարեկան էր) արտաքուստ կարծես թե բավական կենսունակ էր: Ադրբեջանցի ընդդիմադիր վերլուծաբանները խնդիրը պայմանավորում էին տարբեր դրդապատճառներով: Նախ և առաջ նշվում էր նախագահի առողջական վիճակը: Գաղտնիք չէ, որ Իլհամ Ալիևը դեռ մանկուց տառապում է հոգեկան խանգարմամբ կամ, մասնագիտական ախտորոշմամբ, երկբևեռ խանգարմամբ, ինչը, չնայած խորհրդային, ապա և արտասահմանյան հեղինակավոր մասնագետների կողմից իրականացված պարբերական բուժումներին, բարելավման առումով առ այսօր էականորեն չի փոփոխվել: Երկրորդ պատճառն Ադրբեջանի երկու խոշորագույն կլանների՝ Ալիևների և Փաշաևների անզիջում մրցակցությունն է և վերջինիս գերակշիռ ազդեցությունը թե՛ անձամբ պետության ղեկավարի վրա՝ շնորհիվ իր տիկին, Փաշաևների գերդաստանի դուստր Մեհրիբան Ալիևայի, և թե՛ այն բանի որ երկրի սոցիալ-տնտեսական ոլորտում արդյունքների վերաբաշխումն ավելի ու ավելի է ծանրանում այդ կլանի նժարի վրա: Որպես արդյունք՝ Իլհամ Ալիևի գլխավորած նախիջևանյան կլանը հետզհետե կորցնում է դիրքերը թե՛ տնտեսության մեջ և թե՛ պետության կառավարման լծակների համալիրում: Երրորդ պատճառը, որ ոչ պակաս կարևոր է, կապված է Ալիևների ընտանիքի անդամների՝ երկրից կողոպտած և արտասահմանում պահվող անհաշիվ հարստության ճակատագրի հետ, որի ապահովությունը գերդաստանը, ըստ երևույթին, տեսնում է իշխանության բացառապես անցնցում ժառանգական փոխանցման մեջ:

Եվ ահա հազիվ մի քանի ամիս անց՝ 2017 թ. փետրվարի 21-ին, Իլհամ Ալիևի հրամանագրով, ինչպես որ կանխատեսվում էր, երկրի առաջին տիկինը՝ Հեյդար Ալիևի անվան հիմնադրամի գլխավոր տնօրեն, 2005 թվականից Միլլի մեջլիսի պատգամավոր Մեհրիբան Ալիևան, հաստատվեց Ադրբեջանի 1-ին փոխնախագահի պաշտոնում՝ որոշակի էական լիազորություններով՝ ընդհուպ մինչև կառավարության գործունեության համակարգումն ու վերահսկողությունը: Այդ նշանակումը, որով Իլհամ Ալիևը վերջնականապես բացեց իր խաղաքարտերը, կարելի է ասել, ռումբի սպասելի պայթյունի ազդեցություն ունեցավ թե՛ Ադրբեջանում և թե՛ նրա սահմաններից դուրս: Ներկայացնեմ ընդամենը երկու կարծիք: Այսպես, ՌԴ ԳԱԱ Սևծովյան տարածաշրջանի երկրների սոցիալ-քաղաքական հետազոտությունների ինստիտուտի ավագ գիտաշխատող, պատմաբան Վլադիմիր Նովիկովի գնահատմամբ, «Այդ նշանակմամբ նա (Իլհամ Ալիևը - Մ. Հ.) կատարեց հերթական քայլը հետագայում իր իշխանությունը դինաստիայի վերածելու ճանապարհին»: Իսկ Ադրբեջանում ԱՄՆ նախկին դեսպան Ռիչարդ Կոզլարիչն Իլհամ Ալիևի կողմից տիկնոջը երկրի 1-ին փոխնախագահի պաշտոնում նշանակումն անվանել է «միապետության հաստատման ուղղությամբ կատարված քայլ»:

Ադրբեջանական հանրության շրջանում շրջանառվող և հատկապես ընդդիմադիր մամուլում, մասնավորապես «freeazerbaijan.info» լրատվական կայքում հրապարակված տեղեկատվության համաձայն՝ խնդիրը մասամբ կապված է Ալիևներ զույգի ընտանեկան մթնոլորտի, ավելի կոնկրետ՝ խանդի հողի վրա տիկնոջ կողմից ամուսնուն առաջադրված փոխզիջումային պահանջների հետ: Պարզվում է, որ Իլհամ Ալիևն արտամուսնական կապի մեջ էր ադրբեջանական ավիաուղիների «ԱԶԱԼ» ընկերության նախագահ Ջահանգիր Ասկերովի ամուսնացած դստեր՝ Ջամիլայի հետ, և այդ կապից ծնվել է նրանց աղջիկը, որին կնքել են Ամինա անունով: Ամուսնուն

կասկածելով դավաճանության մեջ՝ Մեհրիբան խանումը Փաշաների կլանին դասվող, այն ժամանակ ազգային անվտանգության նախարար, գեներալ Էլդար Մահմուդովին և կապի ու տեղեկատվական տեխնոլոգիաների նախարար Ալի Աբասովին հանձնարարում է գաղտնի տեսանկարել, ինչպես նաև գաղտնալսել ամուսնու հեռախոսազրույցները: Առաջին տիկնոջ կասկածները հաստատվում են, և նա կտրուկ պահաջ է դնում ամուսնու առջև՝ որպես բարոյական փոխհատուցում իշխանություն տալ իրեն, ինչը և անհապաղ կատարվում է. Ադրբեջանի առաջին տիկինը, ինչպես նշեցի, ամուսնու հրամանագրով նշանակվում է պետության 1-ին փոխնախագահ: Իհարկե, բացահայտվում է նաև գաղտնանկարահանման ու գաղտնալսման պարագան, և մեղավոր նախարարներն ու նրանց որոշ ենթականեր աշխատանքից ազատվում ու ձերբակալվում են, բայց դա երևի թե այնքան էլ էական չէ: Ռուսական առածն ասում է. «Անտառը հատելիս տաշեղները թռչում են»: Ամուսնու սիրային կապը վերջնականապես դադարեցնելու համար Մեհրիբան խանումն ավագ դստերը՝ Լեյլային, հորդորում է որդեգրել փոքրիկ Ամինային, որը ներկայումս իր մանկությունն է վայելում այդ ընտանիքում՝ պարբերաբար վայելելով նաև հարազատ հոր գուրգուրանքները:

Բայց ընդունենք, որ Ադրբեջանում իշխանության ժառանգական փոխանցման խնդրում ներկայացված կենցաղային դրվագը ոչ ավելին, քան ներպալատական ինտրիգ էր, որպիսիք անհաշիվ են աշխարհի շատ այլ երկրներում: Մինչդեռ գործընթացի առավել քան վճռորոշ քայլերը տեղի էին ունենում ու շարունակում են տեղի ունենալ քաղաքական մակարդակում: Արդեն երրորդ տարին է, ինչ արմատական բարեփոխումների անվան տակ համատարած կադրային զտումներ ու փոփոխություններ են կատարվում իշխանության բոլոր ճյուղերում ու մակարդակներում՝ սկսած նախագահի աշխատակազմից մինչև կառավարություն, խորհրդարան, ուժային և իրավապահ կառույցներ, շրջանային գործադիր ու տեղական ինքնակառավարման մարմիններ և այլն: Հատկանշականն այն է, որ խորհրդային իրականությունից բոլորիս քաջածանոթ «Կադրերն են որոշում ամեն ինչ» կարգախոսի ներքո տեղի ունեցող կադրային ներուժի թարմացման ու երիտասարդացման քաղաքականության այդ հորձանուտում կառավարման ասպարեզից հեռացվում են հիմնականում Իլհամ Ալիևի գլխավորած կլանի ներկայացուցիչները՝ ծագումով նախիջևանցիներ, իսկ ահա ազատված պաշտոնների են նշանակվում Մեհրիբան Ալիևայի գլխավորած Փաշաների կլանի անդամները՝ գրեթե բացառապես բաքվեցիներ և ապշերոնցիներ: Ասում են՝ Ադրբեջանի 1-ին փոխնախագահը սովորաբար արգահատանքով է արտահայտվում առաջինների մասին՝ համարելով նրանց «խավարամիտ գավառացիներ», և կտրականապես մերժում է նրանց որևէ նշանակալի առաջխաղացում իշխանության հիերարխիայում: Ասում են նաև, որ ոչ հեռու անցյալում կադրերին խմբավորում ու տարբեր պաշտոնների համար երաշխավորում էր Հեյդար Ալիևի ժամանակներից ի



վեր Ադրբեջանում «գորշ կարդինալի» դեր ստանձնած Ռամիզ Մեհթիևը՝ նախագահի աշխատակազմի արդեն նախկին ղեկավարը և Ադրբեջանի գիտությունների ազգային ակադեմիայի նորանշանակ նախագահը, ով օժտված էր նույնիսկ կառավարության անդամների նշանակման, Միլլի մեջլիսի պատգամավորական կազմի և խորհրդարանական կառույցների ղեկավար մարմինների ձևավորման բացառիկ իրավունքով, իհարկե, յուրաքանչյուր դեպքում պահանջելով համապատասխան փոխադարձ վերաբերմունք՝ առաջարկվող պաշտոնին ու կարգավիճակին համարժեք կաշառքի տեսքով: Ներկայումս կադրերի առաջադրման և ըստ պաշտոնների նրանց տեղաբաշխման գործընթացը համակարգում է հանրապետության 1-ին տիկինն ու 1-ին փոխնախագահը: Ընդ որում, Մեհրիբան Ալիևան ինքն է կանխապես որոշել այս տարվա փետրվարի 9-ի արտահերթ ընտրություններում ձևավորված Միլլի մեջլիսի պատգամավորական կազմն ու ղեկավար մարմինները, մինչև իսկ խորհրդարանի նախագահի պաշտոնում պատգամավոր Սահիբա Գաֆարովայի ընտրությունը: Նույն կերպ նրա անձնական երաշխավորությամբ է նշանակվել Ադրբեջանի մարդու իրավունքների նորանշանակ պաշտպան Սաբինա Ալիևան:

Կարելի է, իհարկե, թվարկումները շարունակել: Բայց երևի թե էականն այդ չէ, այլ այն, որ Ադրբեջանում իշխանության եթե ոչ բոլոր, ապա գրեթե բոլոր լծակները հայտնվել են դարձյալ մեկ անհատի, այս անգամ ոչ թե խամաճիկի դերում հայտնված պետության գործող նախագահի, այլ 1-ին փոխնախագահի ձեռքում, ինչը որոշ վերլուծաբանների հիմք է տալիս դատելու, որ հեռու չէ այն օրը, երբ Ադրբեջանում կհայտարարվի գործող նախագահի հրաժարականը՝ պայմանավորված առողջական խնդիրներով, և, համաձայն սահմանադրական նորմի պահանջի, նրա լիազորություններն օրինականորեն կստանձնի երկրի 1-ին փոխնախագահը: Անկախ նրանից, թե որքան տեղին կամ անտեղի են նման եզրահանգումները, մանավանդ Ադրբեջանում շրջանառվում է նաև այն տեսակետը, համաձայն որի՝ տակավին բավական հզոր նախիջևանյան կլանը՝ Ռամիզ Մեհթիևի գլխավորությամբ, հազիվ թե հնարավորություն տա Մեհրիբան Ալիևային երկար ժամանակ անցնցում կառավարելու երկիրը: ■

Բանկ Օտոմանի գրավումը և «զուգակցված հարվածների» մարտավարությունը Հայկական հարցի և ազատագրական պայքարի համատեքստում

Անի Մելքոնյան
Ավարտել է ԵՊՀ պատմության ֆակուլտետը, ՀՅԴ Նիկոլ Աղբալյան ուսանողական միության անդամ

1896 թ. օգոստոսի 14-ին 26 զինված հայեր 23-ամյա Բաբկեն Սյունու (Պետրոս Փարյան) գլխավորությամբ գրավում են Կ. Պոլսում գտնվող Օտոման բանկը: Գործողության նպատակը Հայկական հարցի վրա մեծ պետությունների ուշադրությունը հրավիրելն էր: Մինչ բուն գործողությանն անցնելը՝ մի փոքր Հայկական հարցի մասին:

Հայկական հարցը, ինչպես գիտենք, միջազգային դիվանագիտական օրակարգ մտավ 1878 թ. մարտին. Սան Ստեֆանոյի և նույն թվականի հունիս-հուլիս ամիսներին Բեռլինի վեհաժողովների արդյունքում. հայերին էին վերաբերում Սան Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ և Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածները: Այս փաստաթղթերում, իհարկե, Հայկական հարցը ձևակերպվում է միայն Օսմանյան կայսրության հայկական նահանգներում (Արևմտյան Հայաստանում) բարենորոգումներ իրականացնելու համատեքստում, սակայն Հայկական հարցը զուտ բարենորոգումների խնդիր չէր, գոնե հայության մի ստվար հատվածի համար այն «….հայ ժողովրդի ազատագրության, իր պատմական Հայրենիքում անկախ ազգային պետականության վերականգնման խնդիրն է»[1]: Գերխնդիր ունենալով իր պատմական հայրենիքում անկախ հայկական պետականության վերակերտումը՝ «հայ ժողովուրդը պատմության անբարենպաստ փուլերում հարկադրված է եղել վարել բարեփոխումների իրականացման, ջարդերի ու ավերագործությունների դեմն առնելու մարտավարություն»[2]:

Միջազգային դիվանագիտական օրակարգ մտած Հայկական հարցը մեծ պետությունների ձեռքին յուրահատուկ գործիք դարձավ Թուրքիային ճնշելու և իրենց ձեռնտու զիջումներ կորզելու համար, իսկ Թուրքիան, ի պատասխան դրա, Հայկական հարցը «լուծում» էր ջարդերով և ազգային ու կրոնական հալածանքները խորացնելով: Անխնա ջարդի ու հալածանքի ենթարկվող արևմտահայության իրավունքների պաշտպանության համար էր, որ ասպարեզ իջան հայ քաղաքական կուսակցությունները, որոնք ընտրեցին նոր մարտավարություն՝ արևմտահայության ֆիզիկական պաշտպանության և Հայկական հարցի լուծմանը հասնելու համար դիմել զինյալ պայքարի օգնությանը, քանի որ քաղաքական պայքարն արդյունք չէր տալիս:

Եվ ահա 19-րդ դարի 90-ական թվականներին սկսվում է Հայկական հարցի լուծման՝ ազգային-ազատագրական պայքարի զինյալ փուլը: 1894 թ. Սասունի ապստամբության պարտությունն ու դրա

հետևանքով սկսված խաղաղ բնակչության ջարդը քաղաքակիրթ հասարակության ուշադրությունը սևեռեցին Արևմտյան Հայաստանում հայ (քրիստոնյա) բնակչության դեմ ծավալված հալածանքների վրա, և եվրոպական հասարակական կարծիքի ճնշման տակ 1895 թ. մայիսի 11-ին Կ. Պոլսում Մեծ Բրիտանիայի, Ռուսաստանի և Ֆրանսիայի դեսպանները սուլթանին ներկայացրին Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածի համաձայն իրենց կազմած բարենորոգումների ծրագիրը: Նախագիծը հիմնականում նախատեսում էր հայաբնակ վեց նահանգներում կենտրոնական իշխանության ամրապնդում, հասարակական կյանքի զարգացում, արտադրության և տնտեսական դրության կարգավորում, ինչպես նաև քրիստոնյաների պաշտպանություն քուրդ ցեղապետների կամայականություններից: Ըստ նախագծի՝ նահանգների վալիներ (նահանգապետներ) պետք է նշանակվեին Օսմանյան կայսրության ընդունակ և բարեխիղճ պաշտոնյաներից՝ առանց կրոնի խտրության, 5 տարի ժամկետով: Բոլոր պաշտոնները, այդ թվում՝ ոստիկանական, պետք է բաշխվեին մահմեդականների և քրիստոնյաների միջև: Եթե պաշտոնյան մահմեդական էր, նրա օգնականը պետք է քրիստոնյա լիներ և հակառակը: Բոլոր խորհուրդների (նախագահական ընդհանուր խորհուրդ, սանջակի, կոզայի և նահիեի խորհուրդներ), ինչպես և տարբեր հանձնախմբերի

(այդ թվում՝ հատուկ դատաստանական) անդամների կեսը պետք է քրիստոնյա լիներ: Խաղաղ ժամանակ «համիդիե» գնդերը զենք ու նշանագգեստ չպետք է կրեին: Բարենորոգումների ենթակա էին նաև (վեց նահանգներից բացի) կայսրության մյուս հայաշատ վայրերը (օրինակ՝ Հաճնը՝ Ադանայի վիլայեթում, Զեյթունը՝ Հալեպի): Ծրագրի գործադրումը վերահսկելու էր սուլթանի կողմից ընտրված և տերությունների հավանությանն արժանացած բարձր կոմիսարը: Սակայն անգամ այս խիստ չափավոր ծրագիրն առաջ բերեց օսմանյան կառավարության դժգոհությունը: Շուտով «Սուլթանի անունից դեսպաններին ներկայացվեցին «դիտողություններ» և մի հակածրագիր. սկսվեց թուրքերի համար սովորական դարձած ձգձգումների քաղաքականությունը: Թուրքական կառավարությունը հույսը դնում էր մեծ տերությունների տարաձայնությունների վրա, որոնք, հետապնդելով իրենց շահերը Օսմանյան կայսրությունում, վճռական քայլերի չէին դիմի ինչ-որ մասնակի «բարենորոգումներ» անցկացնելու համար: Հայ քաղաքական շրջանները փորձեցին ծրագրի գործողությունը արագացնել խաղաղ միջոցներով (1895-ի սեպտեմբերի 5-ի Բաբը Ալիի ցույցը և այլն), որոնց օսմանական կառավարությունը պատասխանեց հայերի ջարդերով: Այդուհանդերձ Աբդուլ Համիդ 2-րդը հոկտեմբերի 8-ին վավերացրեց «Մայիսյան բարեփոխումներ»-ի փոքր-ինչ փոփոխված ծրագիրը, «բարձր կոմիսար» (Շաքիր փաշային) ուղարկեց Հայաստան՝ բարենորոգումները «կենսագործելու» համար: Սակայն հայկական կոտորածները վերսկսվեցին նոր թափով, որոնց զոհ գնաց 300 հազար հայ»[3]:

1895-1896 թթ. համիդյան ջարդերը հայ հեղափոխականներին դրդեցին դիմելու առավել արմատական քայլերի: Նրանք, սակայն, համոզվել էին, որ Արևմտյան Հայաստանում տեղի ունեցող իրադարձությունները բավարար չափով արձագանք չեն գտնում միջազգային հանրության շրջանակներում, ուստի հայ հեղափոխականների ուշադրության կենտրոնում է հայտնվում կայսրության մայրաքաղաք Կ. Պոլիսը:

Այդ օրերին ազգային-ազատագրական պայքարը ղեկավարող Դաշնակցությունը որդեգրեց «զուգակցված հարվածների» մարտավարությունը, որին բնորոշ էր «Երկրում, Կ. Պոլսում ու կայսրության ծովեզրյա խոշոր քաղաքներում միաժամանակյա կամ ժամանակի առումով մեկը մյուսին անմիջապես հաջորդող երկու և ավելի զուգակցված ու մասշտաբային հարվածներ հասցնելու գործելաոճը»[4]:

Եվ ահա ՀՅԴ Կ. Պոլսի կենտրոնական կոմիտեն մշակում է չափազանց համարձակ և նախադեպը չունեցող մի ծրագիր՝ գրավել օսմանյան դրամատունը՝ բանկ Օտոմանը: Դրան զուգահեռ «Նախատեսվում էր հայ մարտիկների

Բանկ Օտոմանի գործողության մասնակիցները

ռմբային հարձակում Սամաթիայի զորանոցի վրա. Ղալաթիայի կամրջի վրա վարչապետի կառքի ոչնչացում և ռմբային հարվածներ դեպի դրամատուն շարժվող զորքերին»[5]:

Հայ հեղափոխականներն այս գործողություններով հետապնդում էին երկու նպատակ՝ նախ՝ վրեժ լուծել հայ ժողովրդի 1895-1896 թթ. ջարդերի համար, երկրորդ՝ դնել քաղաքական պահանջներ՝ ապահովելով Հայկական հարցին մեծ պետությունների միջամտությունը՝ հասնելու մայիսյան բարենորոգումների իրականացմանը: Գործողությունը լի էր վտանգներով, բայց «Գաղափարը գինովցուցիչ էր իր ահարկու մեծութեան մէջ և շուտ նուաճեց կազմակերպութեան վերին խաւերն ալ»[6]:

1896 թ. օգոստոսի 14-ին 26 (այլ տվյալներով՝ 31) դաշնակցական մարտիկները Բաբկեն Սյունու գլխավորությամբ գրավեցին դրամատունը և պատանդ վերցրին ավելի քան 150 մարդու: Դրամատան գրավման ընթացքում Բաբկեն Սյունին զոհվեց, և գործողությունների հետագա ղեկավարումն ստանձնեցին Արմեն Գարոն և Հայկ Թիրաքյանը: Կ. Պոլսում հավատարմագրված դեսպաններին ուղղված շրջաբերականում հեղափոխականները շեշտում էին. «Դիվանագիտական խաղերու ժամանակն ալ անցած է: Մեր հարիւր-հազար նահատակներուն թափած արիւնը մեզի իրաւունք կուտայ ազատութիւն պահանջելու»[7]: Միաժամանակ հեղափոխականները դնում են իրենց պահանջները՝ «1. Ապահովել միջազգային միջամտութեամբ ամբողջ երկրի խաղաղութիւնը,

2. Ընդունել բոլոր պահանջները, որ դրել է Հ Յ Դաշնակցութեան Պոլսոյ կենտրոնական կոմիտէն, 3. Մեր դէմ ուժ չդնել, 4. Կեանքի կատարեալ ապահովութիւն թէ բանկին մէջ գտնվողներուն, թէ քաղաքի այլ մասում խառնակութեանց մէջ մասնակցողներին»[8]: Բանկի գրավման լուրն առնելուն պես սուլթան Աբդուլ Համիդ II-ը հրամայում է գնդակոծել հեղափոխականներին,

սակայն նրան այդ քայլից ետ է պահում Կ. Պոլսում ռուսական դեսպանության թարգման Ն. Մաքսիմովը, որը հանձն է առնում դրամատունը գրված հեղափոխականների հետ բանակցելու գործը: Կ. Պոլսում հավատարմագրված եվրոպական դեսպանների անունից Մաքսիմովը սկսում է բանակցությունները հեղափոխականների հետ, որոնք, սակայն, տրամադրված էին պայթեցնելու դրամատունը: Մաքսիմովը ջանում էր ամեն կերպ հակառակը համոզել. «Դրամատունը չթողնելու և այն պայթեցնելու դեպքում, նա հայ հեղափոխականներին սպառնում է նույն գիշերն իսկ Կ. Պոլսում սկսվելիք հայկական ջարդերով և Հայկական հարցի հանդեպ Եվրոպայի մինչ այդ ունեցած բարյացակամ վերաբերմունքի փոփոխությամբ»[9]: Հայկական ջարդերը, ինչպես գիտենք, հայ հեղափոխականների թույլ կողմերից էին: Հավատ ընծայելով բարենորոգումների հարցով զբաղվելու և Կ. Պոլսում ջարդերը կանխելու Մաքսիմովի խոստումներին՝ հայ հեղափոխականները 13 ժամ դրամատունը գրավված պահելուց հետո թողնում են այն. «Հաջորդ օրը նրանց այցելած ռուս, անգլիացի և հատկապես ֆրանսիացի դիվանագետներն արդեն միանգամայն այլ լեզվով էին խոսում՝ մոռանալով նախորդ օրերին իրենց անունից Մաքսիմովի տված խոստումների մասին»[10]: Նույն օրը դրամատունը թողած հեղափոխականները ֆրանսիական «Ժիրոնդ» շոգենավով հեռանում են Կ. Պոլսից: 18-ժամյա հերոսական պայքարից հետո դադարում են նաև Սամաթիայի ռմբային կռիվները և բախումները Կ. Պոլսի առանձին վայրերում: Ի վերջո ինչո՞ւ դրամատունը գրված հեղափոխականները զիջեցին իրենց դիրքերը: Իրարամերժ տեսակետները բազմաթիվ են, սակայն առավել ճշմարտամոտ է թվում Արմեն Գարոյի խոստովանությունը, որ «….դրամատունը գրավողները չեն ունեցել բավարար քանակությամբ ուժանակ իրենց սպառնալիքն իրագործելու համար»[11]:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

Ասել, որ օսմանյան դրամատան գրավումը ազդեցություն չունեցավ Հայկական հարցի վերաբերյալ մեծ տերությունների հետագա վերաբերմունքի վրա, սխալ կլինի: Շատերը կատարվածը միայն սպասվելիք իրադարձությունների նախակարապետն էին համարում, իսկ մեծ տերությունները անհանգստությամբ սպասում էին, որ իրականություն կդառնան Պոլսում եվրոպական պետությունների դեսպանատները պայթեցնելու մասին տարածվող լուրերը: Գործողության արդյունքն էր, որ մեծ տերությունները կոշտացրին իրենց դիրքորոշումը Աբդուլ Համիդի քաղաքականության նկատմամբ: Եվ չնայած դրամատունը գրված հեղափոխականների հեռանալուց հետո Մաքսիմովը չպահեց իր խոստումը և չկանխեց մինչև դրամատան գրավումը օսմանյան կառավարության կողմից ծրագրված հայկական ջարդերը, բայց դրամատան գրավումից հետո դրանք, ըստ էության, վերջինն էին մինչև 1909 թ. ապրիլի 2-ի Ադանայի ջարդերը, չնայած որ նոր ջարդերի համար քիչ չէին առիթները: Օսմանյան դրամատան գրավմանը հաջորդած ամիսներին մեծ տերությունների ձեռնարկած քայլերը կաշկանդեցին Աբդուլ Համիդին իր հետագա գործողություններում:

Շուտով Կրետեում պայթում է հույն-թուրքական պատերազմը, որը երկրորդ պլան է մղում Հայկական հարցը: Այնուամենայնիվ պետք է արձանագրել, որ բանկ Օտոմանի գրավումը մեծ հարված էր նաև Օսմանյան կայսրության միջազգային «հեղինակությանը», քանզի դժվար է պատկերացնել, որ եվրոպական պետությունները ներդրումներ կանեին մի երկրում, որտեղ դրամատունն ապահով չէր, ավելին՝ գրավման մշտական վտանգի տակ էր: «Հերոսական այս գործողությունն ի լուր աշխարհի ազդարարեց հայ յեղափոխական շարժման հասունացման և կայացման մասին՝ դառնալով հետագայում կազմակերպված ոչ պակաս յանդուգն ու նվիրական գործողությունների սկզբնաքայլը, որոնք կոչված էին հայ մարդուն հանելու դարաւոր թմբիրից՝ նրան վերադարձնելով ինքնավստահությունը, ազգային արժանապատվությունն ու յանուն ազատության խիզախելու ունակությունը»[12]: Դեռևս երիտասարդ և անփորձ հայ քաղաքական միտքը ծանր, բայց շատ անհրաժեշտ դասեր ստացավ բանկ Օտոմանի գրավման հանգուցալուծումից: Այնուամենայնիվ չենք կարող չարձանագրել, որ «իր գլխավոր նպատակին՝ միջազգային միջամտության ապահովմանը չհասնելով հանդերձ, օսմանյան դրամատան գրավման ձեռնարկը լուրջ կովան դարձավ հայոց ազատամարտի համար: Օսմանյան իշխանությունները որևէ երաշխիք չունեին, որ նման, գուցե և ավելի մասշտաբային ձեռնարկներ հետագայում էլ չեն ցնցի կայսրության



Բանկ Օտոմանի շենքը

Հայկ Թիրաքյան(Հրաչ), Արմեն Գարո, Բարկեն Սյունի

մայրաքաղաքը, ունենալով անկանխատեսելի, ինչու չէ, նաև աղետալի հետևանքներ»[13]:

Ինչպես ասացինք, բանկ Օտոմանի գրավման գլխավոր նպատակը մեծ տերությունների ուշադրությունը 1895 թ. Մայիսյան բարենորոգումների ծրագրի իրականացման վրա հրավիրելն էր, որը թեև այդ օրերին չիրականացավ, բայց այդ ծրագրին մեծ տերություններն անդրադարձան բալկանյան պատերազմների ընթացքում: 1895 թ. մայիսյան ծրագրի հիման վրա Օ. Մանդելշտամի կողմից կազմված բարենորոգումների նախագիծը քննարկվեց Կ. Պոլսի դեսպանաժողովում 1913 թ. հուլիսի 3-ից մինչև 24-ը: Ռուսական կողմի այս ծրագրին հավանություն տվեցին թե՛ Անգլիան և թե՛ Ֆրանսիան, մինչդեռ «Եռյակ միության պետությունները, հատկապես Գերմանիան, վճռականորեն ընդդիմացան ռուսական նախագծի հիմնական դրույթներին (միասնական Հայկական նահանգի ստեղծում, ընդհանուր նահանգապետի նշանակում տերությունների համաձայնությամբ, նահանգական ժողովում և պաշտոնների բաշխման ժամանակ հավասարության սկզբունքի կիրառում և այլն)՝ առաջարկելով քննարկման հիմք ընդունել բարենորոգումների թուրքական ծրագիրը, որը պահպանում էր վիլայեթների կազմակերպման նախկին ձևը և ըստ ամենայնի խուսափում օտարերկրյա հսկողությունից: Այսպիսով՝ բարենորոգումների հարցի շուրջ ստեղծվեց դիվանագիտական քաշքշուկ, որի ընթացքում Ռուսաստանը գերմանական խմբավորման ճնշման տակ և իր «դաշնակիցների» կրավորականության պայմաններում սկսեց տեղի տալ: Ի վերջո Ռուսաստանին հաջողվեց Թուրքիային պարտադրել Հայաստանի բարենորոգումների վերաբերյալ մի համաձայնագիր, որով Արմ. Հայաստանը բաժանվում էր երկու հատվածների (Էրզրում, Տրապիզոն, Սեբաստիա և Վան, Բիթլիս, Խարբերդ, Դիարբեքիր), որոնց կառավարումը հանձնվում էր երկու օտարերկրյա ընդհանուր տեսուչների՝ նշանակված մեծ տերությունների հավանությամբ: Համաձայնագիրը անբավարար էր և հայերին չէր տալիս ինքնավարական այն լայն իրավունքները, որոնք նախատեսված էին ռուսական ծրագրում, սակայն նպաստավոր պայմաններ էր ապահովում թուրքական լծից Արևմտյան Հայաստանի հետագա ազատագրման համար: Պետությունների հանձնարարած երկու ընդհանուր տեսուչները՝ Վեստենենկը (Հոլանդիա) և Հոֆը (Նորվեգիա), չհասցրին անցնել իրենց պարտականությունների կատարմանը»[14]: Թեկուզ խմբագրված տարբերակով, բայց բարենորոգումների իրականացման հույս էր նշմարվում, սակայն շուտով պայթեց Առաջին համաշխարհային պատերազմը, որն էլ օրակարգից հանեց հայկական բարենորոգումների հարցը, իսկ Հայկական հարցը Հայոց ցեղասպանությունից հետո վերափոխվեց Հայ դատի: ■

Օգտագործված աղբյուրներ և գրականության ցանկ

1- Խուրշուդյան Լ., Հայկական հարցը. բովանդակությունը, ծագումը, պատմության հիմնական փուլերը, Եր., 1995, էջ 7:
2- Նույն տեղում:
3- http://www.armin.am/armeniansgenocide/am/Encyclopedia_Of_armenian_genocide_Mayisyan_barenorogumner_1895

4- Գրիգորյան Հ., Հայ ազատագրական պայքարի մարտավարությունը 1895-1898 թթ., Եր., 2002, էջ 13:
5- Նույն տեղում, էջ 34:
6- Վարանդեան Մ., Հ.Յ. Դաշնակցութեան պատմութիւն, Եր., 1992, էջ 133:
7- Գրիգորյան Հ., նշվ. աշխ., էջ 38:
8- «Դրօշակ», 15 սեպտեմբերի 1986 թ., թիվ 21:
9- Գրիգորյան Հ., նշվ. աշխ., էջ 40:
10- Նույն տեղում:
11- Նույն տեղում, էջ 42:
12- https://alikonline.ir/news/ideological/item/56353
13- Գրիգորյան Հ., նշվ. Աշխ., էջ 50:
14- http://www.armin.am/armeniansgenocide/am/Encyclopedia_Of_armenian_genocide_Mayisyan_barenorogumner_1895

1- Գրականություն

1. Խուրշուդյան Լ., Հայկական հարցը. բովանդակությունը, ծագումը, պատմության հիմնական փուլերը, Եր., 1995:
2. Գրիգորյան Հ., Հայ ազատագրական պայքարի մարտավարությունը 1895-1898 թթ., Եր., 2002:
3. Վարանդեան Մ., Հ.Յ. Դաշնակցութեան պատմութիւն, Եր., 1992:

2- Մամուլ

1. «Դրօշակ», 15 սեպտեմբերի 1986 թ., թիվ 21:

3- Համացանցային նյութեր

1. http://www.armin.am/.
2. https://alikonline.ir

Սեւրէն մինչեւ Տաւուշ

«Անկատար տենչեր ունենք դեռ շատ»

Վրէժ Արմէն

Սևրը վկայ:

Անկատար տենչեր... Ահա հարիւր տարի է մեր տենչերը այդպէս ալ կը մնան անկատար: Սևրի դաշնագրի հարիւրամեակը վկայ:

1920 օգոստոս 10ին Ֆրանսայի, իր յախճապակիներով աշխարհահռչակ, այդ քաղաքին մէջ ստորագրուած դաշնագիրը ի՞նք կը մնայ անկատար, կը մնայ որպէս չյարգուած խոստում, խոստումնադրուժ աշխարհին կողմէ, որպէս անվճար վճարագիր, մեզի պարտական՝ նոյն այդ աշխարհին կողմէ: Բայց նաև կը մնայ անժամանցելի, անժամանցելի՝ շնորհիւ մեր գոյութեան, մեր՝ հայութեան վերապրումին ու գոյատևումին:

Ահա այդ անժամանցելիութեան հարիւրամեակն է, որ կը նշենք այսօր: Անժամանցելի է, որովհետև ողջ են պահանջատէրերը, ողջ են պահանջատէրերու զաւակները, ողջ են թոռներն ու ծոռները: Եւ եթէ կայ պատգամ մը մեր այս նշումին մէջ՝ այդ ողջ մնա՛լն է, պահանջատէր մնա՛լն է:

Իսկ ի՞նչ կը նշանակէ ողջ ըլլալ: Կը նշանակէ իբր հայ ողջ ըլլալ: Հայ ըլլալ, հայ մնալ բոլոր աղէտներուն դէմ յանդիման: Այսինքն՝ հայ ապրելու մեր մարդկային իրաւունքին տէր ըլլալ: Սեփական հողերուն վրայ ապրելու:

Իբրև ուրոյն ազգ ապրելու: Սեփական մշակոյթը կերտելու: Սևրը ուրիշ իմաստ չունի մեզի համար: Այդ իրաւունքն է, որ անժամանցելի է, այնքան ատեն որ անոր տէր կանգնող կայ:

Սևրը մեր տենչերը արտայայտող փաստաթուղթ մըն է, սակայն ո՞ր տենչերը: Ոչ-կատարեալ փաստաթուղթ մըն է ան, մեր բոլոր տենչերը չէ՞, որ կ՚ընդգրկէ: Ի վերջոյ եթէ աչք մը նետենք պատմութեան վրայ, եթէ նայինք, թէ հողային ի՞նչ տարածքներու վրայ կ՚ապրէր մեր ժողովուրդը Մեծ եղեռնէն առաջ՝ երկա՛ր դարեր, կ՚անդրադառնանք, թէ պատմական Հայաստանի ու հայաբնակ տարածքներու կէսէն ալ պակաս է ներառուած Սևրի դաշնագրով ու նախագահ Ուիլսընի նախագիծով որոշուած Հայաստանի սահմաններուն մէջ, ներառեալ այդ թուականին արդէն իսկ գոյառած Հայաստանի Հանրապետութիւնը, որուն նոյնիսկ միայն մէկ մասն է ներկայ ՀՀ ն:

Կ՚արժէ այստեղ վկայակոչել մեծ հայորդիի մը խօսքը: 1989ի Օգոստոսին բախտը ունեցեր էի հանդիպելու այդ օրերուն Իթագա (Նիւ Եորք նահանգ) հրաւիրուած հայրենի անուանի աստղագէտ ու գրող Գրիգոր Գուրզադեանի հետ: Ան նախապէս այցելած էր Լոս Անճելըս և ելոյթ մը ունեցած հայ համայնքին առջև: Իր հետ ունեցած իմ հարցազրոյցին ընթացքին (տես «Հորիզոն»ի Գրական յաւելուածը, 1989-11-20) ան ըսած է հետևեալը.

– Իմ ելոյթը Լոս Անճելըսում, կարող էր դիտուել, սառը տրամաբանութեան տեսակէտից, որպէս զառանցանք եթէ չասեմ, յամենայն դէպս ոչ-բաւարար խելամիտ, բայց երբ տեսայ՝ դա ի՞նչ արձագանգ ստեղծեց սրահում, հասարակութեան մէջ, ես մտածեցի, որ դա կարող է մեծացնել և ասել, որ հայ ժողովուրդի ուզածը սա՛ է. եթէ

այս չափանիշով մօտենանք, որ ժողովուրդի ուզածը և մտածածը սա՛ է, ապա եկէք ապաւինենք (ժողովուրդի իմաստութեանը), որ ժողովուրդը աւելի ճիշտ է զգում և ճիշտ է հասկանում, և յարմարուենք ժողովուրդի զգացածին և ըստ այնմ փնտռենք՝ ո՛րն է աւելի ճիշտ ճանապարհը մեր նպատակին հասնելու համար: Չգիտեմ ինչպէս, խորը համոզուած եմ, որ այս հարցը (այսինքն՝ Հայ դատը – ՎԱ) ի վերջոյ պիտի լուծուի:

Քարտէսը (այսինքն՝ Ուիլսընեան սահմաններով Հայաստանի քարտէսը – ՎԱ) ամբողջ ժամանակ ցուցադրուում էր, լուսարձակուած էր պաստառի վրայ: Վերջին իմ խօսքերը մօտաւորապէս այսպէս էին՝ տայ Աստուած, որ մենք ապրենք այն օրը, որ քարտէսը իրա բնական չափով իջնէ հողի՛ վրայ: Եւ եթէ, ասում եմ, այս քարտէսում կայ միայն մի տխուր բան, դա այն է, որ նրա սահմանից դուրս է ընկնում իմ տառապեալ ծնողների հայրենիքը՝ Սեբաստիան: Բայց ես ուզում եմ ինքզինքս մխիթարել նրանով, որ այս քարտէսը դրուի հողի վրայ իր բնական չափով, ես ոտքով հասնեմ այս քարտէսի արևմտեան սահմանին, բարձրանամ մի բարձր լեռ, այնտեղից գոնէ տեսնեմ իմ հօր և իմ մօր սարերը. դա պիտի լինի իմ ամենաերջանիկ պահը...»

Այո՛, ամենաերջանիկ պահը: Այո՛, ժողովուրդին ուզածը:

Բայց Սևրը մեզի համար միայն հողատարածք չէ, միայն քարտէս չէ՝ թէկուզ բնական չափերով: Շատ աւելին է, պէ՛տք է ըլլայ՝ կատարեալ ըլլալու համար:

Մեր տունդարձի իրաւունքն է, հատուցում է, տնտեսական ու արհեստագիտական օժանդակութիւն է, երկիր կերտելու, վերակերտելու հնարաւորութիւն տալ է: Եւ աւելի՛ն:

Տարածաշրջանի խաղաղութիւն է, հաշտութիւն է, դրացիներու գոյակցութիւն է, բնական համագործակցութիւն է, սահմաններու բացում է, արգելքներու վերացո՛ւմ է...

Անկատար տենչեր... այո դեռ կան շատ:

Բայց կայ նաև իրականութիւն մը:

Տենչերուն՝ երազին ու իրականութեան միջև կայ նաև զգաստ ու արթուն մնալու պարտադրանքը, իրաքանչիւրս՝ հայ բանակին զինուոր զգալու աներեր կամքը և սահմանները պաշտպանելու պարտաւորութիւնը՝ քաջ գիտակցելով, թէ «Բայց երանի՛ որ իւր ազգի ազատութեան կը զոհուի»...

Տաւո՛ւշը վկայ: ■

Սևրի պայմանագրի 88-93-րդ հոդվածները, որոնք վերաբերում են Հայաստանին

10 օգոստոս 1920 թ

Հոդված 88. *Թուրքիան հայտարարում է, որ ճանաչում է Հայաստանը, ինչպես այդ բանն արդեն արել են դաշնակից տերությունները, որպես ազատ և անկախ պետություն:*

Հոդված 89. *Թուրքիան և Հայաստանը, ինչպես և բարձր պայմանավորվող կողմերը համաձայնում են Էրզրումի, Տրապիզոնի, Վանի ու Բիթլիսի վիլայեթներում Թուրքիայի և Հայաստանի միջև սահմանատումը թողնել ԱՄՆ-ի որոշմանը և ընդունել ինչպես նրա որոշումը, այնպես էլ այն բոլոր միջոցառումները, որոնք նա կարող է առաջարկել Հայաստանին դեպի ծով ելք տալու և հիշյալ սահմանագծին հարող օսմանյան բոլոր տարածքների ապառազմականացման վերաբերյալ:*

Հոդված 90. *Այն դեպքում, եթե 89-րդ հոդվածի համաձայն սահմանագիծը որոշելիս հիշյալ վիլայեթների ամբողջ տարածքը կամ նրա մի մասը հանձնվի Հայաստանին, Թուրքիան այսօր արդեն հայտարարում է, որ, որոշման օրից սկսած, հրաժարվում է հանձնված տարածքի նկատմամբ բոլոր իրավունքներից և իրավահիմունքներից: Սույն պայմանագրի որոշումները, որոնք կիրառվելու են Թուրքիայից անջատվող տարածքների նկատմամբ, այս պահից սկսած, կգործադրվեն նաև այդ տարածքի նկատմամբ: Հայաստանի սուվերենությանը հանձնվող տարածքի կապակցությամբ նրա վրա դրվող Թուրքիայի ֆինանսական պարտավորությունների բաժինը և դրանց բնույթն ու այն իրավունքները, որոնցով նա կարող է փաստարկել, կսահմանվեն սույն պայմանագրի 8-րդ մասի (ֆինանսական դրույթներ) 241-244-րդ հոդվածների համաձայն: Հաջորդ կոնվենցիաները կկարգավորեն, եթե դա անհրաժեշտ լինի, այն բոլոր հարցերը, որոնք չեն կարգավորվել սույն պայմանագրով, և որոնք կարող են մնունդ առնել հիշյալ տարածքի փոխանցման կապակցությամբ:*

Հոդված 91. *Եթե 89-րդ հոդվածում նշված տարածքի մի մասը հանձնվի Հայաստանին, ապա սահմանագծման հանձնաժողովը, որի կազմը կորոշվի հետագայում, կստեղծվի երեք ամսվա ընթացքում այն բանից հետո, երբ արդեն ընդունված կլինի Հայաստանի և Թուրքիայի միջև տեղում սահմանագիծ անցկացնելու վերաբերյալ հիշյալ հոդվածում նախատեսվող որոշումը:*

Հոդված 92. *Ադրբեջանի և Վրաստանի հետ Հայաստանի սահմանները ըստ պատկանելության կորոշվեն շահագրգիռ պետությունների ընդհանուր համաձայնությամբ: Երբ 89-րդ հոդվածում նախատեսված որոշումն արդեն ընդունված կլինի, և եթե դրանից հետո այս կամ այն շահագրգիռ պետությունները չեն կարողանա ընդհանուր համաձայնությամբ որոշել իրենց սահմանագիծը, վերջինս կորոշեն գլխավոր դաշնակից տերությունները, որոնք դրա հետ միասին պետք է հոգ տանեն սահմանազատումը տեղում գծանշելու մասին:*

Հոդված 93. *Հայաստանն ընդունում է՝ համաձայնելով գլխավոր տերությունների հետ պայմանագրերում ներառել այն որոշումները, որոնք այդ տերությունները անհրաժեշտ կհամարեն Հայաստանում այն բնակիչների շահերը պաշտպանելու համար, որոնք ռասայի, լեզվի և կրոնի առումով տարբերվում են ազգաբնակչության մեծամասնությունից: Հայաստանը նմանապես համաձայնում է գլխավոր տերությունների հետ պայմանագրում ներառել այն որոշումները, որոնք այդ տերությունները անհրաժեշտ կհամարեն տրանզիտի ազատությունը և այլ ազգերի առևտրի համար արդարացի պայմանակարգը պաշտպանելու համար:*

Ծանոթագրություն. Սևրի պայմանագիրը՝ բաղկացած 352 հոդվածից, ստորագրել են մի կողմից Բրիտանական կայսրությունը, Ֆրանսիան, Իտալիան և Ճապոնիան, որոնք պայմանագրում նշված են որպես գլխավոր դաշնակից տերություններ, ինչպես նաև վերոհիշյալ գլխավոր տերությունների դաշնակիցներ Հայաստանը, Բելգիան, Հունաստանը, Հեջասը, Լեհաստանը, Պորտուգալիան, Ռումինիան, Սերբահորվաթասլովենական պետությունը և Չեխոսլովակիան: Ստորագրող երկրորդ կողմը պարտված Թուրքիան էր:

Օգոստոսի 12-ը
երիտասարդության միջազգային օրն է

Ես ճշմարտություններ գիտեմ, որոնցից մեկն ասում է՝ ուզո՞ւմ ես գուշակել, տեսնել մի ժողովրդի ապագան՝ նայի՛ր նրա երիտասարդությանը

Գարեգին Նժդեհ

ԴՐՕՇԱԿ